Universitäts- und Landesbibliothek Bonn

# Meknut'iin ahaior xorhrdoy Srboy Pataragin

I Vaġarščhapat, 1860

urn:nbn:de:hbz:5:1-58767

Visual Library

Goussen 3098

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ԱՂՕԹԻՑ ԽՈՐՀՐԴՈՅ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Արտահանեալ ’ի մեկնութեանց Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի և Ներսէսի Լամբրոնացւոյ կարճելով և պարզաբանելով

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՃԻՇԵՑՒՈՅ.

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Մատթէոսի Ամենայն Հայոց Կաթուղիկոսի:

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ:

1860: ռյթ:

3098

Ն 3098

Պա
մաս
որը
բագ
շովը
գրե
գրքո
խնդր
գրա
խորհ
Մեջ
Երկո
'ի կո
կալկ
ռաւե
և ագչ
Թէոդ
կամ
որբագ
կաթա
որոնց
քահան
հաւա
սիրով
ահաւ
տարա
պատճ
տացե

# Ազդ.

Պատճառ այժմեան տպագրութեան հոգեշահ մատենիս Մեկնութեան ահաւոր Խորհրդոյ սրբոյ Պատարագի, եղեն հոգեկան բաղձանք բազմաց 'ի քահանայից և 'ի բարեպաշտօն ժողովրդականաց մերոց, որք 'ի տեսանելն զտպագրեալն 'ի սուրբ Էջմիածին 'ի 1858 ամի ըզգրքոյկն Կերակուր ՙՔահանայից անուանեալ՝ խնդրէին կարի տենչանօք ունել և զայս յաղագս համառօտ և պարզ մեկնաբանութեան խորհրդաւոր բանից պատարագամատուցին։ Այլ ըստ որում 'ի գրատան սրբոյ Աթոռոյս երկու օրինակք միայն գտանէին, մին տպագրել 'ի Կոստանդնուպօլիս, 'ի 1799 ամի. և միւսն 'ի Կալկաթա 'ի 1830, և զի խնդրողացն թիւ առաւելոյր օր ըստ օրէ, վ՟յ հրամանաւ Ս՟ծրնոյր և ազգասէր Հայրապետին մերոյ Տեառն Մատթէոսի և ծայրագոյն Պատրիարգ Կաթուղիկոսի ամենայն Հայոց տպագրեցաւ արդ ըստ սրբագրեալ օրինակին տպագրեցելոյ 'ի Կալկաթա առ 'ի լնուլ զփափագ ցանկութեան սրտից ամենայն խնդրողացն զայս, առաւել ևս քահանայից, որք վարժեալք 'ի սոյն ճշմարիտ հաւատով, հաստատուն յուսով և անկեղծ սիրով, նախ ինքեանք ծանիցեն զմեծութիւն ահաւոր և սքանչելի խորհրդոյ սրբոյ Պատարագին և զքահանայութեան իւրեանց ըզպատիւ հրեշտակային, և ապա ինքեանց հաւատացեալ 'ի հոգւոյն սրբոյ բանաւոր հօտին

մատաչարարեացն զայն, ուսուցանելով և բղ-
գուշակացուցանելով թէ՝ այն խորհուրդ ահա-
ւոր և սոսկալի տարապանաց՝ որ բուն է մերոյ, կենաց
արդարոց և հուր մաքրիչ ամենայն աղտից մե-
ղաց գլխաւորեալ յանցաւորաց և արժանապէս
ճաշակողաց. իսկ անմաքրից անարժանից և ան-
զեղջ մեղաւորաց մերձեցելոց ՚ի նա՝ դատա-
պարտութիւն և մահ և հուր կիզիչ հոգւոց
և մարմնոց յանխախճան յաւիտեանս ։

Ի գրոց գրքոյ խորհրդոյ առաքելոյ Յովհաննիսի Վար-
դապետի Երզնկացւոյ՝ որ կոչի ողպանիք, առ քահա-
նայս Աստուածակործս:

Ամենայնի ժամանակ է, և ժամանակ է ա-
մենայն իրի: Արդ վասն զի հարցին մեր
աշակերտք և վարդապետքն եկեղե-
ցւոյ յորժամ բանս ինչ յաստուա-
ծայնոցն պատգամաց խօսիլ կամէին, և կամ
գրել, նորա և առակաւոր դարձուածովք
այլ և գերազարդ և պաճուճեալ բանիւք հա-
նարէին ցանկային առնել լսաւղացն. և զայ
ոչ թէ վայրապար ինչ և կամ թէ վասն փա-
ռաց ունայնոյ 'ի մարդկանէ այսպէս առնէին,
այլ զի առատանէին զմարդիկ ժամանակին այ-
նորիկ՝ ցանկացողք ուսմանց բանից և սիրողք
աշխատութեանց. և զի մի՛ դիւրագիւտ լինե-
լոյ վասն՝ դիւրաւ արհամարհել լիցին խնամաք

նոցա, վասն այսորիկ այնպիսի օրինակաւ գրէ-ին, և կամ թէ խօսէին ընդ նոսա. բայց ա-մենեքեան զատս որք 'ի մերում են ժամանակի, զի ոչ ունին զնոյն փոյթ յանձինս իւրեանց, այլ կամ իսկ ոչ ունեն փոյթ գրոց ընթեր-ցուածոց, և կամ թէ ընթեռնուն՝ և ոչ բը-նաւ քննեն զմիտս գրելոյն: Այլ՝ է զոր 'ի գիրս ընթեռնուն և ոչ իմանան, և է զոր 'ի բե-րան առնել՝ ասեն հանապազ և ոչ գիտեն և ոչ հասկանան. որպէս զսաղմոսն դաւթի և զնոյն իսկ պաղօթս խորհրդոյ պատարագին, զոր ոմանք կատարողք սոյն խորհրդոյ քահանայքն՝ 'ի բե-րան առեալ ասեն զաղօթս և ոչ իմանան. զոր-ծեն և ոչ գիտեն. այլ միայն արագ և շուտա-փոյթ լեզուօք շաղակրատեն զբանս աստուա-ծային աղօթիցս և ոչ գիտեն բնաւ թէ զի՞նչ իցէ զոր խօսին և կամ գործեն. բայց միայն աւարտմանն սպասեն, և ոչ իմանան գիտու-թեան աստուածային խորհրդեանն: Ով այր կատարիչ և գործունեայ աստուածային խոր-հրդոց. իցէ՞ եթէ ոք 'ի ձեռակերտ արհես-տաւորաց՝ եթէ հիւսն իցէ, կամ դարբին և կամ ոստայնանկ. յորժամ կամիցի անօթս ինչ առնել, և ոչ նախ խորհիցի և ոչ զմտաւ ածի-ցէ զձև և զօրինակ անօթոյն, այլ միայն առանց խորհրդոյ զձեռն միայն 'ի գործն շարժիցէ, հը-նար է լինել 'ի նմանէ անօթ ինչ պիտանա-ցու. և եթէ այս անհնար է, որքան առաւել պարտ է լուսաւոր խորհրդով և մանաւանդ թէ, հան-

դերձ մեծաւ երկիւղիւ և զգուշութբ ձեռն արկանել 'ի գործս յայս մեծ և սարսափելի խորհրդոյս. քանզի աստուածագործութիւն է և ոչ թէ դոյզն ինչ գործ. վասն որոյ մեծն Խոսրով հայրն գրիգորի Նարեկացւոյն նախ՝ և Սերոբէս վերապատուելոյն տարոնի յետոյ ընդ-արձակ և պայծառ քննութեամբ ետուն մեզ զմեկնութիւն պատարագիս ։ Բայց են ոմանք՝ զի զդժուարութիւն բանիցն պատճառեն , և կէսք զնորբութիւն , և անօգուտ համ. թէպէտ և չէ՛ ինչ ծածուկ բանք նոցին ։ Յաղագս այսորիկ յետնեալս 'ի բարեաց՝ ծնունդս վերջին ժամանակիս՝ Յովհաննէս արճիշեցի թախանձեալ յոմանց քահանայից սրբազնեցից , տալ նոցա վերստին համառօտ և պարզ բանիւք զտեսութի խորհրդոյս , և մեք հարկել 'ի նոցունց՝ ձեռն արկաք 'ի սոյն , յուսալով 'ի հոգին տր և յաղօթս սրբոց. ոչ թէ յաւելուած ինչ իմաստից խառնելով 'ի մէնջ 'ի բանս մեկնութեան նախասացեալ արանցն այլ միայն զբանս նոցունց կարճեալ պարզեցաք. որ թէ հաճելի իցէ ձեզ՝ տեառն շնորհ. և թէ ոչ՝ և նոյնպէս շնորհ տեառն. բայց միայն անպարսաւմնացից 'ի պատահելոցդ ։

Տեսութիւն. թէ առ ի՞նչ խորհուրդ յաճախեն առաւել պա_
տարագեն զՔրիստոս. և զի ոչ միայն կենդանեաց, այլ և
մեռելոց է փրկութիւն: Եւ դարձեալ՝ թէ որո՞ց մեռելոց
իցէ պատարագն փրկութիւն և որո՞ց ո՛չ: Այլ և զընծայս
պատարագին յորո՞ց, և կամ ո՛րպիսի օրինակաւ առնու քա_
հանայն. և առաւելեւ ընծայիցն ո՛րպիսի կամօք տայցեն 'ի քա_
հանայն. նաև՝ թէ զի՞նչ խորհուրդ է քառասներորդս
կատարել ննջեցելոցն:

Արդ՝ նախ զայս պարտ է գիտել, թէ զի_
ա՞րդ յամենայն աւուր հրաման ըն_
կալաք պատարագել զքրիստոս.
որպէս և պատուիրէր ինքն քա
աշակերտացն յաւանդելն զխորհուրդս հաղոր_
դութեանն իւրոյ 'ի վերնատանն ասելով. Զ՛այս
արարէք առ իմոյ յիշատակի:
Բազում են այսմ պատճառք. բայց պարզ
կարճ և համառօտ զայս իմացուք: Վասն զի
թէպէտ և զալստեամբ բանին և նորին չար_
չարանօք և մահուամբ փրկեալ ազատեցաք 'ի
ծառայութենէ մեղացն և արեամբ նորին կեն_
դանացաք 'ի մահուն ապականութենէ, բայց
դարձեալ որ եմք 'ի մարմնի աստ, զօրհանապազ
հարկեալք 'ի կարեաց մարմնոյս և խաբեալք 'ի
չարէն մեղանչեմք, եթէ կամաւ և եթէ ակա_
մայ. և ասացաւ, թէ ամենայն որ մեղանչէ՝ նոյն
և մեռցի: Արդ՝ մեռանի նա հանապազ մարդս_

սիրապէս իւր անմեղութեամբն վ̃ն մեղաց մե-
րոց. և կենդանիս առնէ զմեզ իւր անմահու-
թեամբն վասն մեղաց. և դնէ դեղ փրկութեան
տալով մեզ զմարմին և զարիւն իւր սուրբ.
որպէս ասէ յովհաննէս, Արիւն որդւոյն աս-
տուծոյ սրբէ զմեզ 'ի մեղաց: Եւ ո՛չ կենդա-
նեացն միայն որք հաւատով հաղորդին՝ լինի
սա փրկութիւն, այլ և մեռելոց որք այնու
հաւատով և յուսով 'ի քրիստոս ննջեցին.
Քանզի մահն քրիստոսի ո՛չ միայն կենդանեաց
եղև փրկութիւն՝ այլ և մեռելոց. որպէս ասէ
պետրոս, Եւ ոգւոցն որք էին 'ի դժոխս՝ եր-
թեալ աւետարանեաց: Եւ որպէս յայնժամ
չարչարանքն և մահն քրիստոսի կենդանեաց և մե-
ռելոց արար փրկութիւն, նոյնպէս և այժմ
յիշատակ մահու նորին և կատարումն առնէ
փրկութիւն և մեռելոց: Այլ ո՛չ պարզաբար
ամենեցուն. զի եթէ զայս այսպէս կարծիցես՝
թէ խառն 'ի խուռն ամենայն մեռելոցն փըր-
կութիւն գործէ պատարագելն զքրիստոս, ա-
պա և հեթանոսաց և անհաւատից լինի 'ի փըր-
կութիւն կատարումն պատարագին. ապա և
վասն նոցա ևս պա՛րտ է առնել պատարագ:
Իսկ եթէ այս անհնար է, ուրեմն քննել ար-
ժա՛ն է, թէ որո՞ց վասն պարտ է պատարագ մա-
տուցանել և որո՞ց ո՛չ: Արդ ա՛յսպէս իմա.
քանզի մարդիկ ոչ են միով օրինակաւ ամենե-
քեան 'ի յանցանս մեղացն. զի թէպէտ ամենե-
քեան մեղանչեն, այլ են ոմանք որք յորժամ

գործեն զմեղս, իբրև ակամայ խաբեցեալք 'ի
չարէն. և կամ թէ հարկեալք ինչ 'ի կա-
րեաց մարմնոյն անկանին 'ի շնութիւն, 'ի ըս-
պանութիւն, 'ի գողութիւն, յարբեցութիւն,
'ի քէշոցս և կամ յայլ ինչ չարիս. սակայն
ոչ ուրախանան 'ի չարիսն, այլ մանաւանդ լան
և ողբան և նախատեն զանձինս իւրեանց վա-
սըն մեղացն զորս արարին. և չարչարեալք զօր-
հանապազ 'ի խղճէ մտացն՝ կան 'ի տարակու-
սի գերի և տառապեալ անձինքն այնոքիկ. որ-
պէս ասէր Դաւիթ. Զօրհանապազ տրտում
գնայի, զի անձն իմ լի՛ եղև չարչարանօք. և
ոչ գոյ բժշկութի̃ մարմնոյ իմոյ. և Պօղոս ա-
սէ. Տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, որ
հակառակ կայ օրինաց մտաց իմոց, գերեալ
զիս օրինօքն մեղաց։ Արդ՝ այսպիսի արք որք
թէպէտ չարչարէին հանապազ 'ի խղճէ մտաց
իւրեանց, սակայն վասն չար սովորութե̃ն իւր-
եանց և յաղագս հեշտութեանց մարմնոյն ոչ
կարացին դառնալ 'ի մեղացն և ապաշխարել.
այլ որպէս է՛ սովորութիւն սատանայի՝ որ
հեշտացուցանէ զմարդիկ 'ի մեղսն և զապաշ-
խարութիւնն յետս տայ ընկենուլ, ա՛յսպէս և
նոցա. և յանկարծակի պատահի նոցա եղանել
'ի կենացս։ Իսկ ողորմելիքն այնոքիկ ո՛չ ինչ ու-
նելով ընդ իւրեանս մասն, և կամ պաշար ինչ
բարեաց կամ առաքինութեանց, բայց միայն
զմթերս մեղացն զորս ժողովեցին,

Յայնժամ դառնան և տպաւորին յողորմու-
թիւնն քրիստոսի և 'ի նորին մահն կամաւոր.
զղջանան 'ի մեղաց և խոստովանին զյանցան-
սն. և առնուն իւրեանց թոշակ զմարմին և
զարիւնն քրիստոսի. ահա այսպիսեացս է յոյս՝
գտանել ողորմութիւն 'ի տեառնէ. և ընդու-
նի զամենայն զոր ինչ առնեն վասն նոցա, ա-
ղօթք և պատարագ և ողորմութիւն: Իսկ այ-
նոքիկ որք անխտիր 'ի մեղս և 'ի չարիս թա-
ւալին և ո՛չ ցաւին և ո՛չ տրտմին և ոչ բնաւ
ածեն զմտաւ զօր դատաստանին և կամ զեր-
կիւղ տանջանացն, այլ ուրախութեամբ իբ-
րեւ զբարիս գործեն զչարիս և ոչ բնաւ զղջ-
ջանան և կամ խոստովանին, այլ մեռեալք
են 'ի մեղս և յանօրէնութիս. այսպիսեացս՝
ոչ թէ միայն չէ՛ օգուտ ողորմութի առնել,
կամ պատարագ մատուցանել, այլ և ինքն քա-
հանայն որ ընկալաւ յաղագս այսպիսեաց ինչս
ընծայից և կամ ողորմութիւն, և յիշատա-
կեաց առաջի աստուծոյ աղօթիւք և կամ պա-
տարագաւ, դատաստան անձին իւրում ընդու-
նի, և 'ի քահանայական կարգէն զրկեցեալ լի-
նիցի. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս: Ապա
եթէ պատահիցի այսպիսեաց անզղջից՝ յանկո-
ղինս մահճացն 'ի ժամ մահուն զղջանալ 'ի մե-
ղաց, և խոստովանեսցին դառն արտասուօք
զչարիսն, պա՛րտ է քահանային ո՛չ զրկել զնոսա
յաստուածային շնորհէն, այլ յուսալով յա-
նախակալութին քրիստոսի և 'ի նորին անբաւ

քաղցրութիւնն, որ զաւազակն վասն միոյ դաւանութեան, թէպէտ որ յետս շնչոյն էր՝ ընդ իւր 'ի դրախտն ընկալաւ ։ Իսկ դարձեալ՝ առակաւ որ բանիւք զայն յոյս մեզ առաջի արկանէր տէրն յաղագս անառակին որ թէպէտ անիրաւ էր, սակայն զղջացաւ 'ի միտս իւր և ուղիղ դատեցաւ 'ի մէջ երկուց պարտապանացն, այսինքն՝ հոգւոյ և մարմնոյ. և գովեցաւ 'ի տեառնէ, զի իմաստութեամբ արար զայն ։ Այլև՝ յառակ բարեկամին, որ 'ի ժամ գիշերին բաղխեաց զդուռն, որ վասն առաւել ժտութեանն ընկալաւ զամենայն զոր և կամեցաւ ։ Բայց դու ով քահանայ՝ միջնորդ աստուծոյ և մարդկան, զգո՛յշ լեր անձին քում, և մի՛ ասկս ագահութեան և կամ վասն կարեաց ինչ մարմնականաց՝ նուէրս ինչ կամ առուրս ողորմութեան յանարժանիցն և յանզեղջ մեղուցելոցն առնուցուս. զի պիղծ և գարշելի է այն առաջի աստուծոյ. որպէս ասէ մարգարէն եսայի ։ Իսկ դու մի՛ պղծիր պղծեցելովքն. և դարձեալ՝ այսմ զգոյշ լեր, զի դէտ կացեալ ես 'ի գլուխս ժողովրդոցդ. քանզի պարտիս հանապազ ազդ առնել նոցա փողով պատուիրանին զահ դատաստանին և զերկիւղ տանջանացն դժոխոց, և ոչ դադարել միշտ 'ի խրատելոյ զնոսա և յուսուցանելոյ. և մանաւանդ աղօթիւք և պաղատանօք 'ի գիշերի և 'ի տունջեան աղաչել վասն նոցա, և յետ մահուն պատարագօք հաշտեցուցանել զնոսա ընդ

աստուծոյ։ Ապա թէ այսմ անփոյթ առնիցես, գիտասջի՛ր աստուածութեամբ, զի զարիւնն նոցա 'ի ձեռաց քոց պահանջելոց է Թագաւորն քրիստոս. և ամենայն տուրք և նուէրք ժողովրդեանն զորս առնուցուս, 'ի գողոնս են համարեալ քեզ. և իբրև զզրկանս աւազակաց և բռնաւորաց։ Իսկ յորժամ ոք 'ի հաւատացելոյն կամիցիս տալ իրս ինչ 'ի ձեռս քահանային վասն պատարագի, ոչ է պարտ յիմար և անհոյս մտօք թիւ համարոյ պահանջել 'ի քահանայէն իբրև յիւրմէ պարտականէ. և մի՛ իբրև զերախտաւոր ոք համարեսցի զինքն քահանային և մեծամեծասցի։ Այլ այսպիսի հաւատով պա՛րտ է տալ զտուրս՝ որպէս 'ի ձեռս աստուծոյ. և զայն ոչ իբրև զտուրս, այլ իբրև զհատուցումըն պարտուց առեալ շնորհացն. և որպէս զգոհութիւն և զշնորհակալութիւն ընծայելոյ բարերարին աստուծոյ։ Այլ թէպէտ և վասն չքաւորութեան ոք ոչ կարէ մեծ ինչ և կամ բազումս տալ, սակայն վասն հաւատոյն փոքրն մեծ է համարեալ առաջի աստուծոյ իբրև զլեբևէշս այրի կնոջն, այսինքն զլումայս։ Իսկ այնու յուսով ոչ միայն յայնր քահանայի աղօթից և 'ի պատարագէ, այլ որ միանգամ ընդ ամենայն տիեզերս եկեղեցիք ուղղափառ քրիստոնէից են, ուր և պատարագի քրիստոս, յամենայնէ մասն և բաժին ընդունի։ Զի եթէ հաւատամք թէ մի քրիստոս է որ 'ի վերայ ամենայն սեղանոյ պատարագի, ապա և զայս եւ

պարտ է հաւատալ թէ, այն որ եւս նուէրս
վասն պատարագի յայս եկեղեցի և 'ի սոյն քա_
հանայ, առնու ինքեան վարձս փոխարինաց յա_
մենայն եկեղեցեաց քրիստոնէից, ուր և պա_
տարագի քրիստոս: Զի թէպէտ այլ և այլ
ձևով և արարողութեամբ ամենայն ազգք
քրիստոնէից պատարագեն, սակայն մի հաց է
և մի բաժակ որ յամենայն տիեզերս 'ի վերայ
ամենայն սեղանոյ յեկեղեցիս քրիստոնէից կա_
տարի 'ի միոյ հոգւոյն սրբոյ: Իսկ եթէ ասի_
ցես, թէ նոցինն խառնուածով է, իսկ մերս ոչ,
իմա՛ ո՛վ եղբայր. Ճշմարիտ են խօսք քո և բա_
տոյք. զի յամենայն աստուածշունչ գրոց բա_
տուգած է. որ հացն անխմոր պիտի, և բաժա_
կըն անապակ, բայց դու զնոյայն մի՛ հայհոյեր,
զի նոցա քննօղ և դատիչ աստուած է. այլ
դու 'ի քոյդ հաստատուն կաց, որ խառնուա_
ծով չառնես և դատապարտիս յաստուծոյ:
Եւ գիտեա՛ թէ ուստի՞ ունիմք մեք զայս սո_
վորութիւնս. զի 'ի լուսաւորչացն մերոց 'ի սըր_
բոյն թադէոսէ առաքելոյն և 'ի սուրբ լուսա_
ւորչէն մերմէ գրիգորէ է. զի տէր մեր յի_
սուս քրիստոս 'ի վերնատանն հացն զոր խնդ_
րեաց` բաղարջ էր. և գինին` անապակ. զի կու_
սածին մարմնոյն` այսէր 'ի դէպ առանց խառն_
ուածոյ: Եւ արդ` կարի գեղեցիկ է մերս և
անուշահոտ, հացն անխմոր` և բաժակն` անա_
պակ: Այլ թէ զի՞նչ խորհուրդ է քառասն_
երորդն պատարագաց` զոր կատարեմք ննջեցելոց.

ուսաք յաստուածաշունչ գրոց այլ և 'ի սուրբ
պատգամագրաց, թէ հոգւոյն որք ելանեն 'ի
մարմնոյ ատոր՝ պատերազմ կայ առաջի յօդա-
յին դիւաց անտի. որպէս ետես Ենոք 'ի տես-
լեանն. և վկայէ առաքեալն թէ, ոչ է մեզ պատե-
րազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշ-
խանութիւս և ընդ պետութիւս, ընդ այսս խաւա-
րայինս որք են 'ի ներքոյ երկնից: Վասն որոյ
պարտ է քահանային, յորժամ ոք 'ի հաւատա-
ցելոց մեռանի՝ զաւուրս քառասուն պատարագ
մատուցանել վասն նորա, որպէս պատուիրեաց
առաքեալն փիլիպպոս վասն իւր զքառասուն
աւուրս պատարագ առնել: Նաև եթէ և այլ ոք
մեռանի, զնա ևս ընդ առաջնոյն յիշատակես-
ցէ. զի չէ՛ ինչ վնաս թէ զերկուս և կամ զևս
բազումս 'ի մի աւուր պատարագի յիշեսցես.
վասն զի ոչ եթէ յաղագս միոյ անձին և եթ պա-
տարագի քրիստոս, այլ և վասն ամենայն աշխար-
հի. և վասն այսորիկ սահմանեցաւ յամենայն
աւուր պատարագ մատուցանել. զի ոչ է օր,
յորում ոչ լինի մահ մարդոյ. վասն որոյ պարտ
է յամենայն օր պատարագ առնել. Բայց բա-
զում խափան և միջոց լինի. զի ոչ կարեն քա-
հանայք կալ 'ի խորհրդեանն, է՛ զի 'ի բնական
կարեաց, և է՛ զի յաւուրս աղուհացից և առա-
ջաւորաց. զի ոչ է օրէն պատարագելոյ: Նաև
յետ այնորիկ իբրև ժամանակ իցէ պատարա-
գելոյ՝ չէ՛ ինչ հարկ թուոյ և համարոյ փոյթ
առնել. այլ միայն այնմ սպասիցէ՝ զի որչափ

կար էր և հնար՝ մի՛ ինչ հեղգացի կեալ 'ի խորհրդեանն և մատուցանել զաստուածայինն փրկագործութիւն. զի մի՛ ընդ չար և ընդ վատ ծառային այնորիկ արտաքս ընկեցիկ լինիցի յաստուածայինն դաւթէ :

Յաղագս Թէ՝ ո՛չ է օրինակ հացն և բաժակն Մարմնոյն և Արեանն Քրիստոսի, այլ ճշմարիտ Մարմին և Արիւն Քրիստոսի. յորս Թէ ոչ հաւատայ, ընդդէմ յաղագս անարժան հաղորդողին :

Տէր մեր և աստուած յիսուս քրիստոս յորժամ էջն յարգանդ աստուածածին կուսին էառ յարենէ նորա և խառնեաց ընդ իւր աստուածութեան և գոյացեալ եղև մարդ ճշմարիտ և աստուած. և մարմինն զոր էառ 'ի կուսէն՝ աստուածացաւ ստուգապէս. այնպէս զի թանձրութիւնն բնութեան և զձեւն և զգոյն ոչ փոխեաց : Այլ նոյն աստուածն մարդացեալ՝ յերեկոյի 'ի հինգշաբաթուոջ աւուրն 'ի վերնատանն էառ զհացն և զբաժակն 'ի ձեռս իւր, որով զերկին և զերկիր արար, և բարբառեցաւ նոյն բարբառով, որով ասաց և եղեն ամենեքեան. եթէ՝ այս է իմ մարմին, և այս իմ արիւն : Այլ թէպէտ հացն և բաժակն ոչ փոխեցաւ յորակ մսոյ և արեան, բայց բնութիւնն խառնեցաւ ընդ նա և աստուածացոյց զնա. որպէս և ընդ այն մարմինն՝ զոր 'ի կու-

սէն ընկալեալ էր . նոյնպէս և այս հաց և բա-
ժակ, զորս առնումք հրամանաւ նորին և դը-
նեմք 'ի վերայ սեղանոյն, որպէս 'ի վերայ ձե-
ռացն Քրիստոսի . զի յն՟ է սեղանն ըստ սրբոյն
Դիոնէսիոսի . և օրհնեմք զսա պատմութեամբ
խաչին և մահուն Քրիստոսի, և հայցեմք 'ի հօ-
րէ զկատարիչ Հոգւոյն սրբոյ, զի իջցէ և կա-
տարեսցէ զսա . յայնժամ ըստ կամացն հօր
և ըստ հրամանաց որդւոյն զոր ասաց, Զայս
արարէք առ իմոյ յիշատակի . իջանէ Հոգին
սուրբ, և խառնէ ընդ սա զաստուածային զօ-
րութիւնն իւր, և կատարէ զսա 'ի ճշմարիտ
մարմին և յարիւն Քրիստոսի : Եւ ոչ թէ
առակ օրինակ, այլ որպէս և նա ճշմարիտ
աստուած առանց կարծեաց, նոյնպէս և սա
ըստ անսուտ բանին՝ զոր ասաց թէ, Դուք
իմ՝ աշակերտք էք, զորս փոխանակ իմ՝ կացու-
ցի յաշխարհի . զայս արարէք առ իմոյ յիշա-
տակի . լինի ճշմարիտ մարմին և արիւն Քրիս-
տոսի առանց կարծեաց : Իսկ թէ անարժան
ոք ևս իցէ պատարագիչ քահանայն, սակայն
և ոչ այնու աղօտանայ շնորհն Ս. Հոգւոյն .
զի թէ 'ի ձեռն անարժանութե՟ն քահանային
նուազանայր շնորհն և ոչ աստուածանայր
հացն և բաժակն, յայնժամ զիա՛րդ դատա-
պարտի պատարագիչն իբրև զոչ խտրող մարմ-
նոյ և արեան տեառն : Արդ՝ թէպէտ և անար-
ժան է քահանայն, և թէպէտ յամենայն մե-
ղօք է շաղախեալ, սակայն աստուածպէս հացն

և բաժանին տուանց ամենայն կարծեաց աստ_
ուածանաց ։ Քանզի քահանայութեան շնորհն
իբրև զբնական անմեկնելի է 'ի քահանա_
յէն · զորօրինակ հրեշտակք և մարդիկ , զի 'ի
ստեղծմանն իւրեանց առին յարարչէն զբա_
նականութիւն և զանձնիշխանութիւն միա_
հաւասար · բայց հրեշտակք վասն անմարմնու_
թեան առաւելեան անմահ բնութեամբն քան
զմարդն · քանզի նոքա ամենևին անմահ արա_
րան · իսկ մարդն՝ միջասահման մահու և կե_
նաց եղև ։ Իսկ յորժամ յանցեան , 'ի տե_
ղւոյն և 'ի պատուոյն մերժեցան , այլ ոչ 'ի
բնական շնորհէն , զոր ունէին ։ Նոյնպէս և ա_
մենայն շնորհ 'ի հոգւոյն սրբոյ , որ յեկեղեցին
մատակարարի , որպէս զբնութ՟ իր՝ անմեկնելի է
յարակայ · որպէս մկրտութեան շնորհն , քան_
զի թէպէտ և բազում մեղս մեղանչեն մկր_
տեալքն , և թէ յուրացութիւն ևս անկա_
նիցին , բայց յորժամ զզջանան՝ ապաշխարել
միայն հրամայի նոցա , այլ ոչ եթէ մկրտել ·
քանզի մի է մկրտութիւն որպէս դաւանիմք
'ի Նիկիականն ։ Նոյնպէս իմա զշնորհս և զաս_
տիճան քահանայութեանն անաղօտ և անմեկ_
նելի · վասն որոյ աստուածային խորհուրդ՝
նոյն քահանայական շնորհն է , որ կատարի · և
ոչ եթէ մեղուցեալ քահանայն · քանզի այլ
է քահանայն , և այլ քահանայական շնորհն՝ որ
'ի սուրբ հոգւոյն ։ Քանզի նոյն հոգին սուրբ
նիւթ առնու իւրեան զքահանայական շնորհն

և նովաւ կատարէ զաստուածային և զսուրբ խորհուրդն ։ Ցաղագս այսորիկ առաւել պատժոյ և դատապարտութեան արժանի է եղկելին այն՝ որ շաղախեալն էր մեղօք, և համարձակեցաւ յաստուածագործուն սուրբ խորհրդոյն ․ և կրկին և երեքկին առցէ անձին իւրում զպատուհաս ։ Նախ՝ զի մեղաւ և ոչ պատկառեաց ՚ի քահանայական շնորհէն, զոր ընկալեալն էր ՚ի հոգւոյն ։ Եւ երկրորդ՝ զի այն շաղախեալ գործովն յաստուածագործութիւնն յայն յանդգնեցաւ մերձիլ ։ Եւ երրորդ՝ զի ճաշակէ ևս ․ վասնորոյ դատապարտի իբրև զոչ խտրող մարմնոյ և արեան տեառն ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ, ասէ առաքեալն ։ Եւ եթէ կամիս վկայութեամբ հաստատել զբանս, ահա ՚ի պատմութեանց, թէ ոմն եպիսկոպոս շնայր ընդ կնոջ ումեմն հրէի և յանդգնութեամբ պատարագանէր ․ և յաւուր միում՝ համբուրեալ կնոջն երթայ յեկեղեցին, և տեսանէր զի ՚ի ժամ պատարագին ել հրեշտակ մի ՚ի խորանէն, և տարեալ կալեաց զեպիսկոպոսն ՚ի մի սենեկեղեցւոյն, և ինքն եկեալ մատոյց զպատարագըն ․ և յորժամ պատմեաց կինն զտեսիլն զայն եպիսկոպոսին՝ եպիսկոպոսն զղջացաւ և ապաշխարեաց զմեղս իւր ․ և կինն մկրտեալ՝ եղև քրիստոնեայ ․ քանզի անզեղջ են շնորհքն աստուծոյ որպէս հրամայէ առաքեալն ․ և ոչ մեկ-

նի՝ յորս բնակի ։

Դիմեսցուք այսուհետև 'ի տեսութիւն առա-
ջիկայ խորհրդոյս ձեռնադրութե՛ հոգւոյն ։

Խորհուրդք զանազան եկեղեցւոց ։

Յորժամ հանդերձեալ ոք իցէ 'ի քահա-
նայապետաց և կամ 'ի քահանայից պատարագ-
անել, նախ՝ պարտ է զգոյշ լինել յամենայն
տեսակէ մեղաց և որ յամենայն բծէ և արա-
տոյ, արդար, աստուածապաշտ, հեզ և խո-
նարհ և յամենայնի լցեալ ամենայն գործովք
բարեաց և օտարացեալ յամենայն իրաց չա-
րեաց ։ Նախ՝ աստուածանալ ըստ կարգու-
թեան, և ապա՝ աստուածագործել ․ երթի-
ցէ նախ առ իւր խոստովանահայրն 'ի ծունկս
անկեալ բացաւ գլխով, և խոստովանեսցի
զամենայն յանցանս իւր՝ զգործոյն, զբանիցն
և զխորհրդոցն ։ Եւ 'ի պատրաստել սարկա-
ւագացն զհաց պատարագին, մտցեն յաւան-
դատունն՝ ուր զգեստ պատարագին իցէ ․ և
զգեցցին զգեստ ըստ իւրաքանչիւր աստի-
ճանի և պատուոյ ։ Զգեստ պատրիարգին,
որ Թարգմանի հայրանց հայր՝ և կաթուղիկո-
սին և արք եպիսկոպոսին՝ է պատմուճան և
նափորա բազմախաչ ․ և եմիփորոն 'ի վերայ
այնորիկ հինգ խաչիւք զարդարեալ, և խոյր
'ի գլուխն ։ Իսկ եպիսկոպոսին՝ որ Թարգմա-

նի տեսաւ՝ Նափորտ առանց խաչի, և եմիփո-րոն : Իսկ քահանայն պատմուճան և Նափորտ զգեցցի որպէս և եպիսկոպոսն. բայց ուրար արկցէ զերկու ուսովն, և ոչ եմիփորոն : Իսկ սարկաւագն պատմուճան միայն զգեցցի առանց գօտւոյ. և ուրար զահեակ ուսովն : Իսկ կիսասարկաւագն նոյնպէս պատմուճան գօտեւորեալ զգեցցի. բայց զուրարն 'ի վերայ բազկին արկցէ և ոչ զուսովն : Իսկ դպրակարգացքն պատմուճան գօտեւորեալ զգեցցին միայն. և բացագլուխ կացցեն ամենեքեան 'ի սուրբ խորհըրդեանն :

## Մեկնութիւն :

Քահանայքն մտանելն յաւանդատունն և 'ի բաց մերկանալն զառաջին հանդերձն, և զայլ զգենուլն պայծառագոյն՝ զայն նշանակէ, որպէս թէ 'ի բաց մերկացաք զհին մարդըն մեղաց և զգեցաք զքրիստոս զնոյն նորոգեալ սրբութբ և արդարութեամբ. զի նախ ծածկաբար խոստովանութեամբն միայն առաւածացոյց զմաքրութիւն մտացն. այժմ 'ի ձեռն երևելի զգեստուցն՝ մարդկան ցուցանէ. քանզի պայծառ է մեզ ոչ միայն առաջի աստուծոյ սուրբ երևիլ, այլ և առաջի մարդկան, որպէս ասէ առաքեալն : Իսկ Նափորտն բազմախաչ և եմիփորոնն, հինգ խաչիւք զարդարեալ, զորս զգենու պատրիարգն և կա-

թողիկոսն և այլք եպիսկոպոսն՝ նշանակեն զնոցին ամենեւին խաչելն հինգ զգայութեանցն իւրեանց և զմեռանելն մեղաց և ցանկութեց աշխարհի, և զմիայն բարձեալ ունելն յանձինըս իւրեանց զխաչն քն : Իսկ խոյրն ՚ի գլուխն զպսակին իմաստութե նշանակէ և զսաղաւարտըն փրկութե, որով խոհականն պայծառանայ : Իսկ ուրար քահանային յայտ առնէ ըզքաղցր լուծ աւետարանին քրիստոսի, զոր բարձեալ է երկոքին ուսովն : Իսկ սարկաւագին զահեակ ուսովն միայն արկանելն զուրարն՝ ցուցանէ զնա դեռեւս անկար գոլ և ոչ ունել կար բովանդակ բառնալոյ զլուծ օրինացն քրիստոսի, բայց միայն միով մասամբ անկար անդամովն, որ է ահեակ ուսն, մերձեալ ՚ի պատուիրանն : Իսկ կիսասարկաւագն, որ յահեակ բազուկն ունի զուրարն՝ այս աներևութայքս զտղայութիւն ներքին հասակին յերկք մարդոյ • որպէս թէ դոյզն ինչ կարաց հանել ՚ի գործ պատուիրանին : Դարձեալ գօտելոյծ պատմուճանն նորին և դպրացն՝ զիշխանութիւն նոցին նշանակէ ՚ի տանն աստուծոյ • քանզի գօտին ծառայական է որպէս և նափորտն, զոր զգենու քահանայն գօտելոյծ : Իսկ բացաւ գլխով մատուցանելն զաղօթսն՝ զհամարձակութիւն և զազատութիւն սրտին ցուցանէ :

Վասն դիմադրութեան տուայս ։

Բայց են ոմանք, զի հակառակին և աւելորդ և անօգուտ համարին զայս բարուք սովորութիւն զգեստուցն. քանզի ասեն թէ աստուած զսրբութի սրտին միայն պահանջէ ։ Բարուք է զոր ասեն. այլ ով եղբայր ոչ է հնար որքան եմք 'ի մարմնի աստ, առանց մարմնական նիւթոց և զգալի նշանակաց մերձենալ մեզ առ աննիւթն աստուած. որպէս և ոչ է հնար առանց ջրոյ մկրտութեան՝ մաքրութի, և կամ առանց մեռոնի՝ հոգի առնուլ. և կամ առանց եկեղեցւոյ և սեղանոյ և հացի և բաժակի՝ պատարագ մատուցանել ։ Արդ՝ եթէ այսոքիկ ամենեքեան զգալի նիւթք են, և հարկաւոր և պիտանացու են, և ոչ այս միայն, այլ և խնկարկութիւն և լուսաւորութի և որ ինչ սոյնպիսիք, 'ի նոյն օրինակ և քահանայական զգեստքն հարկաւորք են և խորհրդականք որպէս և ասացաք ։ Իսկ եթէ ասիցես թէ ընդ պայծառութի զգեստուցն ակնս պճնողութեան և մարդահաճութեան խառնէ սատանայ, ապա և յողորմութին խառնէ զնոյն ակն և ընդ աղօթելն և 'ի պահելն և յամենայն բարեգործութիւ՝ որչափ և առնեն մարդիկ՝ նոյնպէս ակամբ մարդահաճութեան և փառասիրութեան պատերազմի սատանայ. իսկ մեք ոչ եթէ 'ի բարեգործութենէն հրաման առաք 'ի բաց կալ, այլ ընդ ակնտոյն կռուել ։ Իսկ զքահանայական զգեստն

զգեցցիր 'ի փառս աստուծոյ, և մի՛ 'ի փառս
անձին քոյ. և ընդդէմ ախտի փառասիրութե
մաքառեա՛ց արիաբար. այնպէս և յամենայն
առաքինութիւնս : Եւ եթէ զինքնդ ասիցես
քահանայական զգեստ, ապա ոչ էր պարտ քեզ
լքել զհասարակաց զգեստ հանապազ 'ի գի-
շերի և 'ի տունջեան զանձամբ ունիլ. և յա-
մենայն գործ անխտիր զոփայ փոխել, նա և յե-
րաշափորձութիւնս և յամենայն խառնակու-
թիւնս անխտիրդ ես փոխնեալդ : Եւ դարձեալ
քահանայական զգեստ համարիս զայս և յառա-
ւածագործութեան խորհուրդն մերձիս, մեծ
անմարշաւանք է այս. իսկ եթէ զաղքատութի
որ պատճառեցէ : Որդ ես ոչ եթէ զայն ասեմ`
թէ կերպաս կամ թէ յայլ ինչ մեծագին նիւ-
թոյ զգեստն լինիցի, այլ միայն զայս զի յինչ
և իցէ նիւթոյ` միայն պարտ է այն լինիլ ըզ-
գեստ : Եւ կամ զիարդ ոչ բարեվայելու-
թուի ձեզ սրբութեան զգեստուք մերձիլ 'ի
սրբութիւն մէջ, և ոչ հասարակաց հանդեր-
ձիւք. և զսա մի՛ նոր և եկամուտ համարիր զայս
աւելորդութիւն. քանզի 'ի հինն` ինքն աստուած
հրամայեաց մովսէսի առնել զգեստս պայծա-
ռս և վայելուչս. և այսու զգեստով մեծն և
առաջին քահանայապետն ահարոն 'ի խորանին
սրբէր զժողովուրդն. և որդիքն ահարոնի նա-
բաթ և աբիուդ յորժամ անարժանաբար մը-
տին 'ի խորանն սրբեալք 'ի գինւոյ, հուրն 'ի
բուրվառացն ելեալ զնոսին այրեաց. բայց 'ի

զգեստ քահանայութեանն, զոր նոքա զգեցեալ էին՝ ոչ իշխեաց մերձիլ հուրն։ Եւ մարգարէն եզեկիէլ զհրեշտակապետն՝ քահանայական զգեստուք տեսանէր զարդարեալ․ որպէս և ասէր թէ՝ զգեցեալ էր զպճղնաւորն։ Իսկ 'ի նորա՝ առաջին եպիսկոպոսն եղբայր տեառն յակոբոս՝ ասէ պատմութիւն, թէ սպիտակ հանդերձիւք հանապազ պաշտաւորէր տեառն։ Եւ սուրբն բագարատ աշակերտ առաքելոյն պետրոսի քահանայական եմիփորոնաւն իբրև զբոց վառեալ երևէր քաղաքապետին փոնխատոսի։ Նոյն և մեծն բասիլիոս և ամենայն քահանայապետքն և երիցունքն, զի ոչ իշխեաց ոք 'ի նոցանէ մերձիլ առանց քահանայական զարդուց 'ի խորհուրդ ինչ։ Նոյնպէս և մերն լուսաւորիչ սուրբն գրիգոր և ամենայն թոռունք նորա քահանայական զգեստուք կատարէին զսուրբ խորհուրդն։ Իսկ որ զգլխոյն բանալն ոչ ընդունի, նա 'ի պողոսէ ուսցի զնոյն հարկաւորութի․ զի ոչ միայն օրինադրէ ըղբանալն, այլ և ոչ բացողացն սաստէ ասելով․ Որ յաղօթս կայցէ և կամ՝ թէ մարգարէանայցէ, և զգլուխն իւր ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր զքրիստոս։ Զ՞ինչ քան զայս այլ յանցանք իցէ, զի յաղագս չնչին իրաց զպատիւն մեր զքրիստոս յամօթ առնիցեմք։ Բարդ՝ այս է խորհուրդ սորա․ զի մեր ամենայն ինչ յայտնի և բաց է ծածկագիտին աստուծոյ։ Եւ դարձեալ՝ այսպէս էր քրիստոս

'ի վերայ խաչին, և մեք բաց գլխով զձեռս տարածեալ՝ զնոցա նմանութիւն բերեմք 'ի մեզ: Բայց կին մարդոյ ոչ է պարտ բանալ զգլուխն, այլ առաւել ծածկել յեկեղեցւոջ: Իսկ որք այժմ՝ աբեղայք ոչ բանան զգլուխս իւրեանց յամենայն աղօթս՝ այս է պատճառն. զի աբեղայութիւնն՝ կրօնաւորութիւն է. և կրօնաւորին՝ պարտ է զա̃մ զգայարանս ծածուկ պահել: Բայց 'ի պատարագին պարտ է բանալ զգլուխն, որ պատարագիչն է. թէ՛ քահանայ, թէ՛ եպիսկոպոս և թէ՛ այլ որք: Այլ և բնութիւնս ուսուցանէ քեզ զայս. քանզի բնական է այս, զի ամենայն ազգ ոչ միայն քրիստոնեայք, այլ և անհաւատք՝ բացաւ գլխով կան յաղօթս:

Զի՞նչ խորհուրդ ունի Սաղմոսն և Աղօթքն որ Քահանայքն 'ի ժամ պաշտաւորութեանն:

Եկեղեցին տուն և բնակութիւն է երկնաւոր Թագաւորին. և դասք քահանայիցն և սարկաւագացն՝ իբրև իշխանք են կարգեալք 'ի տանն աստուծոյ. և որպէս ոչ է պատշաճ առաջի Թագաւորի կալ իշխանին առանց իշխանական ձևոյն, այսպէս և սոքա նախ՝ յաւանդատունն իւրաքանչիւր որք յիշխանական ձևս զգեստուքն զարդարին, և ապա՝ գան առաջի Թագաւորին քրիստոսի: Եւ 'ի զգենուլ զհանդերձն՝ ասեն սաղմոս ըստ խորհրդոյն. Յիշեա՛

տէր զդաւիթ և զամենայն հեզութիւն նորա։ Եւ ամենայն բանք սաղմոսին զայս նշանակեն. քանզի 'ի յիշումն ածեն հօր զանչափ և զանհաս հեզութիւնն որդւոյ, զոր դաւիթ կոչէ։ Եւ թէ զի՞նչ էցէ հեզութիւն նորա, այս է զոր ասէ. Երդուաւ նա և ուխտս եդ տատուծոյ յակոբայ։ Եւ երդումն է՛ գործ անօրէնութեան որդւոյ նորա. որ ո՛չ եմուտ 'ի յարկ ներքին վարագուրին և ո՛չ հանգեաւ 'ի մահիճ հայրենի փառացն, որ անմեկնելին էր 'ի նմանէ. և ո՛չ ննջեաց և ո՛չ հանգեաւ 'ի խնամելոյ զարարածս իւր, մինչև եգիտ զմարդիկ տեղի և հանգիստ կամացն հօր և իւրեանց, և այսու օրինակաւ զայլ սաղմոսն քննեա՛ կարգաւ։

Իսկ սարկաւագն յորժամ զայսքան առատութեան պարգևացն աստուծոյ ծանեաւ 'ի սաղմոսէ, հրամանս տայ ժողովրդեանն ասելով, Ո՛վ եղբարք ծանեաք մարգարէիւս թէ որչափ գթութիւն աստուծոյ 'ի ձեռն քրիստոսի հեղաւ 'ի վերայ մեր։ Արդ՝ քաջալերեալք այսու յուսով, խնդրեսցուք հաւատով և միաբանութեամբ 'ի տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։

### Մեկնութիւն։

Այսինքն լուաք զի խոստացաւ տէրն. երկու 'ի ձէնջ միաբանեալք, զոր ինչ խնդրեսցեն հաւատով առնուցուն։ Արդ՝ և մեք կցորդեալք

մարմնով ընծայեսցուք և զիղձս հոգւոյ և զհաւա-
տոյս կամաց ՚ի միաբանութի՛ւ. և խնդրեսցուք
՚ի տեառնէ շնորհս մեզ զմեծ զողորմութիւն
նորա, որ կարէ զառաջարկութիւնս անօրինել
՚ի բարի։ Ամենակալ տէր աստուած մեր կե-
ցուսցէ և ողորմեսցի։

## Մաղթութիւն.

Յորժամ ուսոյց նոցա զճանապարհ աղօթիցն
երկրե վերակացու և դատաւորակ, ասա առ-
աստուած դարձուցանէ զբանն. Տէ՛ր ասէ, որ
ամենեցուն տիրես և զամենեսեան նախախնա-
մես, կեցո՛ զմեզ ողորմութեամբ ՚ի կործանմա-
նէ մեղաց և ՚ի սայթաքելոյ խորհրդոց։ Իսկ
եղբարցն ծանուցեալ, թէ զայս արժա՛ն է խնդ-
րել յաստուծոյ զկեցուցանելն, կցորդեն և
ինքեանք փառաբանելին բանից, և զնոյն երկ-
րորդեն ասելով, Կեցո՛ տէր։
Զի յորժամ դու, ասեն, պարապեալ խնամօք
ցուցանես՝ չէ՛ք ոք, որ համարձակի կործանել։
Ողորմեա՛յ մեզ տէ՛ր աստուած մեր ըստ մեծի
ողորմութեան քում. Զայսր և զորոց ընդ ար-
մա զօրութիւն դարձնել ՚ի վեր անդր ուսիր ՚ի
քարոզութեան սարկաւագին։

Քահանայն միաբանի աղօթից նոցա. և ընտանեբար խօսի ընդ Քրիստոսի աստուծով :

՚՚Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ Տէ՛ր մեր յիսուս քրիստոս, անճառելի խոնարհու–թեամբ 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար :"

Մեկնութիւն :

Մե՛ծ և անչափ է խոնարհութիւնն քրիստո–սի. զի արարիչն երկնի և երկրի մարդ եղև և ընդ մարդկան շրջեցաւ :

՚՚Որ եղեր քահանայապետ ճշմարիտ յաւի–տենից ըստ կարգին մելքիսեդեկի, և զարդա–րեցեր զեկեղեցի քո սուրբ :"

Կարգ մելքիսեդեկի՝ մշտնջենաւոր քահանա–յութիւնն է, որով զարդարեաց զեկեղեցի պէսպէս շնորհօք սուրբ հոգւոյն :

՚՚Տէ՛ր ամենակալ որ պարգևեցեր մեզ ըզ–նոյն երկնային հանդերձ զգենուլ :"

Երկնային հանդերձ՝ զշնորհսն հոգւոյն սրբոյ ասէ, որով զարդարեցաք :

՚՚Արժանի արա՛ և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց. որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով :"

Խոնարհութեամբ աղերսէ զորդին ասելով .
Թէպէտ և անպիտան եմ 'ի քո ծառայութիդ,
սակայն դու արժանաւորեա զիս այսմ հոգեւ-
որ պաշտամանս . զի չէ՛ մարմնական որպէս հը-
րէիցն . որպէս զի զայս թխատեսակ մեղս մեր-
կացայց . և ընդ զգենուլ մարմնական հանդեր-
ձիս , զարդարեսցի հոգիս լուսով իմաստութե̃
և սրբութեան :

,, Ընկեա՛ յինէն զչարիս իմ և թօթափեա՛ ըզ-
յանցանս իմ . որպէս զի արժանի եղէց հան-
դերձեալ լուսոյդ առ 'ի քէն :"

Դարձեալ զնոյն կրկնէ , զոր այժմ ասաց :

,, Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտա-
նել 'ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ,
որք անմեղութ̃ պահեցին զպատուիրանս քո :"

Խնդրէ , զի մաքուր մտօք յերկինս առ ա̃ծ
մտցէ , և մարմնով 'ի պաշտօն սեղանոյն ընդ
այնոսիկ , որք անմեղութեամբ այսինքն՝ ընդ այ-
նոսիկ , որք նախ քան զիս անմեղ խորհրդով
զսոյն պաշտեցին . ընդ նոսին և ես արժանա-
ցայց :

,, Զի և ես պատրաստ գտայց. երկնաւոր ա-
ռագաստին ընդ իմաստուն կուսանսն , փառա-
ւորել զ.քեզ "Քրիստոս, որ բարձեր զմեղս ա-
մենեցուն :"

Երկնաւոր առագաստ՝ այժմ զաստուածային
խորանն կոչէ . և իմաստուն կուսանք՝ զհամա-
դասակիցս իւր զժառանգաւորս եկեղեցւոյն :

,, Զի դու ես սրբութիւն անձանց մերոց . և

քեզ բարերարիդ Աստուծոյ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։"

Զի՛նչ նշանակէ յետ զգենլոյն առ Հոգին Սուրբ աղօթելն ։

Եւ յետ զգենլոյն զայս սուաչի սրբոյ սեղանոյն, և անկեալ 'ի վերայ երեսացն՝ ասէ զաղօթս առ սուրբ Հոգին, զոր ասացեալ է սբյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ ։

## Մեկնութիւն ։

"Քահանայն յետ առ Քրիստոս աղօթելոյն, դառնայն և առ Հոգին սուրբ աղօթելն՝ զայն յայտ առնէ․ վասն զի յետ Քրիստոսի Հոգին սբ եղև մեզ նախախնամօղ և ամենայն եկեղեցական գործոց կատարիչ 'ի ձեռն հրեշտակաց միջնորդութե․ յաղագս որոյ յետ խնդրելոյ 'ի Քրիստոսէ զօրութիւն, այսուհետև առ Հոգին մատչի աղերսել, զի մի՛ արգելցէ զգործակցութիւն իւր յառաջիկայ գործոյն․ և անկեալ 'ի վերայ երեսացն մատուցանէ զաղօթսն, որպէս թէ՝ մինչչև եմք 'ի քէն զօրացեալ, կարօտագլուխ եմք․ և իբրև զօրանամք 'ի քէն, համարձակութեամբ զձեռս և զգլուխս առ քեզ ամբառնամք ։

Պօբէ։

„ Ամենակալ բարերար մարդասէր տա-
ռած բոլորից, յօրինող երեւութից և անե-
րեւութից, փրկող և հաստատող, խնամող և
խաղաղարար հօր հզօր հոգի։"

Սէնթ-Պիէռ։

Այսու ամենայնիւ ցուցանէ զհոգին սուրբ
աստուած հօր և որդւոյ հաւասար. արարիչ
և խնամածու արարածոց։

„ Հայցեմք բազկատարած մաղթանօք, գոչ-
մամբ հեծութեան յանդիման եղեալ քեզ
ահաւորիդ. մաղթեմք մեծաւ դողութեամբ,
աստէն երկեւղիւ մատուցանել նախ զբանա-
կան զայս պատարագ քում՝ անզննելի տէրու-
թեանդ։"

Իբր թէ հոգւոյն աչօք նայեցեալ անսա-
նէ զմեծ և զսոսկալի զգահոյս Թագաւորին
որոյ կայ առաջի. և զարհուրեալ դողայ յա-
հէ նորին. յաղագս որոյ նախ զայսպիսի ա-
ղերս արկանէ առաջի նորա։

„ Իբր անթուակցի փառակցի և արարչակցի,
հայրենի անեղակցոյ պատուոյդ։"

Զհոգին սուրբ կոչէ հօր անթուակից և փա-
ռակից և արարչակից յորմէ անեղապէս. այս-
ինքն՝ անժամանակապէս միայն յայտնելի պատուոյն։

„ Իւ քննողի ծածկութեան խորոց խորհրդ-

դոյ՝ ամենակատար կամաց Հօրդ Էմմանուէլի
դքեզ առաքչի փրկչի և կենդանատուի և
արարչի ամենայնի։"

Ծննօղ է խորոցն Հօր Հոգին, զոր Էմմանուէլն
առաքեաց։

,, Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձ-
նաւորութի միանական աստուածութեանդ՝
յորոց մի և դու Ճանաչիս անհաս։"

Զգիտութիւն երրորդութեան որդին յայտ-
նեաց մեզ քե։

,, Դու և 'ի ձեռն քո առաջինքն նահապե-
տական տոհմին շառաւիղք՝ առանօղք ան-
ուանակոչեալք զանցեալսն և զգալոցսն՝ զե-
ղեալսն և զոչ գոյացեալսն անստուերաբար
բարբառով բանի մերապատմեցին։"

Զմարգարէիցն ասէ՝ որք շառաւիղեցան 'ի
նահապետացն աբրահամու. որք զչեղեալսն
իբրև զեղեալ տեսին և պատմեցին.

,, Հոգի աստուծոյ քարոզեալ գքեզ մանկ-
ան, որ 'ի գնալն քոյ 'ի վերայ ջրոյն անպարա-
գիր զօրութիւն՝ ահեղ զգչարկութեամբ աս-
ծուածականա թեւապարփակ պաշտպանօղէն
զթաւալեալ 'ի ծնունդս նորոգս զաւազանին
խորհուրդ ծանուցեր։"

Զայն ասէ՝ զոր ասաց մովսէս. Հոգի աստու-
ծոյ շրջէր 'ի վերայ ջուրց. յայտ առնէ թէ
թևօք քո խնամոց զկենդանականդ զօրութի
'ի ջուրսն ընծեր, որ օրինակեր զաւազանին
խորհուրդ, զի որպէս յայնժամ հոգւոյն շրջ-

մամբ կենդանիք ծնանէին 'ի ջրոյն, նոյնպէս և
այժմ նոյն Հոգւովն աստուածոյ մարդիկ ծնա-
նին 'ի կեանս յաւիտենից:

,, Զոր կերպարան օրինակութեան՝ նախ քան
զկառուցանել զլոյծդ մածուած վերջնոյ վա-
րագուրիդ, յօրինեցեր կարօղ տիրապէս զբո-
վանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից
գոյից ամենայն էից յանէից:"

Զուսապանին խորհուրդն ասէ՝ թէ նախ քան
զՀաստատուիլ ջրեղէն կամարին՝ զոր լոյծ մա-
ծուած և վերջին վարագոյր կոչեաց, խորհուրդ
միութեանն Հոգւոյն նկարեցաւ:

,, Եւ ստեղծանին 'ի նորոգութիւն յարու-
թեան ամենայն եղեալքս առ 'ի քէն յայնմ
ժամանակի, որ է օր վերջին այսր կենցաղի և
օր առաջին երկրին կենդանեաց:"

Զյարութիւն մեռելոցն 'ի Հոգւոյն սրբոյ ա-
ռնէ լինիլ, որպէս և դաւիթ ասէ. Առաքես
զՀոգի քո և ստանաս զնոսա և նորոգես զերեսս
երկրի:

" Քեզ Հնազանդեցաւ միութեամբ կամացն
որպէս և Հօրն իւրում՝ ազգակիցն քո, էակի-
ցըն Հոր, անդրանիկն որդի մերոյս կերպիւ:"

Զմարդանալն, զխաչն և զայլն ամենայն յան-
ձըն առնուլն որդւոյ՝ Հնազանդութիւն կոչի
Հօր և Հոգւոյն. քանզի զերկութիւն մարդկան
զոր Հայր և Հոգի՝ կամէին՝ եկն որդին և զայն
գործով 'ի մեզ կատարեաց:

,, Զքեզ աւետարանեաց Ճշմարիտ Սա-

ուած հաւատար և հաւանագոյ հօր խորոյ հզօրի՝ և զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց. և երբ զաստուածամարտիցն զառ 'ի քէն հետևողացն չարաբանական բերանս կարկեաց և զիւրն շնորհեաց արդարն և անարատն դատիչն ամենայնի:"

Քանզի ասաց՝ որ ոք զորդւոյ ասիցէ բան՝ թողցի նմա. բայց որ զհոգին սուրբ հայհոյեսցէ՝ մի՛ թողցի. և այսու եցոյց մեզ զհոգւոյն աստուածութիւնն:

„Որ վասն մեղաց մերոց մատնեցաւ և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ:"

Յայտ է թէ Որդին:

„ Նմա փառք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի: Հոգւով զորդի. և Որդւով զհոգին փառաւորեմք յաւիտեանս յաւիտենից: Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի, մինչև վստահութիւն վերահայեցողութեանն լուսոյ հրաշափառ ազդեալ յայտնեսցի, աւետարանել վերստին կրկին խաղաղութիւն:"

Մինչև ցայս ասէ որ մտօքս 'ի վեր հայեցայ 'ի լոյս իմաստից քոց, նոյն լուսոյ զօրութիւն հրաշափառ ազդեալ յայտնեսցի մտացս. զխռովութիւն մտացս անհուցու վերստին զկրկին խաղաղութիւնն:

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ ա-

բարչութիւնդ անեղծ և անստեղծ անժամա-
նակ հոգւոյդ գթածի:"

Վասն զի արտասուքն է, որ զհոգւոյն աչսն լու-
սաւորէ. և հառաչանքն է, որ զբոց սիրոյն քր-
իստոսի աւետարանական ձայնիւ և արտասուաթոր
կողկողանօք աստուծոյ ընծայէ:

" Որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հե-
ծութիւնս առ ողորմածդ հայր:"

Զի հոգին է որ վասն մեր բարեխօս է, ասէ
առաքեալն. քանզի յորժամ 'ի սիրտս մեր հե-
ծեմք անմռունչ, հոգին սուրբ զխղճուկ սր-
տից մերոց տեսանէ և զայն հօր մատուցանէ
և վասն մեր բարեխօսէ:

" Որ զսուրբսն պահես և զմեղուցեալսն մաք-
րես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ
կամաց բարձրեալդ հօր:"

Քանզի հոգին սուրբ է, որ պահէ զսուրբսն ա-
ւանց վնասուց. և մեղուցելոցն զղջումն ապա-
շաւանաց տայ՝ որով մաքրին:

" Արդ աղաչեմ զմեզ յամենայն անմաքուր
գործոյ, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան:"

Վասն զի հոգին սուրբ ոչ հաճի յանմաքուրս
բնակիլ:

" Եւ մի շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհաց
փայլմունք 'ի տեսականացս աչաց իմաստից:"

Լոյս շնորհաց կոչէ զզանազան շնորհս սուրբ
հոգւոյն. հայցէ զի մի՛ շիջանիցին նոքա 'ի հո-
գւոյն տեսողութենէ:

" Վասն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի

ձեւն աղօթից և ընծայիր փառաց խնկելոյ :"

Արդարև 'ի ձեռն աղօթից և ընծայիր և անու-
շահոտ փառաց միանայ 'ի մեզ սուրբ հոգին :

,, Նա քանզի՝ մեզ յերրորդութենէդ պատա-
րագի . և միւսդ ընդունի հաճեալ ընդ մեզ
հաշտարար արեամբ անդրանկին իւրոյ : Իսկ դու
ընկալցիս զմեր պաշտամանս . և յարդարեսցես
զմեզ յօթևանս պատուականս ամենայն պատ-
րաստութեամբ 'ի վայելչումն ճաշակման երկ-
նաւոր գառինդ :"

Ապա պատարագի . և հայր հաճի . իսկ հոգին
սուրբ որպէս կամակից հօր և որդւոյ՝ զմեզ
սրբէ պատրաստեսցէ 'ի ճաշակումն անմահ
գառինն :

,, Առանց պատժոյ դատապարտութեան ընդ-
ունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց
նորոյ փրկութեան . և հալեսցի 'ի հրոյս յայ-
մանէ գայթակղութիւնս մեր . որպէս մարգա-
րէին՝ կենդանախառոյն կայծակամբն 'ի ձեռն
ունելեայն մատուցման :"

'Ի մեծ երկիւղի կայ զի մի՛ գուցէ անմահու-
թեան դեղս այս՝ մահու առիթ լիցի . վասն ո-
րոյ հայցէ , զի հալեսցի յաստուածային հրոյ
սուրբ խորհրդոյն մեղացն գայթակղութիւն ,
որպէս և մարգարէին՝ յաստուածային կայծա-
կանէ .

,, Զի յայսմ ամենայնի բոյր քաղցրանեսցի գը-
թուէ̃ , որպէս որդւոյն աստուածոյ հօր քաղց-
րութիւն :"

Զի որպէս որդին իւր շնորհօքն, զոր առարն՝ զհօրն քաղցրութիւն եցոյց մեզ, նոյնպէս և դու սրբելովդ զմեզ՝ զանուն քո տէր փառաւորեա՛ :

,, Որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւնն և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան : „

Զքրիստոսին ՚ի մէջ առնու զողորմութիւն և աղերսէ զհոգին ասելով, թէ որպէս որդին զնոսա արդարացոյց ձրի, այսպէս և դու ինձ ողորմեսցիս :

,, Այո՛ այո՛ և ես մի եմ ՚ի նոցանէ . և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի . զշնորհօք քո ապրեալս և զարեամբ քրիստոսի առացեալս . զի այսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո մարդասիրութիւնդ : „

Արկին թախանձանօք աղաչէ զհոգին ասելով, որպէս որդին առ պոռնիկն մարդասիրեաց . և զանառակ որդին հայրն ընկալաւ, այսպէս և դու առիս մարդասիրեա՛ որ նման եմ նոցա . քրիստոս արեամբն գնեաց զիս, և դարձեալ գերեցայ . այսուհետև քումդ կարօտ եմ շնորհի և օգնութե՛, յոր աւանդեաց զիս պահել . արդ յայտնեա՛ զմարդասիրութիւնդ երկնաւորաց և երկրաւորաց առիս ողորմութբ և տացիր այսու փառս յամենեցունց :

,, Ընդ հօր փառաւորել համապատուաբար,

'ի մի կամս և 'ի մի իշխանութիւն գումարեսցէ : Զի քո է գթութիւն և կարողութիւն և մար-դասիրութիւն՝ զօրութիւն և փառք յաւի-տեանս յաւիտենից ամէն :"

Քահանայն գայ առաջի ընծայարանի խորանին. առ որ հաւաքեցանն նախապատրաստեալն ընչխարն. և առեալ հացա-նայն դնէ 'ի հաղորդոյն ասելով :

Յիշատակ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի :

Եւ առեալ զգինին արկանէ 'ի սկիհն ասելով :

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնու-թեան տեառն աստուծոյ և փրկչին մերոյ Յի-սուսի Քրիստոսի :

Յիշատակ կոչէ քրիստոսի զհացն և զբաժակն ըստ քրիստոսի անսուտ բանին՝ զոր ասացն թէ, Զայս արարէք առ իմոյ յիշատակի. որպէս թէ՝ 'ի յիշումն ածեմք հօրն և աստուծոյ զմահ որդւոյն իւրոյ յիսուսի : Զոր օրինակ՝ եթէ ոք բարկացեալ իցէ ումեք վասն յանցանաց իւրոց. և նա ողոքեսցէ զնա և զմահ սիրելի որդ-ւոյ նորին 'ի յիշումն ածցէ նմա, այսպէս և մեք զմահ և զչարչարանս միածնին յիշեմք ա-ռաջի հօրն իւրոյ երկնաւորի՝ որ բարկացաւն մեզ վասն մեղաց մերոց. և 'ի գութ ողորմու-թեան շարժեմք զնա վասն մեր :

Եւ չահանայն առէ 'ի ծածուկ զաղօթս Յովհաննու Ոսկեբերանին ։

„ Տէր աստուած մեր՝ որ զերկնաւոր հացդ զտէր մեր յս քս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ և կեցուցիչ և բարերար օրհնել և սրբել զմեզ ։"

Եւ հայր աղօթէ ասելով դու հայր ողորմեցար և զորդիդ քո որ հաց երկնից անուանեաց զինքն՝ մեզ 'ի փրկութիւն և 'ի սրբութիւն առաքեցեր ։

„ Ինքնին դու տէր օրհնեա՛ և այժմ զպատարագութիւս զայս ։ Ընկա՛լ զսա յերկնային քո սեղանդ ։"

Եւ այժմ առէ օրհնեա՛ զնուէրս զայս՝ զոր առաջի քո եդաք ․ և արժանի՛ արա զսա ընդունել յերկնային սեղանն ․ այսինքն 'ի խորանըն սուրբ ․ և կամ յիմանալին՝ որ յերկինս է ։

„ Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս և վասն որոց մատուցանի ․ և զմեզ անդատապարտս պահեա՛ 'ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց ։"

Երիս խիս հայցէ ․ մի զի մատուցողաց պատարագին՝ որք են քահանայական դասքն, լիցի առ 'ի փրկութիւն ։ Եւ երկրորդ՝ թէ վասն որոց մատչի ․ այսինքն աշխարհի ։ Եւ երրորդ՝ զի և ինքն իսկ յանդատապարտութե՛ մնասցէ յաստուածային խորհրդոյն քահանայագործութիւն ։

„Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։"

Իսկ այս մատուցեալ Սարկաւագն ձայնէ փառաբա-ձոն ասելով ալլէլու. Տէր թագաւորեաց, զվայելչ։ Իս-պայ խունկն՝ ի ձեռս քահանային՝ առընթեր կալով դպրաց։

Սարկաւագն պաշտօնեայ Թարգմանի և սպասաւոր. և պաշտօնեայ է սա ոչ մարդոյ, այլ Աստուծոյ և Նորին եկեղեցւոյն և բանին։ Իւր է սորա աստիճան՝ Ստեփաննոսին և Լւրոյն. որպէս առէ պատմութիւն գործոց առաքելոցն. եթէ ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս։ Ընտրեցէք եղբարք վկայեալս ՚ի ձէնջ արս եօթն՝ լի Հոգւով սրբով և իմաստութեամբ. զորս կացուսցուք ՚ի վերայ պիտոյից այսոցիկ։ Իսկ մեք աղօթից և պաշտաման և բանին հպատակ լիցուք։ Իսկ հաճոյ թուեցաւ առաջի ամենայն բազմութեանն. և ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատով և Հոգւով սրբով, և զայլսն. ձեռնադրեցին առաքեալքն զնոսա ՚ի պէտս այսորիկ։ Վասն որոյ՝ յորժամ պատարագէր Պետրոս՝ Ստեփաննոսի հարկ էր բերել զպատրն և զհացն առաջի նորա. յանձնայ և ծածկել.

մաքրել և պահել . և ինքն միայն զաղօթսն կատարէր 'ի վերայ : Նմանապէս և սա զնորա գործ կատարէ զպատրաստութեանն , և քահանայն զպատարագին միայն զաղօթսն և շնորհութիւնն :

Երկրորդ՝ քահանայն պատմէ առ աստուած 'ի ժողովրդենէն : Իսկ սարկաւագն զնուէրն և զընծայն բերէ ընդ նմա զ'ի նոցանէ առաքեալըն : Քանզի անմարթ է պատգամաւորի իւրովի առնել զընծայսն և խօսիլ զբանսն . որպէս և մարդկան այս է սովորութիւն . այլ նա միայն զհրեշտակութիւն բանիցն առնէ . իսկ սա ըզնուէրսն բերէ մինչև 'ի նա : Եւ նա առեալ ինքնին քահանայն՝ դնէ առաջի աստուծոյ 'ի սեղանն :

Գրդ՝ է սարկաւագն պաշտօնէից տէրունական սեղանոյն և նորին սպասուցն : Իսկ կիսասարկաւագն՝ քահանային և նորին զգեստուցն . վասն այսորիկ ոչ է պարտ սորա համարձակիլ յամենայն տէրունեան և ձեռնիլ :

Նաև ոչ քահանային՝ որ աղօթիցն է հպատակ՝ պարտ է 'ի գործ ձեռնարկել : Եւ հպատակութիւն սպասաւորութեան մարմնական նըրշանակացն կատարէ սարկաւագն առընթեր նորին համարձակաբար . զծածկելըն և զբանալըն . զածելըն և զտանիլըն . և զորս 'ի նոյնս յարին գործս : Իսկ մեկնութիւն սաղմոսին՝ տեսեալ զվերնագիր սաղմոսին՝ բաւական համարիմ 'ի յայտնել զզօրութիւն նորին իմաստոցդ . և

առանց քննութեանն․ զի գրեալ է ։ Օրհնութիւն գովութեան ինքեան դաւթի՝ յաւուր միաշաբաթու, յորում՝ երկիր հաստատեցաւ ։ Քանզի ահա տեսանեմք զհաստատութիւն երկրի, զոր ՚ի քրիստոսէ ընկալաւ շնորհօք մարդեղութեան նորին ։ Ապա եթէ վասն առաջին արարչութեանն էր օրհնութիւն, ո՛չ ասէր հաստատութիւն երբ դղրդեցելոյ ․ եթէ հաստատեալ զաշխարհս զի մի՛ սասանեսցի ․ այլ ստեղծուած և գոյացի ։ Ուրեմն յայտ է թէ այն ստեղծեալ երկիրն և բնակիչք նորա ՚ի մեղացն ադամայ անիծեալ և դղրդեալ եղեն․ այսօր ՚ի նոր ադամն քրիստոս օրհնեցան և հաստատեցան ։ Սակս որոյ և մարգարէս շնորհակալ և գովասան և ներբողիչ լինի նմա օրհնութեամբ երգոյս ասելով ․ Տէր թագաւորեաց և այլն ։ Իսկ քահանային խնկելն՝ զայս յայտ առնէ․ վասն զի՝ խունկն զգալի անուշահոտութիւն է ․ որպէս և աղօթքն՝ իմանալի ։ Արդ ո՛չ բաւական համարի զիմանալի աղօթսն մատուցանել ․ այլ և զգալի խունկն ։

Վասն զի ոչ միայն հոգի իմանալի ունիմք , այլ և մարմին զգալի ․ վասն որոյ զերկոցունցըն առնեմք զօրհնանս ․ զոր և աղօթքն յայտ առնէ՝ որ ասէ ։

## Աղօթք ։

Խունկ մատուցանեմք առաջի քո քրիստոս՝
բուրումն հոգեւորական ։ ”
Ընկալինքն ընդ զգալի խնկոցն և զհոգւոյս ծուխ
արծարծմամբ սիրոյ կայծականց աղօթիւք
նուիրեմ քեզ ։
,, Ընծայել 'ի սուրբ յերկնային և յիմանալի քո
մատուցարանդ 'ի հոտ անուշից ։ ”
Երկնային մատուցարան՝ նոյն ինքն է Յիսուս.
յոր վերառաքեմք զաղօթս մեր ։
,, Առաքեա՛ առ մեզ փոխարէն զշնորհս և ըզ_
պարգևս հոգւոյդ սրբոյ ։ ”
Եւ զի այսմ եմք կարօտք՝ զի զհոգիդ սուրբ
տացես մեզ գործակից ։ Եւ քեզ մատուցա_
նեմք փառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
ամէն ։

Եւ ապա ժամանակին իջանէ նոյնս հանդերձ 'ի մէջ եկեղե_
ցւոյն. և ծխէ ամենայն շրջան եկեղեցւոյն մինչև ցդրունս ժողո_
վրդեան . և դարձեալ առնէ շուրջ խնկոցն , մինչև
ժամանակն դառնայ 'ի խորանն ։

## Մեկնութիւն ։

Խունկն խորանին՝ որ է սրբութիւն սրբոց՝ է
երկինք երկնից և տեղի աստուծոյ . իսկ տա_
ճարն՝ երկնից հաւասար . և ժողովուրդն՝ որ

'ի նմա, հաւատար հրեշտակաց ։ Եւ քահանայ-
ին խնկելն շուրջ զսեղանովն, և անոր իջանելն
և ժողովրդեանն խնկելն և դարձեալ 'ի նոյնն
դառնալն՝ զայն նշանակէ. քանզի քահանայն
պատկեր է քրիստոսի. և թէպէտ բարձրա-
գոյն է երանութիւն որդւոյն աստուծոյ, սա-
կայն եկն և էջ առ մեր նուաստ բնութիւնս
առնլով զմերս զամենայն բայց 'ի մեղաց ։ Եւ
դարձեալ համբարձաւ յիւրն սեպհական աթ-
ոռն 'ի ծոցն հայրական ։

Այնպէս և քահանայապետս քրիստոսի նմանե-
լով՝ եկն և էանց ընդ ամենեսեան. մինչև զի
յետնոյն հաւատացեալ. և ապա դառնայ և
գնայ և մտանէ յիւրն տեղի 'ի խորանն սուրբ ։
Իսկ խունկն զնախախնամական զօրութիւնն
քրիստոսի յայտ առնէ. որ անտուստ 'ի վերուստ
'ի սեղանոյն գայ և անցանէ ընդ ամենեսեան
խնամելով զամենայն արարածս ։ Սակայն դար-
ձեալ անհաս մնայ յամենեցունց. և ինքեան
միայն հասանելի ։ Այնպէս և խնկարկութիւնն
'ի սեղանոյն եկեալ՝ դարձեալ առ սեղանն
ընթացաւ ։ Նաև և այսու օրինակաւ զիւրն
ներգործութիւն ցուցանէ. Քանզի որպէս քա-
հանայապետն զձեռնադրութեան շնորհս և
զքահանայութիւն և զքարոզութիւն և զվար-
դապետութիւն աննախանձաբար բաշխէ ամե-
նեցուն. որպէս և խնկարկութեամբն եցոյց.
դարձեալ և ինքն անբաժանելի մնայ 'ի նուաստ
ինչ փառաց և 'ի գործոց. այլ միայն յիւրն

սեպհական տեղի առ աստուած ունի զմտացն դիտաւորութիւն :

Այսպէս և խորհուրդ սուրբ պատարագիս. զի թէպէտ ամենեքեան հաղորդիմք սմա. և սրբբիմք 'ի սմանէ. բայց կայ և մնայ յիւր անհասութեանն. և միայն հոգւոյն սրբոյ է առ իմանալի :

Եւ ապա իջանէ սարկաւագն 'ի դէմ եկեղեցւոյն. և ձայնէ 'ի խորանն առ քահանայն ասելով. Օրհնեա՛ Տէր : Եւ Քահանայն ասէ . Օրհնեալ Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս :

## Մեկնութիւն :

Որպէս եցոյց բանն՝ զի քահանայապետն նման է Քրիստոսի : Արդ որպէս Քրիստոս՝ թէպէտ ինքն կամի զբարեխօսել վասն մեր, սակայն կամի՝ զի և մեք աղերսեսցուք զինքն. նոյնպէս և սա յօրինակ Քրիստոսի եմուտ յերկինս. որպէս 'ի խորանն սուրբ առաջի աստուծոյ բարեխօսել վասն ժողովրդեանն. վասն որոյ անկ է նոցա զի աղաչեսցեն զքահանայն, զի մաղթեսցէ վասն նոցա : Եւ սարկաւագն՝ որ վարդապետ է ժողովրդեանն և միջնորդ նոցա առ քահանայն, իբր բերանով ամենայն ժողովրդեանն ձայնէ առ նա, իբր յերկրէ յերկինս, 'ի տաճարէն առ քահանայն. Օրհնեա՛ տէր. այսինքն՝ դու ես տէր մեր փոխանակ Քրիստոսի.

Արդ օրհնեա՛ և մատո՛ զաղաչանս մեր առաջի աստուածութեան։ Եւ նա ասէ. Օրհնեալ թագաւորու"։ Այսմ մեծամեծ խորհրդոյ հանդերձեալ է խնդի՛ր առնել. վասն այսորիկ օրհնէ գոհանալով զառեալ պարգևայն. զի զայլս ևս տացէ։

Եւ ապա ծածկանեն ըստ առաջ խորհրդոյն։ Եւ 'ի կատարելն [illegible] [illegible]. Եւ նա խաղաղու"։ Եւ քահանայն ասէ զաղօթս զայս։

Տէ՛ր աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է. և փառքդ անհասանելի։ Որոյ ողորմութիւնդ անչափ է. և գթութիւնդ անբաւ։" Իբրև զորդի համարձակ պատմէ զանքննելի և զանհասանելի կարողութիւն փառացն աստուծոյ և զանբաւ և զանչափ ողորմութիւն գթութեան նորա։

" Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեա՛ց 'ի ժողովուրդս քո և 'ի տաճարս յայս սուրբ։ Եւ արա՛ ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո և զգթութիւն։"

Զի քահանայն հայր է ժողովրդեանն. աղօթէ առ աստուած մարդասիրապէս խնամօք հայել 'ի նոսա. և ինքեան իսկ՝ և աղօթակից ժողովրդեանն հայցէ առնել ողորմութի՛ իւր։

" Զի քեզ վայել է փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա"։"

Այս շինի սորին տունն սուրբ և քարաշէն ընդ աւուր
խաչհրբողին: Այս յաջորդն առանց կիչ 'ի Բաղեշոյ կա-
ցեալ 'ի սեղանոյն՝ առ 'ի ծածուկ պաշտօն:

Միջնորդութիւն Աղօթից:

„ Տէր աստուած մեր՝ կեցո՛ զժողովուրդս քո.
և օրհնեա՛ զժառանգութիւնս քո:"

Ժողովուրդ մեք անուանիմք Քրիստոսի սեպհա-
կան՝ գնեալք արեամբ նորա. ըստ որում ասէ
պօղոս առ Երիցունս Եփեսացւոց: Զգոյշ լե-
րուք հօտից՝ յորում եդ զձեզ հոգին սուրբ,
հովուել զժողովուրդ տեառն. զոր գնեաց ա-
րեամբն իւրով: Արդ՝ զի այսպէս զգոյշ կալ
հրամայեաց տէրն, և 'ի նոյն ինքն 'ի Քրիստոսէ ա-
ղերսեն զպահպանութիւն. որոյ և ժառանգու-
թեան վիճակի հօտս:

„ Զօրութիւն եկեղեցւոյ քո պահեա՛:"

Այսինքն թէ՝ մի՛ զրկեսցի ոք 'ի բաշխութենէ
մերոյ ժողովոյս, յափշտակել 'ի սատանայէ.
այլ պահեա՛ անվրդով:

„ Սրբեա՛ զնոսա՝ որք ողջունեցին սիրով ըզ-
վայելչութիւն տան քո:"

Քահանայն 'ի պէտս սրբելոյ ժողովոյս աստա-
պաւինեալ յօձաւս աղօթից մերոյ՝ աղաչէ ա-
սելով. Արդ դու որպէս ամենակարողական հօ-
տի՝ սրբեա՛ զնոսա ըստ հաւատոյ նոցա և ա-
ռաւել քան զնոյնս:

„ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային
զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեա-

ըս ՚ի քեզ ։''

Զի քեզ ապաւինեալ յուսամք. և դու ես կա-
րապետ փրկութեան մերոյ. զաղքատացեալս
հարստացո՛ աստուածեղէն առատ կամօքդ. և
մի՛ առներ անտես որպէս բազումողորմ ։ Զի
քո՛ է կարողութիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս ամէն։

Յաղաղաղութեան ամենեցուն։

,, Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամէ-
նեցուն ուսուցեր աղօթել ։ Եւ զերկուց և
զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս
պարգևել խոստացար ։''

Պարզաբար զհրամանան քրիստոսի՝ նմին յուշ-
ածէ զաստուածային. եթէ երկու ՚ի ձէնջ միա-
բանեսցին՝ զոր ինչ խնդրեսցեն, եղիցի նոցա ։
Եւ դարձեալ՝ ուր իցեն երկու կամ երեք
յանուն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա ։ Արդ
զժողովելս և զաղօթելս՝ ՚ի քէն ուսաք. և ոչ
եթէ անձամբ անձին ժպրհիմք մարդկայս ընդ ա̅ծ
խօսիլ. այլ զի լուաք ասացեալ թէ զոր ինչ
խնդրիցէք, եղիցի ձեզ ։

,, Դու տէր և այժմ զծառայից քոց զխնդր-
ուածս առ ՚ի յօգուտ կատարեա՛ ։''

՚Ի քէն խնդրեմք՝ որ զխնդրելս ուսուցեր. վա-
յելուչ է և քեզ զքո խոստումն կատարել.
որպէս և դու քննես զօգուտն մեր ։

,, Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգի-

տութիւն քոյդ ճշմարտութեան. և 'ի հան-
դերձեալն ցկեանսն յաւիտենականսն պար-
գևելով :"

Ըստ այնմ կարօտիմք՝ թէ զկամս աստուծոյ
գիտիցեմք. և 'ի ճանապարհս վկայութեց նո-
րա ընթասցեմք իմաստունք՝ զոր և խնդրէ. քանզի
այնոքիկ են՝ որք առաջնորդեն մեզ տանել 'ի
յաւիտենական կեանն :

" Ո՜վ բարերար և մարդասէր ես աստ-
ուած. և քեզ վայել է փառք և" :"

Եւ 'ի միջի տան շարականին երկեալ առաջի խնկին՝ եր-
կրպագանեն երկու. և յաճախոնց առէ զաղօթս զայս :

Տէր աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս
զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և
հրեշտակապետաց 'ի սպասաւորութի փառաց
քոց, արա արժանի այժմ ընդ մուտս մեր մտա-
նել և սրբոց հրեշտակաց. և լինել պաշտօնա-
կից մեզ և փառաբանակից քում բարերա-
րութեանդ :"

Այս ինչ է զօրութիւն բանին. թէ որպէս
յերկինս իմանալեացն դասք քեզ սպասաւո-
րեն. այսպէս և աստ յեկեղեցւոջ, որ է եր-
կին 'ի վերայ երկրի՝ նոյն պաշտօն քո և մեզ
կցորդեսցին :

'Ի նոյն:

„ Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս:”

Ապա համբուրեն զսեղանն. և յաւարտման շարականին գոչեսցէ սարկաւագն երիցս յայնիւ. Պռօսխումէ. և բարձրացուցանէ զաւետարանն սուրբ. և ժողովուրդն երգեն յայնիւ զերեքսրբեանն ասելով:

ՍՈՒՐԲ աստուած. Սուրբ և հզօր. Սուրբ և անմահ՝ որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ:

Ընթերցուած առաքելոյ:

Երգ շարականաց և քաղցրանուագ ձայն սաղմոսաց զայս ունէին խորհուրդ: Քանզի ամենայն ժողովուրդքն 'ի հոգս և 'ի զբաղմունս աշխարհիս խռովեալ՝ եկին և մտին յեկեղեցին. ոմն յիշխանական հոգւոյ. այլ ոմն 'ի դատաստանական ատենէ. կէսք յաշխատութեանց մարմնոյ. և այլք 'ի զանազան արհեստից. և ամենեքեան հաւաքեալ 'ի միասին 'ի սուրբ եկեղեցին. բայց դեռ ևս անբովանդակ կան: Վասն որոյ՝ նախ հեշտալուր երգք սաղմոսաց և շարականաց քաղցրացուցանեն զլսելիս ժողովրդեանն, զի մաքրեսցին 'ի մտաց նոցա մարմնական հոգքն. և երգովքն միասցին առ Ած,

Եւ երբ եւ զայս այսպէս աւարտի, սարկաւագն ընդ ատուցանողական ձայնիւ գոչէ. Պռօսխումէ. այսինքն՝ ուշեղ 'ի վեր հայեցէք. եւ ընդ բանիւն զաւետարանն վերացուցանէ 'ի տեսութիւն նոցա.

Իսկ ժողովուրդքն ընդ ատեալ 'ի ձայնէ սարկաւագին եւ 'ի վեր հայեցեալ տեսանեն զաւետարանն, որ է պատմիչ տնօրէնութեանն քրիստոսի. այլ եւ զնոսա ածեն զայն՝ զոր նախ քահանայապետն խուրեանց՝ որ էր բարձրագոյն պատուով քան զամենեսեան ըստ նմանութե՛ քրիստոսի, ո՛չ ինչ յամօթ համարեցաւ զիջանել յիւրն բարձրագոյն տեղւոյ. եւ զզալն եւ զլինիլն երբեւ զմի 'ի ժողովրդենէն. զի նուաստացեալ՝ առ դուռն եկն. եւ ապա դարձեալ ըստ նմանութեան քրիստոսի բարձրացեալ քան զամենեսեան՝ եմուտ 'ի բեմն. որպէս եւ քրիստոս առ հայր 'ի ներքին կողմն վարագուրին:

Զայս ամենայն տեսեալ լրումն եկեղեցւոյն՝ 'ի նմանութիւն երկնաւորաց եւ սանդարամետականաց խոստովանի զտէր յիսուս քրիստոս 'ի փառս աստուծոյ հօր ասելով. Սուրբ աստուած՝ Սուրբ եւ": Որպէս թէ՝ զայս կամի ասել. Դու՛ քրիստոս աստուած մեր՝ որ նման քեզ ձեւացաւ քահանայապետս այս. թէպէտ եւ դու սուրբ եւ հզօր եւ անմահ ես, սակայն ո՛չ միայն բաւական համարեցար զմարդ լինիլն եւ զհաւատարիլն մեզ, այլ եւ զանարգ եւ զյետին մահն ընկալար վասն մեր, որ է խաչն. վասն այն-

քան անպատմելի խոնարհութեանդ ողորմեա՛ մեզ ։

Յետ երգոյն համհանայն ժողովրդեանն սրբասացութեան աղօթս աղօթէ քահանայն առ՝ յորժամ երգեն զսուրբ սրբասացեն։

Մեկնութիւն աղօթիցս ։

„ Աստուած սուրբ՝ որ 'ի սուրբս հանգուցեալ ես. և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ, և քերովբէք փառաբանեն. և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիրպագանեն։"

Զտեսութի մարգարէիցն Եսայեայ և Եզեկիէլի աստ յիշէ ։

„ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և նմանութեան. և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն։"

"Քանզի զդրախտն ամենապատիկ ծառովքն զիմաստութիւն առնէ. յոր եդաւ մարդն քըննել զնա և պահել. զոր աստ խնդրել ասաց։

„ Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն. այլ եդեր 'ի վերայ նորա ապաշխարութիւն փըրկութեան։"

Եւ յետ յանցանացն՝ ապաշխարութեան արժանացուցեր զնա ։

„ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ

և զանարժան ծառայս քո 'ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ. և զօրհնաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ :"

Ի քէն ասէ տուաւ մեզ այս զգաստութիւն աղօթիցս. որ զնախատացեալ շնորհս առարեր մարդկան :

Դու տէր ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս. և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբդ. թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ. զգիտութեան և զանգիտութեան. սրբեա զհոգի ըզմիտս և զմարմինս մեր. և շնորհեա 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց :"

Պարտ է բանս. քանզի յընդունելի աղօթիցն հայցէ զթողութիւն մեղաց. այլ և սուրբ վարուք սպասաւորել նմա հանապազ :

" Բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին և ամենայն սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան. զի սուրբ ես տէր աստուած մեր.

Աշտամկից և բարեխօս առ քրիստոս են ամենայն սուրբքն. և մանաւանդ Տիրամայրն՝ զոր 'ի մէջ առնու.

" Զի քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :"

Եւ կատարին աղօթքն և երեքսրբեանն 'ի դասին. և սարկաւագն ասէ :

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք :
Ժողովուրդքն՝ տէ՛ր ողորմեա :
Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. և ամենեցուն օրհներգութեան՝ զտէր աղաչեսցուք :
Վասն ամենայն քաղաքաց և գաւառաց. և որոց հաւատով բնակեալ են 'ի նոսա՝ զտէր" :
Վասն հայրապետին մերոյ կենաց և փրկութեան հոգւոյ նորին՝ զտէր" :
Վասն պատուական քահանայից և որոց 'ի քրիստոս սարկաւագաց. և ժառանգաւորաց եկեղեցւոյ՝ զտէր" :
Վասն բարեպաշտ և աստուածապահ թագաւորին և մեր պալատան և ամենայն զինուորացն՝ զտէր" : Զամենասրբուհի աստուածածինն և զամենօրհնեալ տիրուհին և զմիշտ կոյսն մարիամ յիշեսցուք. և զամենայն սուրբս. և նոքօք՝ զտէր" : Եւ ևս միա" :

Ապա 'ի դասին սկսանին՝ սարկաւագն 'ի մէջ եկեղեցւոյ զքարոզն. և զոյգ ընդ նմա քահանայն 'ի խորանն ասէ՝ զաղօթսն :

Տէ՛ր որ կարծեցաք փառաւոր և կամ պաշտելութեան փոխան զաւհամն գոյգ միմեանց լինելոյ քահանայութեան սարկաւագին և պաշ

թից քահանային. և իրաւունս դատեսցի միոյն լսել, մինչև յաւարտել միւսոյն. այնինքն քա-հանային՝ մինչև սարկաւագն լսէ կացեալ. և ապա սկսանիլ ։ Այլ պարտ է գիտել թէ զուգընթաց միմեանց լինելոյ աղագաւ սահ-մանեցաւ ։ Վասնզի նոյն է խորհրդոյն զօրուի. զի զոր ինչ քահանայն խորհրդաբար խնդրէ, զնոյն և սարկաւագն ժողովրդեանն բարձրա-ձայն հրամայէ աղաչել ։ Վասն այսորիկ՝ հա-մաձայն նոցա պարտ է լինել միմեանց. որպէս զի ցուցցեն ժողովուրդքն մյ ըստ հրամանի գաստիարակի սարկաւագին աղաչելով՝ եթէ զոյգ է մեր իղձք կամաց ընդ քահանայիդ. որ եմուտ մեր ամենեցուն փոխանակ առաջի քո ։ Իսկ թէպէտ աղայք եմք յիմաստից և ոչ կա-րեմք այդպէս հրեշտակաւոր աղաչել զքեզ. սակայն զտէր ողորմեայս ձայնելով թախան-ձեմք. զի դու ողորմած կամօք տացես զխնդիր-սրս. զորս խորհրդապէս մաղթէ քահանայդ. և սարկաւագին յորդորելն վարդապետութե քարոզութեանն զնոսա՝ ՚ի սոյնս հայի ։ Ապա ամենայն իրօք պարտ է գիտել թէ՝ ամենայն քարոզից զանազանութիւն առ այս հային խոր-հուրդ. զի ատխպուածն ժողովրդեանն՝ վասն լի-նելոյ աղօթակից քահանային է. զի զոյգ մի-մեանց պարտին աղօթել և ՚ի միասին աւար-տել. քահանային ծածուկ խօսելով, իսկ նոցա միաձայն և յայտնի ։

Մ՚եկնութիւն քարոզութեան առաքելոյն ։

՚Քահանայապետն յօրինակ քրիստոսի եմուտ
՚ի ներքին խորանն վարագուրին բարեխօսել բո_
լորեցունց ։ Իսկ առաքեալն ՚ի նմանութիւն
սերովբէիցն · զի որպէս նոքա անընդմիջաբար
գիտողք են կամացն աստուծոյ, այսպէս և առա_
քեալն գիտէ զկամս քահանային ։
Վասն որոյ գայ առ ժողովուրդն և խորհրդա_
գրած ասէ զնոսա թէ քահանայապետն եմուտ
առաջի աստուծոյ բարեխօսել վասն ձեր ·
պարտիք և դուք նմա աղօթակից լինել · և
թէ զի՞նչ և կամ որպէս պարտ է աղօթել
ուսուցանէ ։ Եւ ևս խաղաղութեան ։
Զխաղաղութիւնն զայն՝ զոր տէրն ասաց թո_
ղուլ առաքելոցն, որ է հոգին սուրբ · զայն
հրամայէ ժողովրդեանն հայցել ՚ի տեառնէ ;
Եւ զայս ոչ վասն միոյ անձին և եթ · այլ և
վասն ամենայն աշխարհի և գաւառի՝ որք զեր_
կիւղ տեառն ունիցին ։ Եւ ապա ՚ի քահանա_
յապետէն սկսանի մինչև ՚ի թագաւորն · և ՚ի
դասս զինուորականացն աւարտէ ։ Այլ և զաւի_
րամայրն և զամենայն սուրբս յիշել · և նոցա
զոհեր աղերսել ։ Դարձեալ՝ միաբան ասէ վա_
սն սուրբ և ուղղափառադաւան քրիստոնէ_
ական հաւատոյս խնդրել զողորմութի · և ան_
կեղծ սիրով ՚ի վերայ միմեանց աղօթել · և ա_
մենակալ տեառն յանձն առնել · և ՚ի վերայ
ամենայնի զմեծ զողորմութիւն ՚ի յողորմած

տեառնէն հայցել:

Իսկ մինչ արքունականն նուէրն չէ եկեալ, հանդարտաբար ի ծածուկ շաբաթու պայս:

Տէր աստուած մեր՝ զբազմապատիկ զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեա՛ ՚ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ՚ի քէն առատ ողորմութեանց:

,, Զի ողորմած և մարդասէր ես՝ աստուած գոլով. և քեզ վայել'':''

Պարզ է բանս. և ոչ է կարօտ մեկնութեան:

Յետ այսորիկ երկրպագէ սեղանոյն սահմանայն. և էջեալ բեմէն յատեանն. և արքունականն փառ ի յիշեալ նորա պաշտօնեայն: Իսկ վարդապետն խնկարկէ ի ծունկս նորա և առնու:

## Մեկնութիւն:

Քահանայապետութիւն յաթոռն բազմելն զայն յայտ առնէ. վասն զի՝ նմանն քրիստոսի եմուտ բարեխօսել վասն ժողովրդեանն: Իսկ յորժամ աւարտէ զայս զոյգ աղօթս սրբառայութեանն. համբուրէ զսեղանն և նստի յաթոռն. որպէս թէ զայս ասէ առ ժողովուրդն. թէ այս պատիւս և աստուածավայելուչ փառս զորս ձեւացայ այժմ և նստիմ յաթոռս, ոչ

է իմ աւպհական՝ այլ վերջին քրիստոսի, որ
է աստուած բոլորեցունց. իսկ ես միայն պաշ-
տօնեայ և սպասաւոր եմ նմա։ Արդ՝ որք
աւանդէք զպատգամս նորա ՚ի գիրս իմ, այս-
ինքն զաւետարանն՝ զնոյն ինքն զտէրն ձեր ատ-
վաւ ասէք բազմեալ յաթոռն իւր. և մի՛
զիս զծառայս նորա։

Նա շնչի սուրբն առաջնորդութեան երգէ զտաղերգուն. և ըն-
թերցողն ընթերցանու նախ աշխարհաբառականն. և ապա գրա-
բառականն։

## Մեկնութիւն։

Ընթերցմունք աստուածայունց գրոց ՚ի
խրատ վարդապետութեան և ՚ի յորդորումն
բարեաց են ժողովրդեանն. այլ և նախադրու-
շակ և վկայ աւետան տնօրէնութեան. Վասն
որոյ նախ մարգարէականացն է ընթերցումն.
և ապա առաքելականացն. զի ցուցցէ թէ մի
դիտաւորութիւն է սոցա և նոցա. քանզի զոր
մարգարէքն նախ գուշակեցին. որում և ա-
ռաքեալքն ականատես եղեն։

Եւ յետ ընթերցուածոյ գայ փոխեալ սաղմոսերգութեան յա-
ւագ. և ասացեալ ալէլուիայ. և ՚ի նմանէ առնու ամենայն
եկեղեցին. և երկրորդէ զնոյն երգասացն զալէլուիայն. և
ասացեալ սաղմոսերգուն զաղօթան առաջի երգասացին մինչև ցա-
ւարտ փոխին. և եկեղեցին երկրորդէ զնոյն նախասաց ալէ-
լուիայն:

## Մեկնութիւն:

Ալէլուիայն՝ օրհնեցէք զաստուած թարգմա-
նի. և է սա երգ հրեշտակաց. զոր այժմ ամե-
նայն լրումն եկեղեցւոյն մի առ մի փոխանոր-
դեալ՝ երգեն քաղցր եղանակաւ նախ քան զըն-
թերցումն աւետարանին: Քանզի հանդեր-
ձեալ է աստուած խօսիլ. վասն որոյ մարդիկ
հրեշտակացեալ մատուցանեն նմա զօրհներ-
գութիւն հրեշտակացն: Եւ միայնակ ասելն
սաղմոսերգողին զմեսեդի առաքելոյն, և զալէ-
լուիայ աւետարանին՝ զայս նշանակէ: Արդ՝
որպէս սարկաւագն վարդապետութեամբ քա-
րոզութեանն զիւրն աստիճանի առանձնաւո-
րութիւն եցոյց. նոյնպէս և սաղմոսերգուն զիւրն
գործ կատարէ երգելովն. և ընթերցողն ընթե-
րցմամբն: Իսկ եթէ ամենեքեան զուգակցին նմա
յերգելն, անկարգութիւն առնէ. և ոչ որոշ
առանձնականութիւն պատուոյն: Արդ պարտ է
զի որպէս սարկաւագն միայն զքարոզութիւնն
առայ ժողովրդեանն. և ընթերցողն՝ զընթերցո-
ւթիւնն. այսպէս և սաղմոսերգուն զաղ-

մտաբերութիւնն և զպայծառութիւնս. և արդ 'ի նմանէ հրամանաւ նորին և առաջնորդութե՛ սփռել յամենայն լրումն եկեղեցւոյն. զի կա-րասցուք պահել զհրամանսն. ամենայն ինչ ձեր առ բարեձեւութեամբ և ըստ կարգի լինիցի. և ըստ եկեղեցւոյն աստուծոյ:

Յայնժամ սարկաւագն առնու զաւետարանն [illegible] և [illegible] 'ի [illegible]. և 'ի կա-[illegible]:

Ոթիւ. որ թարգմանի ունկն դիք. կամ յոտն կացէք:

Եւ քահանայն դառնայ 'ի խորանէն առ ժողովուրդն. և խաչակնքէ ասելով:

Խաղաղութիւն ընդ ամենեսեան:
Որպէս թէ նախ զայս հայցէր ժողովուրդն զն ևս առաւելապէս առնել զխաղաղութիւն. զոր այժմ քահանայն աւետէ յաստուծոյ առ ժողովրդեանն. և ժողովուրդն. Եւ ընդ հոգ-ւոյդ քում: Որպէս թէ ասէ. Խաղաղութիւնդ՝ զոր ետուր մեզ, և հոգւոյդ քում եղիցի: Սարկաւագն. Երկիրպագութեամբ լուարուք: Եւ քահանայն. կամ սարկաւագն. :: Սրբոյ աւետարանիս որ ըստ մատթէոսի կամ ըստ այլոցն:
Յայտ առնէ այսու ձայնիւ թէ աստուծոյ է

բարբառ և ոչ մարդոյ. վասն որոյ երկիւղիւ մեծաւ և դողութեամբ ամէն լուարուք աստուածային պատգամացս:

Ժողովուրդն. , , Փառք քեզ տէր աստուած մեր: Երբ թէ չիցեալ ընդ մեծութիւն իւրին փառս տան աստուծոյ. որ արժանացոյց զհողանիւթս խօսիլ ինքեան ընդ մեզ: Սարկաւագն. Պռօսխումէ: Ժողովուրդն. Սոէ օթէօս: Երբ սարկաւագն զգուշացուցանողական բարբառովն ամենայն ժողովրդեանն հրամայէ պատրաստական լինիլ աստուածային բանիցն պատմութեանց: Իսկ նոքա յանձնառական ձայնիւ պատասխանեն. Սոէ օթէօս. Այսինքն թէ զգուշացաք և պատրաստ եմք. թող խօսի աստուած. քանզի մերձ եմք 'ի լսել:

Ս. ընթերցուած աւետարանին:

Ուսուցանէ աւետարանի ընթերցումն թէ՝ որքան առատ է և անչափ սէրն հօր առ մարդիկ: Զի ետ ոչ միայն զխաղաղութիւնն, այլ և զմիածինն իւր պէսպէս տնօրէնութեամբքն. որ է մարդեղութիւնն, բանք վարդապետութեան, գործք սքանչելեացն, և 'ի վերայ ամենայնի խաչն և թաղումն և յարութիւնն. զայս ամենայն երախտիս պատմէ աւետարանն: Զորս լուեալ ամենայն ժողովրդեանն և հիացեալ փառս տան աստուծոյ ասելով. Փառք քեզ տէ՛ր:

Եւ ապա շնչիւնականն դառնայ ՚ի լման:

## Մեկնութիւն:

Զմեկնութիւն նիկիականն դաւանութեան,
զոր խոստովանին այժմ ամենայն լուսմն եկե-
ղեցւոյս՝ թէպէտ ոչ եղաք բան առ բան, սա-
կայն ըստ կարի մերում ասասցուք համառօտ
զզօրութիւն նորա: Արդ սկիզբն և աւարտ
ամենայն բարեաց է ճշմարտութիւն հաւա-
տոյն: Վասն այսորիկ ապա որք հանդերձեալ
են զայս սարսափելի խորհուրդս կատարել և
հաղորդ լինել, սմա նախ զխոստովանութիւն
ուղիղ հաւատոյն դաւանեն. և ապա արժա-
նաւորին այսմ աստուածային խորհրդածու-
թեանս. Եթէ որպիսի օրինակաւ պարտ է
ունել զդաւանութիւնն՝ ասասցուք: Արդ՝
հաւատալ արժան է իմացական մտօք զաստ-
ուած անեղ իմանալ, և սկիզբն եղելոցս: Ո-
րոյ բնութեան ոչինչ է նման և կամ օրինակ
յեղելոցս: Բայց է օրինակ մեր բանական հո-
գիս որ է պատկեր աստուծոյ. այլ որպէս ան-
շունչ պատկերն որոշեալ է ՚ի կենդանւոյն.
վասն զի զձեւն միայն ունի և ոչ զզօրութի,
այսպէս և մեր բանական հոգիս յատկութեան
անձնաւորութեանն նորա միայն է նման, և ոչ
բնութեանն: Արդ՝ որպէս է մեր բանական
հոգին պարզ և անմահ և անապական, և ծնա-

նի ՚ի նոյն բանական հոգւոյն առանց ախտի բան․
կամ՝ բարի և կամ՝ չար․ և բանն, որ ծնեալ ՚ի
հոգւոյն՝ որոշեալ անձնաւորի․ և այլ է ուի̄
ամենայն իրօք քան զհոգին աւեանի․ քանզի
զատեալ է ՚ի նմանէ իբրև զծնունդ․ և դար-
ձեալ ՚ի նմա է՝ իբրև զհամաբնութիւն։ Նմա-
պէս իմն և զաստուածն բան, և զ՚ի հօրէ
անախտ ծնունդն նորա․ զի զատեալ անձնա-
ւորեալ է ՚ի նմանէ․ զի ծնունդ է նորա․ և
դարձեալ միաւոր է անխառն և անշփոթ․
քանզի բնութենակից է նորին․ որպէս վկայէ
յովհաննէս ասելով․ ՚Ի սկզբանէ էր բանն․ և
բանն էր առ աստուած․ և աստուած էր բանն։
Դարձեալ՝ բանն, որ անձնաւորի ՚ի հոգւոյն
կամօք նորին՝ արտաքս բղխէ և ելանէ ընդ բե-
րանն, զոր խօսք անուանեմք․ և կամ թէ գը-
րով ձևացուցանեմք։ Եւ երբեմն արտաքս բե-
րեալ խօսքն՝ որ էլ ընդ բերանն՝ այլ իմն անձն
զնա́ ՚ի հոգւոյն և ՚ի ծնեալ բանէն․ քանզի
խօսք բերանոյն նմա́ն է բանական հոգւոյն, և
ծննդեան նորա ստոյն բանին․ սակայն այլ իմն
անձն է որոշեալ ՚ի նոցանէ․ և է՛ առ նոսա իբ-
րև զբղխումն։ Նմապէս և հոգին սուրբ բղխ-
խումն ՚ի հօրէ․ և առեալ յորդւոյ անշփոթ
և անխառն․ անձնաւորեալ ՚ի նոցունց՝ անբա-
ժանելի է ՚ի հօրէ և յորդւոյ․ զի բնութե-
նակից է․ և զատեալ անձնաւորեալ է․ վասն
զի բղխումն է սուրբ հոգին։ Եւ այսու օրի-
նակաւ պա́րտ է խոստովանիլ զերկրպագելի

սուրբ Երրորդութիւնն. Հայր՝ և Ծնունդ՝ և
Բղխումն։ անձնք երեք։ Եւ աստուածութիւն՝
և բնութիւն՝ և էութիւն՝ և զօրութիւն՝ և
կամք և անեղութիւն՝ և անսկզբնութիւն և
այլ ա՟մ. Մի։ Բայց յոյժ զանազանեալ է.
և հեռի՛ է օրինակս՝ զոր եդաք, ՚ի սկզբնատպէն
աստուծոյ. զի աստուծոյ բանն՝ և բղխումն՝ ան-
ժամանակ է. և անանցաւոր. և անցնդելի. և
առ Հայր է անաղաւաղելի։ Իսկ մերս ժամանա-
կաւ. և անցանի և ցնդի յօդս և աղաւաղի։ Իսկ
զբանին աստուծոյ մարդեղութիւնն այսպէս
հաւատացեալ իմանամք։ Զի կամօքն ա՟յ Հօր՝
նախ Հոգին սուրբ մաքրեաց զկոյսն ՚ի մարդկա-
յին ախտիցն ըստ բանի հրեշտակին՝ զոր ասաց.
Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ. և Թէ Որ ՚ի
նմայն ծնեալ է՝ ՚ի հոգւոյն սրբոյ է։ Վասնզի՝
Թէպէտ և է՛ սուրբ ամենամաքուր կոյսն. սա-
կայն՝ կրէր ինչ և ՚ի նմա կիր մարդկային.
քանզի դուստր էր նախաստեղծին. ուստի նախ
մաքրեաց զնա հոգին սուրբ։ Եւ բանն ա՟ծ որ-
դին աստուծոյ՝ հաճեցաւ բնակել ՚ի նմա. և
առեալ յարենէ կուսին՝ խառնեաց ընդ իւր
աստուածութեանն անճառելի խառնմամբ. և
՚ի վե՛ր քան զմիտս և զբան. և գոյացեալ եղև
մարդ կատարեալ, հոգւով և մտօք և մարմ-
նով. կամօք և յօժարութեամբ. և ամենայնիւ
որ ինչ է մեր՝ բաց ՚ի մեղաց. խառնեալ և միա-
ցեալ անշփոթ խառնմամբ յերկուց բնութե՟ց
անճառ միաւորութեամբ։ Ոչ աստուածու-

թիւնն ինչ տկարացաւ վասն խառնման մարդ-կային տկար բնութեան. և ո՛չ դարձեալ մարդ-կութիւնն 'ի բա՛ց եդ զիւր բնութեան կերպն։ Թէպէտ խառնեցաւ ընդ աստուածոյ. սակայն ո՛չ թէ 'ի հարկէ ինչ կրէր զբնական կերպն որ-պէս մեք՝ ծառայք գոլով ախտից. այլ նա՝ զոր կամէրն, զայն կրէր. երբեմն թոյլ տայր բնու-թեան կրել զիւրն. զի ստուգեսցի մարդկու-թիւնն. և երբեմն դնէր 'ի վերոյ լինէր կրիցն իբրև զաստուած։ Այլ պա՛րտ է հաստատ զբանս դիտաւորել. զի մի՛ յանդգնաս տարա-ծեսցի։ Որժամն է քրիստոնէին յերկոցունց չար հերձուածոյն զգուշանալ. այսինքն 'ի նես-տորի մարդադաւան բաժանմանէն. զի մարդա-ծին և ո՛չ ածածին խոստովանեցաւ զկոյսն. Եւ դարձեալ յեւտիքեայ չարաչար խառնա-կութենէն և յանիմաստ շփոթմանէն։ Եւ դաւանիլ զաստուածն մարդացեալ՝ աստուած և մարդ կատարեալ միացեալ և խառնեալ յերկուց կատարեալ բնութեանց մի քրիստոս և մի որդի կատարեալ. Որ ընդ հօր անժամա-նակ ծնեալ յաստուածածին կուսէն. և լեալ ընդ ժամանակաւ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն.

Յետ այսորիկ գայ առաջի սեղանոյն ։ Անդ երկիրպագա-նէ , ՚ի բաց հանէ զեմիփորոնն . և ինքն կայ առաջի՝ սեղանոյն . և քահանայքն դաս դաս կան շուրջ երկիրպագութեամբ ՚ի մ էջերբէ բեմին մինչև ՚ի մուտն ։ Եւ սարկաւագն քարոզէ առ դրան ։

## Մեկնութիւն ։

Քահանայապետին ՚ի բաց դնելն զեմիփորոնն՝ զայս ինչ նշանակէ ։ Մինչև ցայժմ զարդարեալ փառօք ձևացաւ ՚ի նմանութիւն փրկչին . բայց արդ հանդերձեալ են բերել զնշանակն քրիստոսի ՚ի սեղան անդ . վասն որոյ ՚ի բաց մերկանայ սա զձևականերպութիւնն . լինի և ինքն երբև զմի ՚ի սպասաւորացն . և կայ ՚ի սպասաւորութիւն քրիստոսի ։ Եւ ընդ նորաքանչիւր աղօթից քարոզէ սարկաւագն . և ՚ի միասին սկսանին և աւարտեն ։ Եւ այս ոչ եթէ յաղագս այնորիկ է զի փութով կատարեսցի , այլ ուսնի խորհուրդ ինչ . զի սարկաւագն քարոզէ ժողովրդեանն և ուսուցանէ զնոյն աղօթել և խնդրել ՚ի տեառնէ , զոր և քահանայն վասն նոցա աղօթէ . զի մի՛ այլ և այլ լիցին խնդրուածք քահանային և ժողովրդեանն ։

Մեկնութիւն յորդորութեան սարկաւագին՝ ։ 'Ի խորհրդա-
[illegible] եպիսկոպոսէ ։

Եւ ես խաղաղութե՛ զտէր աղաչեսցուք ։
Եւ ժողովրդեանն՝ Տէր ողորմեա՛ ։ Եւ ես հա-
ւատով աղաչեսցուք և խնդրեսցուք յաստուա-
ծոյ հօրէ և 'ի տեառնէ ամենակալէ և 'ի
փրկչէն մերմէ Յիսուսէ քրիստոսէ 'ի ժամուս
պաշտաման և աղօթից. զի արժանի ընդունե-
լութեան արասցէ ։"

Մնացեալ զեւ եւս թէ զինչ է ։ Հաւատով
աղաչեսցուք ։ Զի հաւատն ամէն լաւէ լի. որ-
պէս ասաց առաքեալն յակոբոս ։ Եթէ որ 'ի
ձէնջ լիցի նուազեալ յիմաստութենէ՝ խնդ-
րեսցէ յաստուծոյ, որ տայ յամենայնի առա-
տապէս. և ոչ նախատէ և տացի նմա ։ Ընդէ՞ր
երկուս դնէ թէ՝ աղաչեսցուք և խնդրեսցուք.
զի ցուցցէ թէ՝ մեծաւ պաղատանօք զխնդրու-
ածսն պա՛րտ է առնել . և սրտի մտօք և ե-
ռանդագին ջերմութեամբ աղաչել ըստ խրա-
տու մարգարէին. [illegible] առէ 'ի տեառնէ. և
նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քոյ. Եւ
կոչեաց զաստուած յերկուց անուանց. և զեր-
րորդն ևս յաւել ։ Խնդրեսցուք յաստուածոյ
հօրէ և 'ի տեառնէ ամենակալէ ։ Ուսուցա-
նելով զութ առ աստուած և երկիւղ ունիլ.
և 'ի գթութիւն և 'ի խնամածութիւն և 'ի
պահպանութիւն զնա յուսալ կոչել ։
,, 'Ի ժամուս պաշտաման և աղօթից. զի ար-

ժամի ընդունելութեան արասցէ ։”

Յայնմ ժամանակէ ասէ, յորում յաղօթս լիցեմք ժողովեալ · զոր պաշտօն և աղօթք կոչէ · յայս առնելով թէ պաշտօնեայք գոլով ա-տուծոյ հօրն և ամենակալին տեառն՝ հանա-պազ 'ի նորա պաշտօնին ժամանել պարտիմք ա-ռանց հեղգութեան ։ Եւ է՛ պաշտօնն ծառա-յութեան անուն · ո՛չ վայրապար նախ զպաշ-տօնն և ապա զաղօթսն եդ՝ որ է խնդրուած · այլ զի ուսանիցիս թէ ծառայելով պա՛րտ է խնդրել զպէտս ։

„ Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց · ըն-կալցի զխնդրուածս սրտից մերոց · թողցէ զյան-ցանս մեր և ողորմեսցի 'ի վերայ մեր ։”

Քանզի այսպիսեաց սովո՛ր է լսել՝ որք ըստ կամաց նորա հայցեն ։ Պարզեալ ո՛չ ասաց ե-թէ՝ ընկալցի զխնդրուածս մեր · այլ թէ ըզ-սրտից մերոց · զի ո՛չ եթէ որ 'ի շրթանցն՝ այլ որ 'ի սրտէն խնդրուածն ընդունելի է նմա ։

„ Աղօթք մեր և խնդրուածք՝ յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա ։”

Թէ այնպէս աղօթեսցուք որպէս ասացաւն, և զհաճոյսն աստուծոյ և զօգուտն մեր խընդ-րեսցուք, ո՛չ այժմ և եթ՝ այլ և յամենայն ժամու աղօթք մեր և խնդրուածք մտցեն ա-ռաջի մեծի տէրութեան նորա ։

„ Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւա-տով արդարութեան վաստակիլ 'ի գործս բա-րիս · զի զողորմութեան շնորհան իւր արասցէ

'ի վերայ մեր տէրն ամենակալն :"

Տեսէր զաղօթիցն շահ · որպէս խնկ եղեալ միաբանելն յուղիղ հաւատս և փառաւորելն յարդարութեան · և այս լինի՝ յորժամ տէրն ամենակալն զողորմութեան շնորհսն իւր 'ի վերայ առնէ · այսինքն՝ զշնորհս հոգւոյն սրբոյ · զոր ողորմելով տայ խնդրողացն : Այն է որ հաստատէն 'ի հաւատս : Այն և որ յարդարութեան փառաւորին զօրացուցանէ : Այն է որ զտաժանելիսն հեշտալիս առնէ : Եւ ապա յաղօթս աւարտէ զբանն ասելով · Կեցուսցէ և ողորմեսցի մեզ :

Մինչչեւ էն եկեալ նուէրքն 'ի սեղանն, ամենայն աղօթք քահանային առ Քրիստոս է : Իսկ յորժամ բերեն զնուէրականն 'ի սեղանն, փոխարէն քահանայն զխոստովանութիւնն իւր առ Հայր : Եւ զՔրիստոս փոխանակ մեր Հօր նուիրէ · Բայց այժմ այսպէս աղօթէ առ Քրիստոս:

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս՝ որ մեծդ ես ողորմութեամբ և առատ պարգևօք բարերարութեան քո · որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց ·"

Ո՜ մեծ սէրն քրիստոսի առ ուսուցանէ՝ զի զանձն 'ի խաչ և 'ի մահ ետ վասն մեր :

,, Եւ պարգևեցեր առատապէս պարգևս

հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոյն:”

Պարձեալ 'ի նմին ժամու խաչին յորում զմեղս մեր եբարձ. յետ կատարման տնօրէնութեան առեալ պարգևս 'ի հօրէ զսուրբ հոգին՝ եհեղ յարարածս իւր:

„ Հաղորդս արա և զմեզ տէր աղաչեմք ըզքեզ աստուածային պարգևացդ թողութեան մեղաց և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ:”

Նոյնպէս և այժմ անխափան է սէր քո առ մեզ. արա և զմեզ կցորդս այնմ պարգևաց. սրբեա և զմեզ 'ի մեղաց. և տուր զհոգին քո սուրբ որպէս և նոցա:

„ Որպէս զի արժանաւորք եղեալք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ այժմ և միշտ և յաւ:”

Ժողովուրդն ամէն: Քահանայն խաղաղութիւն տայ ժողովրդեան: Եւ նոքա և ընդ հոգւոյդ քում: Սարկաւագն աստուծոյ երկրպագեսցուք. ժողովուրդն առաջի քո տէր:

## Մեկնութիւն:

Խաղաղութիւնն թէ զի՞նչ ունի զօրութի՞, ասացաք նախ: Իսկ սարկաւագին հրամայելն աստուծոյ երկրպագեսցուք. Իբր թէ ասել թէ յաղագս խաղաղութեան աղաչեսցեք ըզտէր. և զնա զայն, զոր ետ 'ի ձեռն քահանա-

յին . արդ երկրպագութեամբ շնորհակալ լե֊
րուք նմա ։ Դարձեալ յաւելու յաղօթս իւր
քահանայն և ասէ ։

„ Խաղաղութեամբ քով քրիստոս փրկիչ մեր,
որ 'ի վեր ես քան զամենայն միտս և զբանս .
ամրացո՛ զմեզ և աներկիւղ պահեա յամե֊
նայն չարէ ։"

Խաղաղութիւն առ զանհաս նախախնամու֊
թիւնն կոչէ . որով հայցէ ամրանալ յամենայն
չարէ, որք երևելին և որք ոչ երևելին ։

„ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպա֊
գուս քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ
երկիրպագանեն ։"

Ը նոսա ասէ, որք երկիրպագին քեզ այժմ .
քում սիրելեացն և ճշմարիտ երկրպագուացն
կցորդս արա, որք զհոգիս ընդ մարմնոյ պատարա֊
ցիս քեզ խոնարհեցուցաք ։ Վասն զի ամենա֊
սուրբ երրորդութեանդ վայել են փառք, իշ֊
խանութիւն և պատիւ այժմ և միշտ և յա֊
ւիտեանս յաւ ։"

Ժողովուրդն՝ ամէն ։ Քահանայն՝ Օրհնեալ տէր մեր
յիսուս քրիստոս ։ Ժողովուրդն՝ ամէն ։ Սարկաւագն Օրհ֊
նեա՛ տէր ։ Եւ Քահանայն դառնայ առ ժողովուրդն . և
հրաման տայ Երախայից Ելանել ասելով ։ Տէր աստուած
օրհնեսցէ՛ զամենեսեան ։ Եւ սարկաւագն ձայնէ բարձր
բարբառով ։

Որ Երախայքդ էք՝ Ելէ՛ք . որ Երախայքդ էք՝

ելէ՛ք․ մի՛ ոք յերախայից և մի՛ ոք ՚ի թերահաւատից․ և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»։ Յետ այսորիկ արտաքս հանեն նախ զերախայ-սըն, որք եկին ՚ի հաւատս․ զի դեռ չև են ընկալեալ զլուացումն աւազանին․ և վասն անկատարութեան նոցա զորս և թերահաւատս կոչեն․ քանզի չև են կատարեալ ՚ի հաւատս։ Իսկ ապա զապաշխարողսն՝ որք ՚ի մեղս ինչ չարեաց թաւալեցան․ և դարձեալ ՚ի զղջումն եկեալ խոստովանեցան․ բայց դեռ չև է լցեալ նոցա թիւ աւուրցն ապաշխարութեան։ Իսկ զկնի նոցա զանմաքուրսն․ այսինքն՝ որք յանմաքուր այսոց չարչարին։ Սոքա երեքեան դասք մինչև ցայս ժամ կան ընդ սուրբ հաւատացեալսն։ Զի տեսեալ զքահանայապետն՝ որ ձևացեալ ՚ի նմանութիւն քրիստոսի և եցոյց զանհամեմատ սէրն իւր առ մարդիկ՝ օգտեսցին յայնմանէ։ Այլ և մարգարէական և առաքելական և աւետարանական ընթերցումն՝ ՚ի խրատ զգուշութեան և ՚ի սնունդ անկատարութեան նոցա լինի։ Իսկ այժմ հանդերձեալ է ինքնին թագաւորն քրիստոս ՚ի խորհուրդ միանալ ընդ սիրելիս և ընդ հաւատարիմ ծառայսն իւր, որք են քահանայական դասքն․ վասն որոյ ո՛չ է պարտ լինել ոք անդ յանկատարից, այլ ՚ի կատարելոցն ՚ի քրիստոս։ Իսկ կիսասարկաւագացն հանել զնոսա արտաքս և պահել զդրունսն զգուշութեամբ

զայս նշանակէ. վասն զի նոքա դասաւորակէն զնոսա և անուցանեն հոգևոր կաթամբ ըն-թերցման հին և նոր կտակարանացն։

Եւ դպիրքն արքանոցէլոցն երգեն։

Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի։ Երկնային զօրութիւքն յանէրևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով. Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց։

Եւ սարկաւագն ասէ։

Սաղմոս ասացէք անուան աստուծոյ մերում դպիրք ձայնիւ քաղցրութե՛ յերգս հոգևորս։ Եւ ապա ասի սրբասացութիւն։ Եւ զան սարկաւագունքն ՚ի սարկաւագատունն. և եր-գեն զՅարևու էհարն. և զՈրք զքրովբէիցն խնկօք և մոմեղինօք։ Եւ առեալ բերեն զսուրբ նուէրն ՚ի սեղանն և տան ՚ի ձեռս քահանային։

Մեկնութեան այսորիկ։

Գեղեցիկ և աստուածավայելուչ խիստ տեսա-նեմ զկարգս զայս. զի սարկաւագունքն ա-ռեալ բերեն զնուէրան ՚ի սուրբ սեղանն։ Քանզի սարկաւագունքն ուսուցիչք են ժո-ղովրդեանն. և միջնորդք առ քահանայն։ Իբ-րև տեսին զքահանայապետն զի ՚ի ձև ապա-

սաւորի էին . մանաւանդ թէ զձև միջնորդի և պատգամաւորի էառ 'ի ժողովրդենէն յաստուած, յայնժամ և նոքա հանդերձ կիսասարկաւագօք առնուն զընծայսն ծմ՝ զգուշութեամբ . բուրմամբ խնկոց և մոմեղինօք տան 'ի ձեռս քահանային . որպէս թէ զայս ինչ ասեն 'ի դիմաց ժողովրդեանն առ քահանայն : Որովհետև միջնորդ և բարեխօս առաքեցար 'ի մէնջ առ հայր՝ պիտոյ է նուէրս ինչ և ընծայս 'ի մէնջ . զի զորս տարեալ մատուցես հօրն և աստուծոյ . և այնու 'ի հաշտութիւն ածցես զնա մեզ : Այլ մեք ոչ ինչ ունիմք այլ նախամեծար.քան զհացս զայս և ըզ բաժակն՝ որ նշանակ է գլխոյն մերոյ քրիստոսի . զայս առեալ մատո ընծայ նմա : Այլ ապա բարձրաձայն աղաղակաւ երգէին և ասէին . Որք զքերովբէիցն խորհրդաբար կերպարանիմք : Որպէս թէ զայս աղաղակեն՝ եթէ մեք ամենեքեան ժողովուրդքս ընդ քահանայական դասուցըս զքերովբէիցն իմացականապէս ձևանամք . զայն զոր եսես եզեկիէլն . այսինքն զկառսն չորեքդիմիս՝ որք վերացեալ զայնին 'ի հիւսիսոյ 'ի հարաւ : Նոյնպէս և մեք զխորհուրդս քրիստոսի բարձեալ բերեմք 'ի հիւսիսոյ կողմանէ եկեղեցւոյս . այսինքն 'ի սառուցեալ և 'ի ձմեռնացեալ վայրէ մերս բնութեան 'ի լուսաւորեալ կողմն աստուածային սեղանոյդ : Այլ որպէս անդ մարգարէն ծխածան, զամբար և փայլատակումն եսես . նոյնպէս և մեք զայն

փառամամբ մոմեղէնայս և բուրմամբ խնկոյս կերպացուցաք ։ Ու կենդանարար երրորդու-թեանն զերեքսրբեանն օրհնութիւնս մատու-ցանեմք ։ Ու զոր եսայիաս ետես․ քերովբէ-ից զերեքսրբեանն սրբաբանեմք զամենայն կեն-ցաղականս 'ի բաց դնելով զգործս, որպէս զի զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք ։ Զան-զի ոչ եԹէ վայրապար յայս ձևացաք, այլ զի 'ի կենցաղական զբաղմանց և 'ի հոգոց 'ի բաց ընկենլով` և հրեշտակացեալ մտօք զամենեցուն զԹագաւորն իմացականապէս 'ի մեզ ընդու-նիցիմք ։ Ու զհրեշտակացն հանդիսապէս ընծա-յեալ բերեմք զկարգ․ Ալէլուիայ ։ Ասեն Թէ․ չէ՛ վայրապար այս` զոր մեք առնեմք․ այլ զի այսու հրեշտակացն կարգաւորութեանց նը-մանիցիմք ։

Ու մինչ նոքա այսպ երգէին, [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի ձայնում․ որպէս զի [illegible] [illegible] և Որ [illegible] 'ի [illegible] [illegible] ։

Պէտք աղօթից քահանային է առ Քրիստոս ։ որպէս զի զօրացուսցէ զնա խօսել ընդ հօր իւրում զխորհուրդ անօրէնութեան իւրոյ ․ Զանզի զմտաւ ածէ զանհասութիւն մեծ խորհրդոյս․ վասն որոյ սարսափի և դողայ և ա-հիւ մեծաւ պաշարի ․ տեսանէ զահ և զեր-

կիւղ սարկաւագացն և դպրացն և ամենայն ժո_
ղովրդեանն. յերկիւղի և 'ի սոսկման կայ ։
Խոնարհեցուցանէ զպարանոցն. և զմիտս ընդ
ձեռացն յերկինս ամբառնայ առ քահանայա_
պետն Քրիստոս. և աղօթէ ասելով ։

Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր
ախտիւք և ցանկութեամբ մատչիլ 'ի սեղան
քո կամ սպասաւորել արքունական փառաց
քոց ։"

Արդարապէս խոստովանի զտկարութիւնս
մարմնոյս՝ որ մինչ ծառայէ պէսպէս ախտից և
ցանկութեանց. որով անմարթ էր այսպիսեաց
խօսակից լինիլ աստուծոյ՝ որպէս այժմ եւս. և
կամ երկնաւորացն նմանիլ՝ որպէս պաշտօնեայ_
քըն ձևացան ։ Իսկ թէ էր վասն համարձա_
կեցայք յայս գործ՝ դու վստահացուցեր. որպէս
և ասէ ։

„ Քանզի պաշտել զքեզ մեծ և ահաւոր՝
երկնաւոր զօրութեանցդ իսկ է. սակայն վա_
սըն անչափ բարերարութե քո անպարագրելի
բանդ հօր եղեր մարդ և քահանայապետ մեր
եղևեցար ։ Եւ իբր տէր ամենեցուն այսմ ըս_
պասաւորութեան և անարիւն զենման զքա_
հանայութիւն աւանդեցեր մեզ ։"

Ով աստ շնորհիդ և սիրոյդ առ մեզ. զի ոչ
միայն վասն մեր մարդ եղեր. և քահանայապետ
զքեզ հաշտութեան նուէր հօր մատուցեր.
այլ և զքո սպասաւորութիւնդ մեզ ուսուցեր ։
„ Վասն զի դու ես տէր աստուած մեր, որ

տիրես երկնաւորաց և երկրաւորաց . որ 'ի վե-
րայ քերովբէական աթոռոյ բազմիս . սերովբէ-
ից տէր և Թագաւոր իսրայէլի . որ միայն սուրբ
ես և 'ի սուրբս հանգուցեալ :

Այսու ամենայնիւ զանհաս և զանհամեմատ
փառս տեառն յիշատակէ :

,, Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտա-
լուր տէր . նայեաց յիս 'ի մեղուցեալ և յան-
պիտան ծառայս քո . և սրբեա' զհոգի և զմիտս
իմ յամենայն պղծութենէ չարին :"

Նայեաց աստէն զհաճիլն և զկամիլն յայտ
առնէ . որպէս զի հաճեալ հաշտեսցի . և սր-
բեալ մաքրեսցէ զներքին մարդն յամենայն
աղտեղի խորհրդոց :

,, Եւ բաւականացո' զիս զօրութեամբ սբ
հոգւոյդ . որ զգեցեալ եմ զքահանայականս
շնորհ՝ կալ առաջի սրբոյ սեղանոյս . և քահա-
նայագործել զքո անարատ մարմինդ և զպատ-
ուական արիւնդ :"

Նախ զսրբութիւն հայցեաց և ապա զհոգին .
զի զօրացուսցէ զնա առ 'ի քահանայագործել
զանարատ մարմինն և զարիւնն քրիստոսի :

,, Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ
մաղթեմ , մի' դարձուցաներ զերեսս քո յինէն
և մի' մերժեր զիս 'ի ծառայից քոց . այլ ար-
ժանի արա' մատուցանել քեզ զընծայս զայս
յինէն 'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս
քումմէ :"

Այնինքն՝ մի' անտես արասցես զիս , այլ ար-

ժամայծ զիս, զի զընծայս զայս, որ ինքն դու ես՝ դարձեալ քեզ մատուցանեմ: Զանզի ինքն է Քրիստոս ամենայն յամենայնի. զի իբրև զքահանայապետ պատարագէ. և իբրև զգառն պատարագի. իբրև զընծայ ընծայի. և դարձեալ զինքն ընծայ ընդ հօր ընդունի. վասն զի մի է կամքն հօր և որդւոյ:

„ Վասն զի դու ես՝ որ մատուցանես և մատչիս և ընդունիս և տաս Քրիստոս աստուած մեր:”

Որպէս ասացաք իսկ՝ եթէ նախ ինքն ընդունի և ապա հօր մատուցանէ. մանաւանդ թէ մի է իւրն և հօրն ընդունելութիւն. նոյնպէս և տալն զփոխարէնն:

„ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկզբնդ քո հարբդ և ամենասուրբ և բարերար հոգւովդ այժմ և”:”

Եւ Երէց սարկաւագն ջուր տայ ՚ի լուանալ քահանային զծայր մատանցն առաջի սուրբ սեղանոյն:

## Մնջնաբերուն:

Լուացումն ծայրիցն մատանց՝ նշանակէ զննջին կիրս խորհրդոցն բնութե. զայս ևս լուացեալ մաքրեաց ՚ի մտացն: Զի որ օրինակ և Քրիստոս նախ լուաց զոտս աշակերտացն՝ որ է վերջին մասն մարմնոյն. և ապա ետ նոցա զմարմինն իւր սուրբ: Իսկ որ առաջի սեղանոյն ՚ի տեսութե

ժողովրդեանն լուանայ, այս է պատճառն. քանզի պարտ է այնմ՝ որ յաստուածայինն մերձենայ 'ի խորհուրդ առաջի ատենին աստուծոյ՝ որ զծածուկսն քննէ, և առաջի մարդկան՝ ոյք զյայտնիս տեսանեն, յամենայնի սուրբ լինել երևելի գործովք և անյայտ խորհրդովք: Դարձեալ 'ի ցոյց ժողովրդեանն. զի և նոքա զգուշասցին յամենայնի սուրբ լինել. և ապա հաղորդիլ աստուածային սուրբ խորհրդոյն:

Ընդէ՞ր քահանայն յայտնապէս առ հայր մերն աղօթէ:

Ի ժամ 'ի կատարման այսր խորհրդոյ՝ առ հայր դարձուցանէ քահանայապետն զդէմս աղօթիցըն. և սկսանի զանօրէնութիւն սիրելի որդւոյ նորին՝ հաշտութեան պատարագ և նուէր ընծայել նմին. զի 'ի գութ խանդաղանաց և սիրոյ ածիցէ այնու զնա վասն մարդկան: Եւ այս է օրինակն՝ զոր և ասացից. վասնզի 'ի սկզբան լինելութեան կամայօժար մեօք հնազանդեցաք չարին. և այնու 'ի վայր անկեալ մերժեցաք յաստուածային փառացն և յանմահ բնութենէն: Եւ անտես լինելով յարարչէն՝ մատնեցեալ եղաք 'ի ձեռս թշնամւոյն և եղաք վարձկան չար ախտիցն և ծառայ սկզբնաչար բանսարկուին: Իսկ հայրն երկնաւոր տեսեալ զմեր կամայօժար հնազանդութիւն չարին խրատամբք անտես առնէր զմեզ: Ի Մ-որդին իւր միածին տեսեալ զայսպիսի աղէտս

մարդկան ցեղի՝ գայ կամաւ հօր և խոնարհի 'ի մեր փրկութիւն ։ Նա դատապարտեաց նորով արդարութեամբն զչար գունդն բռնացեալ ։ և ազատեալ փրկեաց զմեզ 'ի նորին ծառայութենէ ։ և բերեալ ամբարձոյց զմեզ յաշտարակս եկեղեցւոյ ։ և խոստացաւ մեզ՝ զի 'ի միւսանգամ գալստեանն իւրում առեալ տարցէ զմեզ յառաջին գաւառն մեր ։ Բայց այժմ ասէ ։ մինչդեռ մերձ ունիք զթշնամիս ձեր՝ եթէ նեղիք ինչ 'ի նոցանէ , ունիք զիս ձեզ միջնորդ և բարեխօս առ հայր ։ որ եկեալ տեսի զամենայն աշխատս ձեր 'ի թշնամեաց ։ Որպէս ասացն թէ ։ Զամենայն՝ զոր ինչ խնդրիցէք 'ի հօրէ յանուն իմ , տացէ ձեզ ։ Վասն որոյ նեղեալ մեր 'ի դաւաճանող թշնամւոյն միջնորդութեամբն որդւոյ զհայրն աղաչեմք ։ և տուեալ 'ի ձեռս քահանայից զնշանակ մարմնոյ և արեան որդւոյն՝ հրեշտակ առ հայր առաքեմք ։ Զոր դնէ քահանայն առաջի հօրն 'ի վերայ սեղանոյն ։ և սկսանի պատմել զպէսպէս անօրէնութիւն որդւոյն ։ և աղաչէ զհայրն զի վասն հեղման արեան որդւոյն՝ մի՛ միշտ անտես արասցէ զմեզ ։ այլ զի սրբեսցէ զմեղս մեր յիշատակաւ նորին չարչարանաց ։ Իսկ հայրն յորժամ տեսանէ զանձառ շնորհս որդւոյն իւրոյ և զբանիցն պատմութիւն՝ զոր աղերսէ քահանայն 'ի դէմս ժողովրդեանն՝ տայ զխնդրուածսն ։ Նա այս է՝ զոր ասէ յովհաննէս թէ ։ Արիւն որդւոյ նորա սրբէ զմեզ յամե֊

նայն մեղաց։ Բայց դու մի՛ կարծեր այսու բանիւ թէ զանազանութիւն ինչ է 'ի կամս հօր և որդւոյ. այլ ուսուցից մեզ զհօրն կամս՝ որդւոյն եղև. վասն այնորիկ մեք նախ իմանալի միօք առ որդւոյն բարձրանամք, և ապա այնու ճանաչել կարեմք զհօրն գութ առ մեզ։ Նա ձայն այր աստուածոյ քահանայ սուրբ և պատուարագոյն քրիստոսի. յորժամ կայցես 'ի պատարագել սուրբ և աստուածային խորհրդոյն, մի՛ վեր 'ի վերոյ միայն ծայրիւք շրթանցդ զաղօթսն մատուսցես. զի այնպէս անպտուղք են բանք աղօթիցն. և ո՛չինչ օգուտ 'ի նմանէ. և ո՛չ միայն անօգուտ, այլ և 'ի դատապարտութիւն ևս լիցի. այլ ընդ շարժիլ լեզուիդ, խառնեա՛ զջերմութի̃ սրտիդ բորբոքմամբ մտօք առաջի իմանալի աչացդ. և ունելով զայն առ որս խօսիս։ Զանգի չէ իսկ հնար զձև աղօթիցն յայտ առնել թէ որպիսի օրինակաւ զիղձս սրտին խառնեսցէ ոք 'ի ժամ աղօթիցն. բայց եթէ ոք յինքենէ զայն իմասցի. զոր օրինակ՝ եթէ կին ոք առաջի ինքեան ունիցի զմիամօր և զսիրելի որդին իւր մեռեալ, որպիսի առ աղէտ սրտին կողկողմամբ պէսպէս բանս խօսիցի ընդ նմա։ Նոյնպէս և դու ճմլեալ սրտիւ և աղէտական հայցմամբ մատո՛ զաղերս աղօթից հօրն և աստուծոյ. զի առցես զպտուղ աղօթից զնոյն ինքն զքրիստոս 'ի փրկութիւն քեզ և ամենայն աշխարհի։

## Մեկնութիւն Քարոզութեան Սարկաւագին ։

,, Որ եւ հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս աստուծոյ ահիւ ։"

Որպէս թէ 'ի քնոյ ընդոստուցանէ զմեզ քարոզս՝ զսեղանն աստուծոյ սեղան կոչելով · զի առաջի աստուծոյ կայ և զորդին աստուծոյ 'ի վերայ ունի բազմեալ · յաղագս որոյ ահիւ կալ ասէ առաջի նորա ։

,, Մի՛ խղճիւ և գայթակղութեամբ ։"

Խիղճ գայթակղութեան՝ զգայթակղեալսն 'ի մեղս ասէ · զոր եթէ ոչ լիցեն խոստովանութեամբ հանեալ 'ի սրտից իւրեանց, մի՛ կացցեն առաջի սրբոյ սեղանոյն յահաւոր յայնմ ժամուն ։

,, Մի՛ նենգութեամբ խորամանկութեան ։"

Նենգութիւն խորամանկութեան զայնց ասէ՝ որք կեղծաւորին իբր սէր և խաղաղութիւն ունիլ առ եղբարս, և յանձինս նենգութեամբ զչարութիւն խորհին · զորս ո՛չ ընդունի աստուածեղէն խորհուրդն · այլ արտաքս հանէ ։

,, Մի՛ պատրանօք և խաբէութեամբ ։"

Բազմադիմի են խաբէութիւնք և պատրանք ։ զի է՛ որ առ աստուած · և է՛ որ առ մարդիկ ։ Նախ և առաջին հաւատովն կեղծաւորեալն ուղղափառ՝ չարափառ գոլով · կամ արդար ձևացեալ՝ մեղաւոր գոլով ։ Իսկ կամ առ մարդիկ երևեալն այն, որ չիցէ ստոյգ կամ սիրուն

կամ պարզամիտ ։ Իսկ կամն այն՝ որ զխարդա-
խութիւն՝ զստութիւն և զխաբէութիւն և
զայլ այսպիսիս ցուցանէ յինքն՝ յորս չիցէ .
զոր 'ի բաց մերժէ անէրն ատելով . 'Ի բա՛ց
կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէք զանօ-
րէնութիւն ։

,, Մ՛ի երկմտութեամբ և մի՛ թերահաւա-
տութեամբ ։"

Երկմտութիւն թերահաւատութեան է . եթէ յայն-
ցանէ՝ զորս դաւանիմք զկնի աւետարանին 'ի
հաւատամն՝ երկմիտ և թերի իցէ ոք իւիք .
և կամ 'ի սուրբ խորհուրդն ո՛չ որպէս յաղա-
գըս որոյ ահիւ կայ ասէ առաջի աստուծոյ .
մարմին և արիւն հաւատայ . և կամ որ 'ի նա
յոյսն թերացեալ իցէ իւիք ։ Զորս նախ ա-
ղօթիւք և զդոյց խրատիւք ուղղել պա՛րտ է .
որպէս և գրեալ է թէ՝ Մաքրելի է նախ և
առաջին . և ապա 'ի մաքուրն մերձենալի ։

,, Այլ ուղիղ վարուք ։"

Ուղիղ վարք այն է՝ զոր պատուիրանն տայ ,
անթիւրն լինիլ յաջ կամ յահեակ ։

,, Պարզ մտօք ։"

Այսինքն թէ՝ որպէս արտաքուստ երևեալ ,
այնպէս և 'ի ներքուստ . և ո՛չ այլագունել ։

,, Միամիտ սրտիւ ։"

Ողջամիտ առ աստուած և առ մարդիկ . և ո՛չ
ուրեք խորհրդովն թիւրիլ ։

,, Սատարեալ հաւատով ։"

Սատարումն հաւատոյն՝ է ճանաչել զՀայր և

զորդի և զսուրբ հոգին՝ Երիս անձինս . և Մին աստուած . և ոչ զխառնել ՚ի նոսա ասացել կամ նուազ . կամ՝ յաւել կամ՝ յետոյ ։ Այլ հարթ հաւասար և միապէս յամենայնի, և նոյն ընտա_ թեամբ . ծնօղ՝ զհայր . և ծնունդ՝ զորդի . և ելումն՝ զսուրբ հոգին ՚ի հօրէ, և ոչ ծնունդ . անժամանակ զերեքեանն . և ՚ի սկզբանէ ընդ հօր զորդին և զհոգին սուրբ . մարմնացեալ որդին ՚ի մարիամայ անճառապէս և անփոփոխա_ կաբար . նոյն ինքն աստուած ճշմարիտ և մարդ կատարեալ . զաստուածութեանն զօրութիւն ցուցանելով որպէս զաստուած . և զմարդկա_ յինս առանց մեղաց կրելով որպէս զմարդ մի_ աւորութեամբ . նոյն ինքն խաչի և մահու համբերեալ . և յարուցեալ երեքօրեայ . և զմերն բարձեալ զանէծս և զմեղս և զմահ . և մերով մարմնովս համբարձեալ յերկինս . և գալ դատել զկենդանիս և զմեռեալս . և հա_ տուցանել ըստ իւրաքանչիւր գործոց . արդարոցն կեանս յաւիտենականս . և մեղաւորացն տան_ ջանս յաւիտենականս ։ Նաև խոստովանելով զմկրտութիւնն մերոյին ծնունդ ՚ի հոգւոյն որբոյ յորդեգրութիւն հօրն երկնաւորի ։ Հա_ ւատալ և զփրկական խորհուրդն ստուգապէս մարմին և արիւն քրիստոսի . որով միանամք ՚ի քրիստոս և ժառանգակից նորուն լինիմք ։ Նո_ այսու հաւատով լինիմք կատարեալ լցեալ ձիրով աստուածգիտութեն լի . և եղբայրսիրու_ թեամբ անթերի . և առաւելեալ ամենայն

գործովք բարութեանց․ այսինքն՝ որ ինչ յաստուածսիրութենէն և յեղբայրսիրութենէն են բարիք։

„ Կացցո՛ւք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս աստուծոյ։

Դարձեալ մերասին յիշեցուցանէ զկայն առ սեղանն աստուծոյ․ զի առաւել ընդ ահի փակեսցէ։

„ Եւ գտցուք զողորմութեան զշնորհս յաւուր յայտնութեան և 'ի միւսանգամ գալըստեան տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։"

Յիշեցուցանէ և զահաւոր գալուստն քրիստոսի․ զի մի՛ անփորձ մնասցուք առ աստուածային սեղանն։ Զի եթէ խղճիւ կացցուք, մեծապէս լինիմք կշտամբեալք․ որպէս զաղտեղի հանդերձիւք մտեալն 'ի հարսանիսն։ Իսկ եթէ լուացեալ զաղտն և զհարսանեացըն զգեցեալ զպատմուճանն ըստ խրատու քարոզին, ողորմեալ լինիմք յաւուր յայնմիկ․ և ողորմութեանցն քրիստոսի 'ի նորա բարիսն վայելեմք։ Զի թէպէտ և բիւրապատիկ լցեալ իցեմք արդարութեան վաստակօք․ սակայն ողորմութեամբ են պարգևքն․ և բազմապատիկ առաւել քան զվաստակն։ Եւ աղօթիւք կընքէ զքարոզն ասելով։

„ Ամենակալ տէր աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի մեզ։"

Զի եթէ ողորմութեամբ ոչ օգնիցիմք, ոչ

կարեմք այնպիսի մաքրութիւն առանալ՝ մինչ զի խառնումն ընդ քեզ ունիլ. այլ ողորմելովդ լիցուք արժանի և հասցուք կենացն յաւիտենից ամէն:

## Աղօթք:

ՏԷՐ աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց. որ յանէութենէ ըզբնաւս 'ի ցուցակութիւն ածէլ գոյացուցեր:"
Տէր աստուած՝ ոչ միայն անմարմին զօրութեանցն, այլ և ամենայն եղելոցս՝ որ յանէութենէ, այսինքն՝ որք չէին և դու զնոսա գոյս 'ի տեսութիւն ածեր:

„ Որ և զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս: Այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր պաշտաւորս:"
Այնպէս յամենայն ձեւս զմարդս պատուեաց. և կացոյց իւր խորհրդոյն պաշտաւորս:

„ Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագիս. ընկալ առ 'ի մէնջ զառաջադրութիւնս զայս. և աւարտեա զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգևեա ճաշակողացս զհացս զայս և զբաժակս:"

Դու տէր՝ որ զայս պատարագիս որ է ընծայ՝ քեզ ընծայեմք. հաճեա՛ց և ընկալ զառաջի քոյ եղեալ նուէրս. և աւարտեա՛ (որ է կատարեա՛) զսա հոգւովդ 'ի խորհուրդ, զի լիցի

քոյ միածնիդ մարմին և արիւն. և ճաշակողա-
ցըս դեղ մեղաց թողութեան:

„ Շնորհօք և մարդասիրութեամբ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի: Ընդ որում քեզ հօր միանգամայն և հոգւոյդ սրբոյ վա-յել է փառք իշխանու":"

Սարկաւագն կարդայ :

„ Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբու-թեան. և որք ոչ էք կարօղք հաղորդիլ աս-տուածային խորհրդոյս առ դրունս ելէք և աղօթեցէք:"

Համբոյր սրբութեան է՝ որ սուրբ սիրովն է և ոչ նենգաւոր, և ոչ պոռնկական խորհր-դով. այլ յստակ մտօք իբրև յեղբայրն. որով կարող էք հաղորդիլ, 'ի միմեանց ուսարուք : Իսկ որք ոչ կարէք հաղորդիլ աստուածային խորհրդոյս՝ առ դրունս աղօթեցէք :
Պարձեալ հրաման տայն սարկաւագին եթէ Ողջոյն տուք միմեանց, զայս յայտ առնէ : Վասն զի որպէս ամենայն բարեձևութիւն եկեղեցւոյս հոգևոր է և մարմնաւոր. և մարմնականքն ապացոյցք և յայտնաբանք հոգև-որացն. այսպէս և զայս է տեսանել զխորհուր-դըս: Քանզի հպիլ 'ի միմեանս մարմնով բազ-մութեն. և շաղկապիլ 'ի միութիւն մարմնոյն համբուրիւ՝ զմիութիւն հոգեպէս խառնմանն և զհաւասարութիւն յայտ առնէ. ըստ այ-

նըմ թէ․ Այս բազմութիւն հաւատացե-լոցն սիրտ և անձն մի ։ Այս միաբան ոգի ա-ղագաւ, եթէ ոչ առ ՚ի ցուցանել զայն թէ՝ շնորհի պարգևաց քոց, որ հանդերձեալ է բաշխել՝ միով յուսով և հաւատով սպա-սեմք ։ Այս որպէս զմի անձն համակամութ՟ և սիրով բազմութիւնքս լինիմք․ զի մի՛ լիցի ինչ երկպառակութեան կարծիք․ կամ անջա-տումն լուսոյ առ առաջինկայս խորհուրդ ։ Ուս-տի նախ հրամանաւն զանկատարան և զանջատա-ղական մէջք բաժանեալսն արտաքս էհան․ և ապա կատարելոցս և միով տարփմամբ լցելոցս տայ զհրաման ողջունին և սիրոյն միութեան․

Ընդունի յետ այսորիկ զողջոյն հաւատոյն Երէց յեկեղեցւոյն․ և ողջունէ սարկաւագն նախ զերէցն՝ և ապա զժողովն․ և դպիրքն երգեն ասելով․ Քրիստոս ՚ի մէջ մեր յայտնեցաւ ։

Յորժամ դպիրքն զգուշացան տաճարի մար-մնոցն, այս միաբան զդաւանութիւն հաւա-տոցն խոստովանին․ որով ցուցանեն թէ որպէս կամօք ՚ի ձեռն նշանակի համբուրին մի եմք, այսպէս և ուղղափառ դաւանութեամբ հա-ւատոց․ և չէ՛ք ոք յայնցանէ՝ որք ոչ այսմ հա-ղորդին ՚ի մեր կցորդութիւն ։

Դարձեալ նուիրեն աստուծոյ զհաւատս և զդաւանութիւնն՝ յայտ առնելով թէ այս-պիսի յուսով խառնեալ միացաք ընդ քեզ՝ ոչինչ ունելով թերութ՟ յերկրորդական գիտու-

թենէ։ Իսկ զի ակնունին մեծամեծ բարեաց
յընթերակայ ժամանակս գտանել։ Իսկ քրիս-
տոս առհաւատչեայ տրոյն 'ի մեզ զհաւատն
պահանջեաց անելով առ Իւրաքանչիւր բժըշ-
կեալսն. Հաւատայք եթէ կարող եմ առնել
ձեզ զայդ։

Սպասն այսորիկ և առքա նախ զանօրէնութեան
նորա շնորհս և զաստուածութեան փառս մի-
աձայն բարբառով հռչակեն և խոստովանին
հաւատալ ամենայնիւն բոլորով սրտիւ. և ապա
զնոյն խորհուրդ՝ որում ամենեքեան հաւատա-
ցին՝ քահանայն առնու և 'ի դիմաց ամենայն
ժողովրդեանն նուիրէ աստուծոյ հօր։ Իսկ զոր
օրհնակ զհայն 'ի նոցանէ՝ և նոցա փրկանք 'ի
սեղանն ածին սարկաւագքն. այսպէս և զհա-
ւատս քրիստոսի մարմնոյն խորհրդոյ, 'ի նոցանէ
և վասն նոցա փրկութեանն քահանայն առնու
և նուիրէ աստուծոյ հօր մատուցն անելով։ Որ-
քա հաւատացին զյիսուս քրիստոս զորդին աս-
տուծոյ վասն մերոյ փրկութեան, մարմնացեալ՝
չարչարեալ խաչեալ թաղեալ յերրորդ ա-
ւուր յարուցեալ ելեալ յերկինս և նստեալ
ընդ աջմէ հօր. զայն զնոյն ինքն և զնորին խոր-
հուրդսն՝ որ վասն նոցա փրկութեանն եղև,
ածնիմ՝ ես 'ի ձեռս առաջի քո Աստուած հայր
պատարագ և նուէր հաշտութեան կամաց քոց
'ի վերայ ամենայն արեամբ ստացեալ ժողովր-
դոցս քոց հովուիդ փրկողի.

Սարկաւագն ասէ:

,, Ահիւ կացցուք: երկիւղիւ կացցուք. բար_ւոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ:"
Բանն սարկաւագին առ 'ի զգուշութիւն է ժողովրդեանն: Այս նոյինն՝ յանձնառական խոստովանութիւն:

,, Պատարագ. քրիստոս մատչի անարատ գառն աստուծոյ:

Զի քրիստոս է որ պատարագին. անմաքուրքն և աղտեղեալքն հոգւով արտաքս ելցեն. քան_զի չեն արժանի 'ի հոգևոր ուրախութիւնսն վայելել:

Խրատեսցեն զմիմեանս սուրբ դրունք. և առ դրունս աղօթեսցեն սգացեալ սրտիւ. և ջեր_մեռանդն արտասուօք ողբասցեն զ գրկանս. զի 'ի հոգևոր հարսանեացն արտաքս վարեցան. զի չեղեն արժանի յահաւոր ժամուն մերձե_նալ առ երկնաւոր սեղանն. և ոչ երգակցիլ հրեշտակացն անդր գումարելոց. և 'ի քրիս_տոս միանալ խորհրդովն սրբով. և 'ի մի հոգի նմա լինել: Արդ՝ որք ըստ այսմ խորհրդոյ յեղանեցին արտաքս, երկիւղիւ և ամօթով զիւրեանց վասանան առ 'ի խոստովանիլ ունի_ցին առաջի աստուծոյ. և հաշտութիւն հայ_ցիցեն յամենողորմ աստուծոյ 'ի ձեռն քրիս_տոսի զենմանն՝ փութով քաւութեան հաս_ցեն: Այլ անզգայքն և ելեալքն յերեսացն տն և մերժեալքն 'ի սրբութեցն, որք ոչ եկեսցեն

յապաշաւանս . այլ սովորական իրս համարելով
խնդամիտ երանիցեն և մնայցեն անտրտում ։ և ա
ռաւել շարժեն 'ի ցասումն զանբարկանալին
աստուած . զի ոչ 'ի պատուհասիցն և յորոշիցն
'ի սրբոցն , և ոչ 'ի բացեայ յառնելն յիւրմէ
հոգայցին ինչ օգտան որոյ յիրաւի զատին ։

[illegible]

„Շնորհք տէր և աստուածային սրբարար
զօրութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ եղի-
ցի ընդ ձեզ ընդ ամենեսեան”

Պօղոս ։

„ Եւ ընդ հոգւոյդ քում ։
Քահանայն որպէս մասն ինչ է առ 'ի շնորհացն
աստուծոյ 'ի ձեռն աղօթիցն զոր մատոյց . և
դառնայ և կնքէ ամբոխին և այլ ժողովրդեանն
և նոքա ընկալեալ շնորհական լինին նմա տա-
ալով թէ՝ զայս շնորհս զոր ետուր մեզ , և
ընդ հոգւոյդ քում այլ եղիցի ։

Սարկաւագն

„ Զդրունս զդրունս ամենայն խնամութեամբ
և զգուշութեամբ ։
Պահապանացն հրամայէ զգուշանալ դրանց տաճա-
րին . զի մի՛ այնք՝ որք արտաքս էլին երեխայքն

և այլքն հայեացին 'ի խորհուրդն ։ Նա և զնոսա զգուշացուցանէ՝ որք 'ի ներքս մնացին, պատրաստ և զգոյշ լինել 'ի պահպանութիւն դրանց հոգւոյն, որ է զգայութիւն, աչքն և ականջն և այլքն։

Սարկաւագն։

„ Ի վեր ընծայեցուցէ՛ք զմիտս ձեր աստուածային երկիւղիւն։

Դպիրն։

„ Ունիմք առ քեզ Տէ՛ր ամենակալ ։

Սարկաւագն։

„ Եւ գոհացարո՛ւք զտէառնէ բոլորով սրտիւ։

Դպիրն

„ Արժան և Իրաւ ։"

Սարկաւագն տեսանէ զժողովուրդն զի ընկալան զօրութիւն 'ի քահանայական օրհնութենէն, հրամայէ նոցա 'ի վեր առ աստուած ամբառնալ զմիտս։ Իսկ նոքա պատասխանեն՝ ոչ սարկաւագին, այլ՝ աստուծոյ։

,, Ունիմք առ.քեզ Տէր ամենակալ:"

Դարձեալ՝ գոհանալ հրամայէ նոցա սարկա-ւագն. իսկ նոքա յանձն առեալ խոստովանին զգոհանալն առնուլ.

,, Արժան և Իրաւ:"

Բայց այժմ ոչ գոհանան. զի ժողովուրդքն ե-տուն զընծայս 'ի ձեռն քահանային. այսինքն՝ զհացն և զբաժակն. և միջնորդ և բարեխօս հաշտութեան առաքեցին զնա առ Հայր: Իսկ նա առեալ զայն՝ եմուտ առաջի Հօր:

Եւ սարկաւագն յառաջեաց. և պէսպէս բա-նիւք զգուշացոյց զժողովուրդն. այլ և հրա-մայեաց նոցա գոհանալ զտեառնէ:

Իսկ նոքա կան և սպասեն քահանային, մինչև նա հաշտեցուցիչ բանիւք յողորմութիւն ածէ նոցա զհայրն. և զընծայսն, զոր առաքեցին՝ ընդունի 'ի ձեռաց քահանային. և ապա այն-ուհետև զգոհացողականն երգեն զերգ: Բայց այժմ քահանայն առեալ 'ի ժողովրդենէն ըզ-պատասխանս աղօթիցն՝ ասէ:

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայոր-դոր փութով միշտ երկրպագանելով փառա-ւորել զքեզ Հայր ամենակալ:"

Սոյն արժան է ասէ և իրաւ ամենայորդոր. այսինքն՝ զմիմեանս յորդորելով հանապազ եր-կրպագութեամբ փառաւորել զքեզ Հայր՝ որ զամենեսեան կալեալ խնամես:

,, Որ.քոյին անզննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զկրճիմն:"

Անքննելի և հօր արարչականից բան՝ միածին որ-դին է, զոր առաքեաց հայր. և զանէծան՝ որ կայ և կրճիմն էր ընդ մեզ և ընդ ինքեան, եբարձ 'ի միջոյ:

,, Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս 'ի քեզ:"

Ապա յորժամ եբարձ զանէծան՝ որ միջնորմն և կայր էր ընդ մեզ և ընդ քեզ, յայնժամ իւր ին-քեան ժողովուրդ հաստատեաց զեկեղեցի, որք 'ի քեզ հաւատացին. և թէ այս որպէս եղև՝ ասէ:

,, Ապա զննելի բնութեամբ ըստ 'ի կուսէն անստեսութեան՝ հաճեցաւ բնակիլ 'ի մեզ:"

Առաջին բնութիւն բանին հօր՝ անքննելի ասաց. իսկ զայս քննելի ասէ զ'ի կուսէն ծը-նունդն: Վասն զի թէպէտ և 'ի վեր քան զմարդոյ էր 'ի կուսէ ծնունդն. սակայն իբրև զմարդ 'ի կուսէն ծնաւ ըստ առաքելոյն: Ըստ 'ի կուսէն անստեսութեան: Այն է անստես-ութիւն՝ զոր էառ 'ի կուսի արենէն. և միա-ցոյց ընդ ինքեան. և այնու հաճեցաւ բնակիլ 'ի մեզ 'ի մեր բնութիւնս:

,, Ապա նորագործ աստուածապէս ճարտարա-պետեալ զերկինս երկիր արար:"

Ապա զմարդ ճարտարապետեաց. և որպէս եղև երկիրս երկին՝ այս է:

,, Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի-կայ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք 'ի փայ-լակնացայտ և յանմատոյց լուսոյ աստուածու-

թեանց. Ողեալ այդպիսիդ մարդ յաղագս
մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնա-
յինան պարել հոգեղէն պարս :"

,, Եւ ընդ սերովբէան և ընդ քերովբէան մի-
աձայն սրբասացութեամբ յօրինել նուագս.
և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ
նոսին և ասել :"

Ասաց առ հայր թէ քո որդին ճարտարապետ
եղև. և զերկիրս երկին արար : Եւ այս էր
ճարտարապետութիւն նորա. զի որք զուարթ-
նոց հրեշտակացն ջոկք դողային 'ի լուսոյ աստ-
ուածութեան նորա և ոչ կարէին հայիլ , այն-
պիսին մարդ եղև և ընդ մեզ շրջեցաւ. և մեզ
համարձակութիւն ետ երկնային և հոգեղէն
սերովբէիցն և քերովբէիցն պարակից և եր-
գակից լինիլ. և զնոցա զերգսն երգել : Զոր
լուեալ ժողովրդեան զայսպիսի ազդումն բանի
'ի քահանայէն հաստատեն զբան նորա. և ա-
ղաղակեն բարձր ձայնիւ առ քրիստոս այսպէս

,, Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց.
Լի են երկինք և երկիր փառօք քո : Օրհնու-
թիւն 'ի բարձունս. օրհնեալ որ եկիր և գա-
լոց ես անուամբ տեառն. ովսաննայ 'ի բարձու-
նըս :"

Ամենայն բանք ժողովրդեանն առ քրիստոս է ,
որպէս և քահանային առ հայր.
Ովսաննայն փրկութիւն 'ի բարձանց ասի.

Յոհաննոյն բաղջափարած ասէ ։

ՍՈՒՐԲ Սուրբ Սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ ։"

Յաւհաննայն որ ասացն թէ սէրովբէիցն ձայնակից արար զմեզ որդին ․ զոր ժողովուրդքն լուեալ սէրովբէանման Որդւոյ մատուցին զերեքսրբեանն օրհնութիւն ։ Իսկ քահանայն հօր մատոյց ։ Եւ պօղոս ՚ի գործս առաքելոցն՝ Հոգւոյն ասէ զայն ․ քանզի մի է բնութիւն երրորդութեան ․ իսկ անձն երեք ։

,, Եւ ո՛վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ՚ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս ։"

Եւ ո՛վ կարէ պարծել , կամ թէ բանիւ պատմել կարասցէ զհօր զանչափ զբարեաց գործոցն առատութիւն ․ և որ իցէ այս ։

,, Որ և անդէն իսկ ՚ի նախնումն զանկեալն ընդ մեղօք զանազան եղանակօք խնամեալ բա- փոխեցեր ։"

՚Ի լինելութենէ աշխարհի սկիզբն անէ պատմել զերախտաւորութիւնն աստուծոյ ․ զոր և ասէ թէ անդէն իսկ յառաջնումն զմարդկային բնութիւնս , որ անկաւ մեղօք ՚ի դրախտէն՝ պէսպէս օրինակաւ մխիթարեցեր ։ և թէ որո՛վ մխիթարեաց՝ ասէ ։

,, Մարգարէիւք , օրինացն տուչութեամբ , քահանայութեամբ և ստուերակերպ երնջուցըն մատուցմամբ ։"

Նախ մարգարէս եւ զմովսէս և զայլսն · և ապա զօրէնսն 'ի ձեռն մովսէսի : Իսկ քահանայապետ զահարոն և զնմանս նորա : Նոյն և երինջքն, որք մատչէին զոհ և ողջակէզ՝ ըստուեր և շուք էին այս Ճշմարիտ պատարագիս, որ է քրիստոս : Նոյն յորժամ սոքա ոչ կարացին փրկել, 'ի սոցա կատարածին զորդին առաքեաց · որպէս և ասէ :

,, Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք : ''

Վասն զի կամեցաւ հայր զամենայն գիր պարտուցն մերոց պատառել, որպէս և ասէ զայս ինչ :

,, Ետուր մեզ զորդիդ քո միածին՝ պարտապան և պարտս · զենումն և օծեալ · գառն և երկնաւոր հաց · քահանայապետ և պատարագ : Այժմ ամենայնի որդին եղև պարտապան.քահանայ, զի որպէս զպարտապան անհնարին ադամայ՝ 'ի խաչ ել : Իսկ պարտք · քանզի մեք ամենեքեան զնա տամք յամենայն աւուր փոխանակ պարտեաց մեղաց մերոց · զենանի որպէս զուարակ · և մատուցանէ զինքն հօր՝ որպէս զօծեալ քահանայ · մեռանի որպէս զգառն անմեղ · և լինի մեզ կերակուր որպէս զհաց 'ի յերկնից իջեալ · որպէս զ.քահանայապետ եհեղ զիւր արիւնն · և պատարագեցաւ որպէ զՃշմարիտ մեռեալ · և Թէ որպէս՝ ասէ :

,, Վասն զի ինքն է բաշխօղ · և նոյն ինքն

բաշխի 'ի միջի մերում մի՛շտ անծախապէս։"

Մինչև ցաստ օրինակաւ ասաց. իսկ այժմ պարզ ասէ զորդւոյ տնօրէնութիւնն։

" Սան զի եղեալ հաւատեաւ և առանց ցնորից մարդ. և անշփոթ միութեամբ մարմնացեալ յաստուածածնէն և 'ի սուրբ կուսէն մարիամայ։"

Ստուգապէս և առանց ցնորից. այսինքն առանց կարծեաց մոլաց մարդ եղև. իսկ օրինակ մարդանալոյն, այսինքն անշփոթ էր միութիւն աստուածոյն և մարդոյն. քանզի երկու բնութի̃ թէպէտ միացան, սակայն ոչի՛նչ շփոթեցան. այլ կատարեալ մնացին. զի Քրիստոս աստուած և մարդ է կատարեալ։

" Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց։"

Որպէս զստոյգ ճանապարհ գնան, այսպէս և նա զամենայն զկիրս մեր բաց 'ի մեղաց կատարեաց. որ է քաղցն և ծարաւն և այլն ամենայն։

" Նա յաշխարհակեցոյցն և յաւիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչ։"

Նա 'ի կատարելն ամենայնի եկն կամաւ 'ի խաչն, որ պատճառ և աւիթ եղև փրկութեան մերում։

" Նստեալ զհայն 'ի սուրբ յաստուածային յանմահ յանարատ և յարարչագործ 'ի ձեռս իւր օրհնեաց գոհացաւ սրբեաց եբեկ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակեր-

ուայն ասելով·

„ Առէք կերէք, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:”

Ի վերնատանն զայս խորհրդածեաց · որպէս և պատմէ աւետարանն: Նա զհացն յարարչապետեղծ ՚ի ձեռսն, որ զերկինս և զերկիր գոյացոյց · օրհնեաց և աստուածացոյց · գոհացաւ յօրինակ մեր · զի և մեք յորժամ ճաշակել կամիցիմք ՚ի հացէն, նախ արժան է զի գոհասցուք զՀօրէ և զորդւոյ տնօրէնութենէ: Եբեկ խաչանման և ետ իւրոց սրբեալ աշակերտացն: Զի և մեք սրբոցն և ընտրելոցն միայն տացուք զնա:

„ Այս է իմ մարմին՝ որ յաղագս ձեր և բազմաց:

՝Քանզի ոչ միայն աշակերտացն, այլ և բազմաց ՚ի քրիստոս հաւատացելոց բաշխի ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:

„ Նոյնպէս և զբաժակն առեալ օրհնեաց, գոհացաւ, էարբ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով · Արբէք ՚ի սմանէ ամենեքեան · այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց:”

Զբաժակն՝ որ ասաց թէ նախ ինքն էարբ, զայն յայտ արար եթէ այսպէս ախորժելի փափագմամբ ճաշակեմ զմահ, որպէս ծարաւի ոք զբաժակ: Նոյնպէս և դուք պարտիք յոյժ պա-

քեաւ սրտիւ մերձենալ 'ի մարմին և յարիւն իմ սուրբ:

,, Եւ զայն մի՛շտ իւր յիշատակ առնել, պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդին քո միածին:"

Եւ զոր ինքն արար՝ զնոյն դաւանեալ մեզ պատուիրեաց առնել. զի զայն առնելով մեր՝ մահու նորա յիշատակին անմոռաց լինի 'ի մեզ:

,, Եւ իջեալ 'ի սուրբին վայրս մահու մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ՝ և զնիգս դժոխոյն աւարառեալ հզօրեղապէս՝ զ.քեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ աստուած՝ զաստուածդ կենդանեաց և մեռելոց:"

Մարմնովն 'ի գերեզմանս էջ. և բանական հոգւովն 'ի դժոխս. զոր սուրբին վայր մահու կոչէ. և զնիգս նորա, որք էին դրունք՝ աւարառեաց. այսինքն արհամարհեաց զօրեղապէս: Եւ այսու զօրութեամբս, զոր արար՝ ծանոյց մեզ թէ դու միայն ես աստուած կենդանեաց և մեռելոց. փասն զի զոր յերկրի կատարեաց կամօք քո զմարդկան փրկութիւն, զնոյն և 'ի դժոխս եցոյց:

Եւ առնու զընծայսն 'ի ձեռն և ասէ:

Եւ արդ՝ մեք Տէր ըստ այսմ հրամանատուութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ:"

Եւ երբեւ զամենայն աշխարհական բանս զայսո-
անիկ զորս ասաց նախ, որովք և 'ի հաշտութիւն
է ած զհայրն երկնաւոր համարձակ պատգամա-
ւոր քահանայս որ առաքեցաւ 'ի ժողովրդե-
նէն, մանաւանդ թէ և պարտական ողորմելոյ
արար զհայրն, այնուհետեւ բուռն հարկանէ
զնուիրացն. առնու 'ի ձեռն քահանայն. որպէս
թէ զայս լինչ ասէ առ հայրն: Եթէ պատմեցի
ես առաջի քո զխորհուրդ ամենօրհնութեան
որդւոյ քոյ. 'ի ձեռս քո տամ այժմ զնշանակ
չարչարանաց միածնի քոյ՝ որ է հացս և գինիս.
զոր ունիմ այժմ 'ի ձեռս իմ: Եւ դու առ-
ցես զսա 'ի ձեռաց իմոց. և ընդունեալ ունեցես
զապկես վիրաց դորա՝ որ վասն մեր. և զխոցուածս
կողին. զարեան բեւեռացն. զթուք, զապտակն և
զայլն ամենայն. զի տեսեալ զայդ ամենայն՝
իջցես 'ի գութ ողորմութեան՝ մեղօք յանցու-
ցելոցս. վասն որոյ ասէ. Եւ արդ մեք Հայր՝
ըստ քոյ միածնի հրամանացն համարձակեցաք
յառաջ ածել զայս մեծ խորհուրդս, որ գիտէր
զկամս քո:

,, Յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ
չարչարանսն. զկենարար խաչելութիւնն. զե-
րեքօրեայ թաղումն. զերանելի յարութին.
զաստուածավայել համբարձումն. զնստիլն ընդ-
աջմէ քո հայր. զահաւոր և զփառաւորեալ
զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհ-
նեմք:"

Զայս ամենայն՝ զորս թուեաց քահանայս՝ ասէ

Թէ յորժամ զայս խորհուրդս կատարեմք, զմտաւ ածեալ յիշեմք. և յորժամ զայս ամենայն խոստովանիմք ՚ի յառաջ ածեալ հացիս և բաժակիս, յայնժամ դարձեալ ասեմք:

Դու եդեալ ընծայսն ՚ի վերայ սեղանոյն՝ և ասէ.

„ Դու զքոյս ՚ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:”

Այսինքն՝ զքոյս մ՚ածին ՚ի քոյոց կամաց առաքեալ՝ դարձեալ զսա քեզ նուէր և ընծայ մատուցանեմք:

Դու զայս տեսեալ ժողովրդեանն զի զնուէրն՝ զոր ետուն ՚ի ձեռս միջնորդին իւրեանց՝ ընկալաւ ՚ի ձեռաց նորա Հայրն, յայնժամ ուրախացեալ զուարճանան: Դու զգոհութիւնն՝ զոր նախ արժան համարեցան, իսկ այժմ երգեն ասելով:

„ Յամենայնի օրհնեալ ես Տէր: օրհնեմք զքեզ. գովեմք զքեզ. գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ տէր Աստուած մեր:”

Մեծ և բազմապատիկ են երախտիք քո առ մեզ քրիստոս՝ զորս արարեր նախ. և այժմ ևս տանես: Վասն ամենայն բարեացն զորս արարեր՝ օրհնեմք զքեզ. գովեմք և գոհանամք: Իսկ ակնունիմք թէ դեռ և՛ս տանիցես: Աղաչեմք զքեզ՝ զի արասցես և ոչ անարգեսցես զմեզ:

Քահանայն եռաշխափարած տայ :

„ Ո՛վ քեզ արդարև Տէր Աստուած մեր զո_
վեմք . և զքեն գոհանամք հանապազ :"
„ Որ զանց արարեր զմերով անարժանութիւն .
այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ
կարգեցեր սպասաւորս :"
Փոխանորդէ քահանայս զգոհացողական երգս
ժողովրդեանն . և առ հայր մատուցեալ ասէ
թէ՝ խրատեցի էր զքեն գոհանալ հանապազ .
զի անտեսեցեր զմեր չարաչար գործսն , և ան_
պատմելի քո միածնի որդւոյ խորհրդեան սպա_
սաւոր արարեր զմեզ :
„ Ոչ յաղագս մերոյ ինչ բարեգործութեանց ,
յորոյ յոյժ թափուր եմք և միշտ ունայն
գտանիմք հանապազ , այլ 'ի քո բազմագեղ
ներողութիւնդ ցանգ ապաւինեալ՝ համար_
ձակիմք մերձենալ 'ի սպասաւորութիւն մար_
մնոյ և արեան միածնի քոյ տեառնդ մերոյ
յիսուսի քրիստոսի :"
Ճշմարտապէս 'ի ներողութիւնն աստուծոյ
հայելով հանապազ իշխեմք մերձենալ յաստ_
ուածային սեղանն . և ոչ եթէ 'ի մերս գործ
վստահանամք : Եւ դու տես այժմ , որ գո_
հանայ միայն . քանզի ընկալաւ զհայցուածն
և զընծայսն 'ի ձեռաց նորա : Որում վայել է :
Խաղաղութիւն ամենեցուն :
Ժողո". Եւ ընդ հոգւոյդ քում :
Սար" : Աստուծոյ երկրպագեսցուք :

## Ժողովուրդ" ։ Առաջի քո Տէր ։

Քահանայն խոնարհեալ երկիրպագանէ սեղանոյն և ասէ ։

Պարտ է գիտել զի ամենայն բանք աղօթիցս որք մինչև ցայս պատմեցան 'ի քահանայէն այնպիսի են ։ Զոր օրինակ եթէ յիշխանաց որ յաղագս յանցանաց ուրուք բարկանայ ծառային իւրում ․ և ոմն 'ի սիրելեաց իշխանին կամիցի 'ի հաշտութիւն ածել զնա ընդ ծառային, նախ աղերսէ զի հաշտեսցի և զընծայսն ընդունիցի՝ զոր ետ ծառայն ։

Եւ երբև զայն առնու ․ գիտէ այնուհետև զի հաշտեալ է ընդ ինքեան ․ նախ գոհանայ զնմանէ ․ և ապա համարձակի զայլ ևս խնդրուածս խնդրել 'ի նմանէ ։ Նոյնպէս և այժմ միջնորդ քահանայս արար ․ զի պատմեաց նախ զամենայն տնօրէնութիւնն յաշխարհի ․ և ետ զընծայսն 'ի հայրն ։ Երբև էառ և հաճեցաւ հայրն, գոհացաւ քահանայն զնմանէ ․ իսկ այժմ համարձակի այլ իմն խնդիրս առնուլ 'ի նմանէ ․ և զի՛նչ լիցէ խնդիրն այսինքն ։

### Աղօթք ։

„ Երկրպագանեմք և աղաչեմք և խնդրեմք 'ի քէն բարերար աստուած ։ Առաքեա 'ի մեզ և յառաջի եդեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քո և զէակից սուրբ Հոգին ։"

Զհոգին սուրբ աղերսեալ հայցէ. զի որ-
պէս յայնժամ յետ կատարման տնօրէնութեան
որդւոյն եկն 'ի սուրբ առաքեալսն, նոյնպէս
և այժմ նախ զտնօրէնութիւն որդւոյն պատ-
մեաց. և ապա հայցէ երկրպագութեամբ ըզ-
հոգին սուրբ 'ի հօրէ: Բայց եթէ տարա-
կուսեսցի ոք՝ թէ զիա՞րդ զհոգին սուրբ և ո՛չ
զորդին աղաչէ իջանել և կատարել զհացն և
զբաժակն Մարմին և Արիւն իւր, այսպէս
գիտասցէ. զի թէպէտ մի է կամք երրորդու-
թեանն, սակայն ամենայն շնորհաց բաշխումն
'ի հոգւոյն սրբոյ իջանէ 'ի մեզ. և հոգին սբ
է կատարիչ ամենայն շնորհաց. որպէս ունիս
քեզ օրինակ նախ զմարգարէսն. և յետոյ զա-
ռաքեալսն. Այլ և ինքն որդին նախ զհոգին
էառ տնօրինաբար 'ի յորդանան. և ապա հո-
գւովն վարեցաւ յանապատն փորձել 'ի սա-
տանայէ. և յաղթեաց փորձողին:
“Նոյնպէս և այժմ իջանէ հոգին սուրբ 'ի վե-
րայ նշանակացս քրիստոսի. որպէս և յայնժամ.
և առնէ զսա Աստուած կատարեալ:

Այս քահանայն խոնարհեալ ընծայիցն և ասէ:

„Որով զհացս օրհնեալ՝ Մարմին ճշմար-
տապէս արասցես տեառն մերոյ և փրկչին յի-
սուսի քրիստոսի. Սարկաւագն՝ ամէն:”
“Քանզի մինչև ցայժմ միայն օրինակ էր հացն
և բաժակն. հայցէ 'ի հօրէ զհոգին սբ. զի իջցէ և

սրբեալ կատարեսցէ զնշանակ մարմնոյն և արեանն քրիստոսի՝ ճշմարտապէս մարմին և արիւն քրիստոսի։ Զի զոր օրինակ՝ մեռեալ մարդ միայն օրինակ մարդոյ է, և ոչ ստուգապէս մարդ. զի ոչ ունի զհոգին՝ որ կենդանի առնէ։ Ապա թէ լիցի 'ի շնորհացն աստուծոյ՝ զի հոգի մտցէ 'ի մեռեալ մարմինն յայն և կենդանացուսցէ զնա, այնուհետև ո՛չ է օրինակ մարդոյ՝ այլ ճշմարտապէս մարդ կենդանի։ Այսպէս հացն և գինին մինչև ցայժմ նշանակ և օրինակ էր քրիստոսի. իսկ յորժամ կատարիչ հոգին իջանէ և կատարէ զնա, լինի ճշմարտապէս քրիստոս։ Եւ որպէս յայն մեռեալ մարմինն՝ հոգին աներևութապէս գայ և կենդանացուցանէ. և յորժամ կենդանանայ մարմինն՝ յայլ ձև ո՛չ փոխանակի. այլ միայն կենդանական զօրութիւն 'ի նա առաւելու։ Այսպէս և 'ի հացս և 'ի գինիս աներևութապէս իջանէ հոգին սուրբ։ Եւ ոչ եթէ զձև հացին և բաժակին 'ի միս և յարիւն փոխէ, այլ միայն զաստուածական զզօրութիւն և զներգործութիւն մարմնոյն և արեանն քրիստոսի 'ի հացն և 'ի բաժակն տպաւորէ։

„ Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։"

Ի դատապարտութիւն գտանի սա անարժանիցն. որք անխտրաբար մերձենան 'ի սա իբրև 'ի սոսկ հաց և 'ի բաժակ։ Այլ և նոցա է

դատապարտութիւն՝ որք սակս փառս որսալոյ 'ի մարդկանէ. և կամ յաղագս ագահութեան ընչից պատարագեն զքրիստոս, յայտնապէս ընդ-քրիստոսավաճառ հրէիցն դատապարտին:

Իսկ յայսմ հետէ երևելի նուիրօքն աղերսէ զՀայրն. քանզի էջ Հոգին սուրբ 'ի վերայ նուիրացն. և մեռեալ նիւթն կենդանացաւ. և անշունչն շնչացաւ. օրինակն ճշմարտութի̅ եղև. և նշանակն ստուգապէս Մարմին և Ա-րիւն քրիստոսի կատարեցաւ: Վասն որոյ այ-ժըմ իբրև յաստուած հայեցողութեամբ հայ-

ցէ ասելով:

„ Սովաւ շնորհեա՛ զսէր՝ զհաստատութիւն և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխար-հի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց, աշխարհի, իշխանաց, ժողովրդեաց, ճանապարհորդելոց, նաւելոց, կալելոց, վտան-գելոց, աշխատելոց. և որք 'ի պատերազմունս

բարբարոսաց:"

Սովաւ ասէ, այսինքն թէ 'ի ձեռն այսր աստ-ուածացեալ ընծայիս, շնորհեա՛ մեզ հա՛յր ըզ-սէր առ աստուած և առ մարդիկ. և հաստա-տութիւն 'ի հաւատս և յամենայն գործս բա-րեաց. զխաղաղութիւն առ աստուած և առ մարդիկ՝ յոգի և 'ի մարմին: Իսկ թէպէտ ա-մենայն աշխարհի տայցէս զայս մեծ պարգևս. սակայն առաւել հօտի քում եկեղեցեաց քր-իստոնէից. և ապա 'ի գլխաւորացն սկսեալ

մինչև ցյետինն հայցէ առ զողորմութիւն։
« Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութի.
և անդոց զպտղաբերութիւն. և ախտացելոց ի
պէսպէս ցաւս փութապէս զառողջութիւն։»
Յայտ առնէ այսու թէ ամենեքեան՝ որք հա-
ւատով անձնուէին այսմ աստուածային շնոր-
հիս, առնուն զմեծամեծ պարգևս։

« Սովաւ հանդերձ զամենեսեան յաւաչագոյն ի
քրիստոս զննջեցեալսն՝ զնախահարս, զհայրա-
պետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս,
զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս
և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ, և զամե-
նեսեան յաշխարհական կարգէ զարս և զկա-
նայս հաւատով վախճանեալս։ Ընդ որս և մեզ
այց արասցես՝ բարերար ամ աղաչեմք։»
Ցուցանէ այսու թէ ոչ միայն կենդանեաց,
այլ և որք միանգամ ճշմարիտ և սուրբ հա-
ւատով ննջեցեին ի քս ամենեցուն է սա յոյս և
անձկալուի փրկութե։ Զոր և սկիզբն արա-
րեալ յաղամանց հետոյ թուէ զամենայն զնա-
հապետսն առաջինսն, զորս հարս և հայրապե-
տըս կոչեաց. և ապա զկնի զառաքեալսն և ըզ-
մարգարէսն և զայլսն ամենեսեան։ Իսկ թէ
ասիցէ ոք եթէ՝ զիա՞րդ զարդարան յիշատակէ
սա իբրև զկարօտս՝ որոց և մեք իսկ ակնու-
նիմք բարեխօսութեան. այսպէս իմասցի։ Քան-
զի թէպէտ և փառաւորեցան նոքա և հան-
գեան. սակայն ոչ բնաւ ի լրումն հասին. այլ
օր ըստ օրէ քաղցնուն և զառաւելութիւն

խնդրեն ։ Վասն զի անմարմին փառացն՝ յու-
նոցա հասին, չէ՛ հնար թէ կատարումն լինի ․
քանզի իմաստութիւն հոգևոր և գիտութիւն
աստուածային է փառքն այն ։ Արդ՝ եթէ այսմ
երկրաւոր գիտութեանս չէ՛ հնար եթէ լրումն
լինել ․ ո՞րչափ ևս առաւել այնմ՝ որ իմանա-
լին է և աստուածային ։ Այլ հանապազ օր
ըստ օրէ ՚ի փառաց ՚ի փառս վերանան ․ որպէս
և հրեշտակք ․ զի յամենայն աւուր նոր գի-
տութիւն առնուն յաստուծոյ ․ այսպէս և
սուրբքն ։ Վասն այնորիկ նախ նոցա հայցէ
քրիստոսիւ զողորմութիւն ․ և ապա զայլսն յի-
շէ մի ըստ միոջէ ։ Բայց տես դու ո՞վ իմաս-
տուն այր և խոհեմ ՚ի կարգ և ՚ի խորհուրդ
աղօթիցդ՝ զոր մատուցանես ․ թէ որպէս նախ
զկենդանիս յիշատակես և ապա զննջեցեալսն ․
և այսու իմա՛ հաւաստեաւ, թէ նախ կենդա-
նեաց է մերկութիւն աստուածային զենումս
այս, և ապա մեռելոց ։ Եւ ունայն են բանք
այնոցիկ՝ որք կարծեն տղայական մտօք, թէ ոչ
է պարտ զկենդանիս ոք յիշատակել ՚ի պատա-
րագն ։ Ո՛վ եղբայր՝ մի թէ թագաւորք և
իշխանք, եպիսկոպոսք և քահանայք, ճանապար-
հորդք՝ նաւորդք՝ հիւանդք և այլք ո՞չ իցեն
կենդանիք ։ Արդ կամի՞ս ուսանել զճշմարտու-
թիւն ։ Պատարագս, զոր մատուցանես՝ ո՛չ է
հնար եթէ միում միայն առնել զնա, որպէս
և կարծեն ․ այլ և ամենայն աշխարհի, որպէս
և բանք աղօթիցս յայտ առնեն ։ Բայց եթէ

ոք հաւատով տայց ՚ի ձեռս քո ողորմութիւն զի՛նչ և իցէ . և յանձն առնէ քեզ յիշատակել զինքն կամ զայլս, զկենդանիս և կամ ըզմեռեալս ՚ի պատարագն . նախ տե՛ս և քննեա՛ զգործս նորա թէ է՞ յայնպիսեաց՝ զի արժան իցէ յիշել առաջի ահաւոր խորհրդոյն ։ Մի՛ գուցէ անառակ ոք և պոռնիկ իցէ . շնացող և արբեցող . զրկող և անօրէն ։ Արդ եթէ յայսպիսեաց ոմանց առցես ինչ և պատարագեսցես զքրիստոս, կցորդ եղեր չարեաց նոցա . և վրիպեալ գտանիս ոչ միայն ՚ի խնդրուածոյդ, այլ և ՚ի քահանայական կարգէդ ։ Ապա եթէ այր երկիւղած և աստուածապաշտ իցէ . և տայց ողորմութիւն ինչ ՚ի ձեռս քո հաւատով յիշատակել զինքն ՚ի պատարագն՝ զոր մատուցանես, դու թէպէտ վասն աշխարհի մատուցեր զպատարագն, սակայն նա՝ որ ետ զողորմութիւն, առցէ ըստ յուսոյն իւրում զիոխոստարէնն ։ Ոչ միայն յայնմ պատարագէ՝ զոր դու մատուցեր, այլ և յամենայնէ՝ որ ընդ բոլոր աշխարհս յամենայն եկեղեցիս ուղղափառաց պատարագի քրիստոս՝ յայս կեանս զհարիւրապատիկն առցէ . և յաշխարհին՝ որ գալոցէ, զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ ։ Զի մի՛ է տէրն . և մի՛ է խորհուրդ մարմնոյ և արեան նորա, որ ընդ ամենայն տիեզերս կատարի ։ Նոյնպէս և թէ մեռելոց վ՟ պատարագես՝ ընտրեա՛ և տե՛ս եթէ բարի՞ գործովք եղին յաշխարհէ . և կամ թէ՝ մե-

ղէն և զանձեալ զղջացան և խոստովանութբ
և արտասուօք հաճոյացան . և թողութեան
արժանի եղեն ։ Իսկ որք ոչ այնպէս . այլ յան-
զղջութեան և յանզգուշութեան եգիտ զնոսա
մահն . և ոչ յետին պահու զղջմանն արժանի
եղեն , վասնորոյ ոչ է արժան յիշատակել պա-
տարագաւ ։

Այլ և անձին քում առաւել զգոյշ և պատ-
րաստ լեր՝ յամենայնի սուրբ և մաքուր լինել
յամենայն արատոյ մեղաց . մանաւանդ յագա-
հութեան և ՚ի փառասիրութեան ախտից . զի
ահա՛ քրիստոսավաճառ լինիս՝ որ չար է քան
զյուդային ։

Վասն ընդէ՞ր յորժամ ասեն այսքան յիշեսցի ողորմեոյն յիշատակ առնե-
նէք ննջեցելոյն ՚ի լուր ժողովրդեանն ։

Սարկաւագն հայր է ժողովրդեանն . քան զի
որպէս քահանայն , որ մեծ էր պատուով՝ ըզ-
քրիստոսի յիշատակն մատոյց հօր . նոյնպէս և
սարկաւագն , որ պաշտաւոր է նմին՝ զսրբոցն
կատարէ զյիշատակ . զի սուրբքն անդամք են
գլխոյն յիսուսի ։ Իսկ որ առընթեր ննջեցելոյն
անուշահոտ խնկօք հանդերձ յիշատակէ զսուրբսն ,
յայտ առնէ թէ սուրբքն իւրեանց անուշահոտ
առաքինութեամբքն մերձ են աստուծոյ ։ Իսկ
զայն յետ կատարման պատարագին առնէ . քան-
զի նախ քրիստոս պատարագեցաւ . և ապա
սուրբքն մահակից և չարչարակից եղեն քրիս-

տուն . և որպէս ընթերցուածն մահն յիշեմք 'ի հաշտութիւն հօր . այսպէս և շարբոց նորին : Իսկ որ բարձր ձայնիւ գոչէ 'ի լուր ժողովրդեանն . զի լուեալ՝ նախանձորդք լիցին վարուց նոցա :

Կիսաձայնոյն ասէ :

,, Աստուածածնին սրբոյ կուսին մարիամու և յովհաննու մկրտչին . սրբոյն ստեփաննոսի նա_ խավկայիցն և ամենայն սրբոց եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագիս աղաչեմք :,,

Որդ՝ եթէ յիշատակել զսուրբսն՝ սարկաւա_ գին է կարգ՝ որպէս և ասացաւ , զիարդ նախ քահանայս սկսանի ասել զայս :

Վասն զի բանքս այսորիկ գծև աղօթից ունին . Իսկ սարկաւագին ոչ է իշխանութիւն աղօ_ թել առաջի ժողովրդեանն , այլ միայն քարո_ զել : Վասն այսորիկ նախ քահանայս անէ սկիզբն . Իսկ թէ՝ հրամանաւ և համարձակութեամբ առաջի սարկաւագին . և այսպէս նա ասեալ 'ի նմանէ՝ յիշատակէ զայս զսուրբսն :

Սարկաւագն զայս յաջախորդմն առաջնոյն խոր_ կարկելով շուրջ զանձամբն . և ուղղէ զդէմս 'ի պատարագն . և ասէ բարձր ձայնիւ 'ի լուր ժողովրդեանն . ,, Առաքելոց սրբոց , մարգա_ րէից , վարդապետաց և այլն բոլոր կարգին :,,

Այս է մեծութիւն բանին սարկաւագին . զանձն զի ասէ նա առ հայր՝ թէ ընդ սրբոց պատարա_ գին՝ որ պատարագեցաւ , յիշեցին ամենայն

սրբոյն առաքինութիւնք առաջի քոյ՝ բարեխօս վասն մերոյ փրկութեան։ Իսկ ժողովուրդքն նցորդքին բանի տարկուսադքին ասելով. Յիշեա՛ տէր և ողորմեա՛։ Իբր ոչ եթէ մոռացեալ իցէ են առաջի աստուծոյ՝ վասն այնորիկ յիշել ասէ. այլ այսպէս ասէ՝ թէ նոցա առաքինութեանց յիշատակաւ՝ որ է առաջի քոյ անմոռաց, 'ի նոսա հայեցեալ շարժեայ գութ քո 'ի վերայ մեր. զի աղաչելոց մեր են։

Իբ. Քահանայն երկրպագանէ ձեռամբ նոյին ասելով.

„ Յիշեա՛ տէր և ողորմեա և օրհնեա՛ զսուրբ կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի քո սուրբ։ Զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ. և ազատեցեր խաչիւն սրբով։ Շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն։"

Զհայրն աղաչէ քահանայս յիշել զքրիստոս և զսուրբն իւր. զքրիստոս իւր զործովքն՝ զոր նախ լինին քահանայն յիշատակեաց. և զսուրբն՝ զորս աւելթեր նորին սարկաւագն վերաձայնեաց։ Արհնաբանէ զաղօթսն՝ զոր քրիստոսի միայն խնդրեաց. այժմ վերայ նովաւ և սրբովք նորին՝ որք են անդամք նորա, թախանձէ զհայրն յիշել և տալ զխաղաղութիւն և զողորմութիւն կաթուղիկէ՝ որ է համօրէն եկեղեցեաց։ Որք քարոզութեամբ առաքելոցն ժողովեցան 'ի մի հօտ արեամբ գընեալք միածնի քոյ։

,, Յիշեա՛ տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն 'ի մեզ ըզբանն ճշմարտութեան :"

,, Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր՝ այս անուն , շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ :"

Ուղղափառադաւան զեպիսկոպոսունսն առէ՝ որք համառօտօղք են բանին . այսինքն՝ մեկնիչք և ուսուցիչք : Իսկ սարկաւագն 'ի նշանել քահանային զաղօթան , խորհրդաբար գայ դարձեալ 'ի նոյն առաջի տեղին իւր առ աջակողմն քահանային , և նշանի ասել :

,, Պահութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր աստուած մեր վասն սուրբ և անմահ պատարագիս՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս . և այլն ըստ կարգին :"

Սարկաւագին յաջմէ քահանայի կեալն զպատիւ նորին և զ.յոյժ մտերմութիւն՝ որ առ քահանայն , նշանակէ . որ և զ.յոյժ մտերիմ որքան ընդ աջմէ աստուծոյ ասէ լինիլ աւետարանն . զայն և ինքն սարկաւագն նշանակեաց , որ յաջակողմն սեղանոյն հոգաւ և յիշատակեաց ըզսուրբսն ,

Այս ժամանակին ասէ դպիրն ձայն։

,, Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զքո առաջի կայեալ ժողովուրդս և զպատարագս մատուցողս։ Այլ պարգևեա՛ սոցա զպիտոյսն և զօգտակարսն։''

Զժողովուրդն որք կան առաջի սպասաւորին, և զպատարագի մատուցողն, որք են ամէն քահանայական դասքն՝ յիշեա՛. քանզի թէպէտ և մին միայն է մեծարեալ 'ի պաշտաման յայն. այլ կան ամենեքեան քահանայք և դպիրք՝ որք կան և սպասաւորեն աստուածային առաջին խորհրդոյն՝ իւրաքանչիւր ըստ իւրում կարգին մատուցիչք են պատարագին։

,, Յիշեա՛ Տէր և ողորմեա՛ և օրհնեա՛ զպտղաբերս և զպատարագաբերս եկեղեցւոյ քում, որք յիշեն զաղքատս ողորմութեամբ։ Այլ հատո՛ նոցա զպարգևս նոցա ըստ ընդարձակութեան քում հարիւրապատիկ աստ և 'ի հանդերձելումն։''

Արդ բանիւս՝ փակէ զամենայն ընծայաբերս և զպատարագս, որք յեկեղեցիս և կամ 'ի քահանայս և կամ յաղքատս ինչ նուիրեցին։ Այլ յանդիմանէ զայնոսիկ՝ որք թիւս և համարս պահանջեն թերահաւատութեամբ. և միոյ անձին միայն համարին փրկութիւն։ Իսկ ընդարձակութիւն բնութենականին ասէ. փոխան զի աստուածոյ բնութեան կցորդեալ է իւր առատութիւնն։

„ Ողորմեա տէր և ողորմեա և գթա ի հոգիս հանգուցելոյն ։ Հանգո զնոսա և լուսաւորեա և դասաւորեա ընդ սուրբս քո յարքայութեան երկնից . և արժանի արա ողորմութեան քում ։ Նաև զկենդանիսն և զայս զհանգուցեալսն յիշէ՝ որդւոյն և յառաջագոյն . քանզի երկնաբնութիւն է այս նախասացեալ աղօթիցս ։ Եւ թէ է՞ր վասն զնոյն դարձեալ կրկնեաց . վասն զի անդ յորժամ քրիստոսի յիշատակն կատարեցաւ . և հացն և բաժակն անմահացան որոր զայն աղօթս ։ Իսկ այժմ դարձեալ ըզկնի յիշատակի որբոյն պատարագի հաւարեցու մերոյն զնոյն աղօթս կրկնաբանեալ ։

Եւ աստ թէ կամիս զոր յանուանէ յիշել , բարւոք է՝ յիշեմ ։

„ Ողորմեա տէր և զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս զկենդանիս և զըհանգուցեալս . կատարեա զխնդիրս հայցմանց նոցա և զմերս , ընդ ուղղորդն և որ լի է փըրկութեամբ ։"

„ Եւ վարձատրեա բարերարացն մեծաց և զերանելին բարութեանց ։"

Այս ողջեանց ասէ և խնդ ուղիղ մտօք , եթէ ողջին պատուհասեալք զամենեսեան միով բանիւս այսու զկենդանեաս և զհանգուցեալս . և ողջին այլ պէտս է զոր յանուանէ յիշել քեզ ։ Պատարագերս . այսինքն՝ ասելեմ ։ Քանզի է բազում անուանք զի անպատշաճ և թիւր լինին խնդրուածքն մեր ։

Վասն որոյ հայցէ զի զկամս այնոցիկ որք յանձնեցին զինքեանս մեզ և զմերս յուղղորդըն , և որ փրկութեան է մեզ առիթ՝ ուղղեսցէ . և վարձատրեսցէ ամենեցուն զանանց բարիսն ։

„ Տէր զատեալ զխորհուրդս մեր տաճարացն յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քի՛ն։” Խոնարհէ զի զուտ և մաքուր լիցին խորհուրդք ճաշակողացն ։

„ Ընդ որում քեզ հօր ամենակալի հանդերձ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ վայել է փառք իշխանու”։”

„ Տէր եղիցի ողորմութիւն մեծին աստուծոյ և փրկչին մերոյ յիսուսի քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ ։

Ժողովուրդն։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Ընթերցի՛ր զսա այսորիկ ենթա ծանօթոյ տարրագրութեան տառկապագրին ։

Ի Սերովբէ ։

Յայտ է գիտել թէ այսուհետև փոխման է առ խորհուրդ պատարագիս հանդերձ աղէ աղէս աղերսանօք 'ի քահանայէն . զի մինչդեռ ոչ էր այս կատարեալ , ոչ ինչ ունէր համարձակութ՛ սարկաւագն ասել ժողովրդեանն . վասն այսորիկ լռեալ դադարեցաւ ։

Իսկ սոքա քահանայքս ետուն խորհրդականս ըստ
քրիստոս հօր · առին և 'ի նմանէ զհոգին · հայ-
ցեցին և պէսպէս ողորմութիւն ։ Նոյն յորժամ
'ի լրումն զխորհուրդս ածեալ յանդգեցին ,
սարկաւագն ասէ քարոզութեամբն ժողովր-
դեանն՝ եթէ ձեր փրկութեան նուէրն՝ զոր
ետուք 'ի քահանայսն , մատեաւ առաջի աստու-
ծոյ · և նա ընկալաւ հաշտ և քաղցր կամօք ։
Արդ՝ պատրաստ լերուք զի փոխարէն պատա-
րագին ձերոյ զշնորհսն՝ զորս քահանայքն առին
յաստուծոյ ,'ի հոգին ձեր վայելեցէք ։ Իսկ այս-
պէս զգուշութիւն առ նոցա · զի պատրաս-
տեսցին առ հանդերձեալ շնորհն , որ խնամեալ
է 'ի մէջ նոցա · այսինքն՝ զի դեռևս ընդ աստ-
ուած հայր ոչ համարձակեալ են ժողովուրդն
խօսել ։ Այլ և ոչ զհոգւոյն լցումն 'ի վերայ
պատարագին իմացեալ · զի այս ամենայն ծա-
ծուկ և խորհրդաբար 'ի ներքին վայր սրբոյ խո-
րանին կատարեցաւ 'ի մէջ քահանայիցն ։ Իսկ
ժողովուրդքն միայն քանի լինէին խօսակից՝
զանբովելի անկանելերելով զերդ և զյամենայ-
նի զոհաբանութիւնն , որպէս և անդր է յայտ-
նեալ ։ Արդ՝ այսուհետև հանդերձեալ են ըստ-
հոգւոյն տէրունական ընդունելոյ · վասն որոյ պարտ
է զի որպէս քահանայքն նախ ընդ հօր խօսե-
ցան և ապա 'ի ձեռն քրիստոսի զհոգին 'ի նը-
մանէ ընկալան , այսպէս լիցի և սոցա նախ՝ հա-
մարձակել և առ աստուած հայր աղօթել · և
ապա զպարգև շնորհին 'ի նմանէ ընդունել ։

Քահանայն աղօթէ ։

,, Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։ Ժողով. Տէր ողորմեա ։ ''

Ընդ ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւ առաւելագոյնս զՏէր աղաչեսցուք

Այսմ մատուցելոյ առաջի եւ աստուածային պատարագիս որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս ըն- ծայի ։

,, Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ 'ի սուրբ յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն եւ զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն սրբոյ ըն- կալցուք. և այլն 'ի [illegible] ։ ''

Քահանայ [illegible] 'ի վե- րայ [illegible] է. զի աղաչեսցեն ըն- [illegible] ։ [illegible]

[illegible] Համբարձմանութեան ։

Իսկ [illegible] [illegible] [illegible] [illegible] աղօթէ ։

,, Սուրբ [illegible] հաւատութեան եւ հայր ողոր- մութեան' [illegible] ։ Որ 'ի վեր [illegible] [illegible] ։ ''

Այն է [illegible] աստուծոյ առ մեզ [illegible] [illegible] [illegible]

որն ։ Ասան զի նոցա տուեալ կոչեցաւ յա-
ջացս հիմնարկութեան գաստատամանկին առ նաւա-
իսկ մէջ հայր անուանեալ զինքն փառս բա-
ջումբ ազատութեան իւրոյ առ մեծապարտաւ ։
:: Ասան զի նոցա տուեալ կոչեցար ․ իսկ
մեզ հայր հաճեցար անուանիլ զթագուն ։"
:: Որ այժմ ահա աղաչեմք զքեզ՝ պայծառին
առ 'ի քեն զհարստ և ջերմեռանդան անուա-
նագրութեանս շնորհ օրհնութէ պայծառացու-
ցեալ ծաղկեցո՛ 'ի մէջ եկեղեցւոյ քում սըր-
բոյ ։"

Այս է պայծառանալն և ծաղկիլն զի փառս
սուրբս և գործս մաքուրս շնորհեսցէ մեզ ․ զի
համբարձեալ լինիցուք պայծառին մեծ և տարածե-
լի անուանս կոչել , որպէս և ասէ ։

:: Որ ետուր մեզ համբերանքատաւն բարբա-
ռով բանիւ զբերանս մեր ․ կարդալ զքեզ
երկնաւոր հայր՝ երգել և ասել ։"

Սա է մինչև բաղկապարան եկեղեցին ։

:: Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն
քո ։"

Եւանցի որպէս զորդիս հարազատս զնմանու-
թիւն հօրն բերեն յինքեանս ․ և յերկրպագուս
'ի բաց կոչեալ՝ 'ի յերկինս վերացեալ հոգ-
ւով ։ Այսմ որոյ աղաչեն սուրբ լինիլ ան-
ուան նորա ․ այսինքն՝ զի փառս պարկեշտս և
գործս առաքինիս ստասցուք ամենեքեան շնոր-

հօրն աստուծոյ. որպէս զի անուն նորա փառաւորեսցի 'ի գործոց մերոց. որպէս այն զոր ասէ. Տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յերկինս է.

,, Եկեսցէ արքայութիւն քո."

Քանզի ընդ ծանր ծառայութեամբ մեղացն եղաք. և սատանայի արքայութիւնն տիրեաց մեզ. Արդ բարձցի ասէ նորա իշխանութիւն. և քո թագաւորութիւնդ տիրեսցէ մեզ. Եւ այս եթէ որպէս եղիցի՝ ասէ.

,, Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի."

Այսինքն սատանայի կամացն խափանումն լինիցի 'ի խորհրդոց մերոց. և քո կամացդ յօժարութիւն որպէս յերկինս 'ի հրեշտակական կարգի, նոյնպէս և 'ի մեզ 'ի յերկրաւորս 'ի մարդիկ կատարեսցի.

,, Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր."

Ոչ զի մարդիկ եմք կարօտ բնութեամբ. վասն որոյ զհաց զօրութորէն հայցեմք. Այլ և զիմաստութիւն որ է հաց բանական հոգւոյն. Նոյն և ինքն Քրիստոս՝ հաց է յերկնից իջեալ.

,, Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց."

Քանզի բիւր երախտեաց քոց, որ առ մեզ՝ պարտական գտաք. զի ոչ եղաք շնորհակալ. այլ անհնազանդ գոլով օրինաց քոց՝ բարկացուցաք զքեզ. Եւ արդ թողութիւն շնորհեա

մեզ այսպիսի պարտաւորեցոյց. որպէս և մեք այնոցիկ՝ որք մեզ են պարտապանք և առ մեզ եղեն յանցաւորք, թողաք 'ի սրտից և անոխա-կալ եղաք:

„ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն ։"

Փորձութիւնք եթէ 'ի մեղաց են և եթէ 'ի մարմնաւորական վնասուց, յամենայնէ զերծիլն հայցեմք:

„ Այլ փրկեա՛ 'ի չարէն:"

Չար է նոյն ինքն սատանայ և խաբէութիւն նորա, յորմէ զերծիլն հայցեմք: Եւ զաւար-տումն աղօթիցս 'ի քահանայն յանձնեն. զի նա է հայր սոցա որպէս և տէր:

## Ասէ:

Տէ՛ր տէրանց աստուած աստուածոց. թա-գաւոր յաւիտենական. Արարիչ ամենայն ա-րարածոց. հայր տեառն մերոյ յիսուսի քրիս-տոսի: Մի՛ տար զմեզ 'ի փորձութիւն և մի՛ 'ի դատապարտութիւն. այլ փրկեա՛ 'ի չարէ. և ապրեցո՛ 'ի փորձութենէ:

„ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:"

Ամենեցուն, որ յերկինս և որ յերկիրի՝ դու ես տէր աստուած. որ հայր ես բնութեամբ տեառն յիսուսի: Վասն զի քո է սեպհական թագաւորելն. և զօրութիւնս առնելն. և քեզ փառք յաւիտեանս ամէն:

« Խաղաղութիւն ամենեցուն :»

Ժողովուրդ. Եւ ընդ հոգւոյդ քում :

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք :

Ժողովուրդ. Առաջի քո Տէր :

Օ՛ սա հայր աղօթեսցէ լռելեայ . այժմ կամի 'ի աւետութեան անել պատարագային խորհրդոյն . վասն որոյ նախ զխաղաղութիւն տայ : Եւ սարկաւագն հրամայէ երկրպագանել . զի մի՛ հարեանցի յանկարծադէպ աւազէն զպատեհ խորհրդոյս : Դարձեալ՝ զի մի՛ յորժամ աւազէն , յայնժամ խոնարհեսցին յերկրպագանել , և զգեցցին 'ի աւետութենէն . վասն որոյ նախ հրամայէ երկրպագանել :

Եւ քահանայն խոնարհեցուցեալ զգլուխն իւր նման ժողովրդեանն՝ աղօթէ առ հոգին սուրբ :

« Քանզի որպէս աստուածայ 'ի վերոյ եղեւ ամենայն ընդհանրականութիւն 'ի հոգւոյն սրբոյ է : Եւ նա հոգին սուրբ աստուածային զնշանակէ : Վասն այնորիկ քահանայս այժմ առ հոգին սուրբ աղօթէ վասն ժողովրդեանն :

Մեկնութիւն աղօթիցն զոր առնէ հոգւոյն և ժողովրդեանն :

ՈՐ ԱՂԲԻՒՐԴ ես կենաց և բղխումն ողորմութեան Հոգիդ սուրբ : Ողորմեա ժողովրդեանս , որք խոնարհեալ երկրպագանեն աստուածութեանդ քում :»

Սուրբ լինելոյ ամենայն ուրեք շնորհին սուրբ անուանեն միշտ գիրք . վասն զի զոր օրինակ սուրբ Հոգւոյ յորժամ գրեալ էին առաքեալք միով տեսութեամբն իւրով զամենայն ծառս և զծառայս և զբնաս գրածոյս 'ի սկզբանէ հանդ և 'ի զանազան զոյգս և 'ի զօրութիւնս փոխարկեն : Ս. յայտնի և Հոգւոյն սուրբ միով պարզ և խոնարհ առատաձեռնութեամբն իւրով առաքեալք զգրածս եկեղեցւոյ , և սկզբանէ շնորհս և զօրութիւն այս ամենեցուն բաշխե- բաշխանչերոյ հաւատոյն շահից՝ որպէս ասէ առաքեալն : Զի որ հայցէ այժմ քահանայս . զի զնոյն ատաութիւն շնորհայն որդութեան՝

տայց ժողովրդեանն՝ որպէս ասէ :

,, Պահեա՛ զնոսա ամբողջս և անարատս :"

Ոչ միայն մարմնով այլ առաւել ևս հոգւով

լինելով մաքրեք ողջ և անարատ :

,, Տպաւորեա՛ յոգւոյ սոյա զերե մարմնոյ

ցուցանել :"

Այս թէ՝ զոր մարմնով այժմ ձևացեալ կան առաջի քո 'ի պատարագութիւն , և խոնարհել երկիրպագանեն , զնոյն ցուցանէ և յոգւոյ ացս տպաւորեա . զի և հոգւով ևս լինին առաջի քո և հոգւով երկիրպագցեն :

,, Որ 'ի ժառանգութիւն և 'ի վիճակ հանգերձելոցն բարեաց Քրիստոսի Յիսուսի

Տեառն մերում :"

Զի այն վիճակի ժառանգութեան հանգերձելոց բարեացն արժանացին : զորոյ ընկե-

տասին գիտուսին տէրամբ ընծայման գրքատա-
կանն :

„ Ի՞նչ օրուն քեզ հոգւոյդ որդւոյ և հօր ա-
մենակալի վայել է :”

Այս [illegible] հայն ՚ի [illegible] : Այս տառ-
[illegible] :

Նաւս այս յունական է : Ինչ ՚ի մէջս՝ Աւետէն
դրէք կամ ՚ի վեր հայեցէք Թարգմանի :

Այս [illegible] ՚ի [illegible]
[illegible] :

՚Ի [illegible] :

՚Ի սարկաւագի ձայնէն ընդդատեան ժողո-
վուրդքն՝ յորժամ ասաց Թէ երկիւղիւ ՚ի վեր
հայեցէք : Այլ իբրև լուան և տեսին յոր ցան-
կային , ասէ քահանայն Թէ՝ սրբութիւն է սա,
բայց սրբոյն և մաքուր եղելոցն լինի սա ՚ի
սրբութիւն , որք խոստովանութեամբ և ար-
տասուօք զինքեանս մաքրեցին ՚ի մեղաց :

Այս [illegible] :

„ Միայն սուրբ՝ միայն տէր՝ յիսուս քրիս-
տոս ՚ի փառս աստուծոյ հօր . ամէն :
Օ՛ պատրաստութիւն խոստովանելն յաւելու ու-

բախտութենէն առնելով. տէր մեր քահանայ 'ի մեզ ուսոյց լոյս սրբութիւն կատարելոյս ընդ մարմնոյ և ընդ արեան: Մի այլ միայն սուրբ է սուրբդ սրբոց. որ միայն տէր է երկնի և երկրի տէր մեր յիսուս քրիստոս 'ի փառս հօր փառաւորեալ :

Քահանայն առնելով զնոյն յերկրորդն յետինն ասէ :

,, Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:" Ժողո". Ամէն: Օրհնեալ Որդին սուրբ Աստուած ճշմարիտ: Ժողո". Ամէն: Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ: Ժողո". Ամէն: Քահանայն. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւի": "

Քանզի 'ի յերրորդութենէն ընկալաւ զայս մեծ շնորհս. վասն որոյ զգոհացողական երգս նմա մատուցանէ :

Եւ ժողովուրդքն զնոյն երկրորդեն գոհանալէն առնելով. Ամէն Հայր սուրբ՝ Որդին սուրբ՝ Հոգին սուրբ:

Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ քահանայն զարհուրեալ խոնարհի և աղօթէ ։

ՆԱՅԵԱՑ Տէր մեր յիսուս քրիստոս յերկնից ՚ի սրբութենէդ քումմէ և յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ ։”

Եւ յայտ ցուցանէ զանբովանդակելի աստուա_ ծութիւն Որդւոյն ։

„ Որ՝ ՚ի վերև և ՚ի կեցուցանել զմեզ · Որ ընդ հօր նստիս և աստ պատարագիս ։”

Այս է սրբութիւն և կենդանութիւն ամե_ նեցուն քրիստոս · զի թէպէտ և ընդ հօր է անբաժանաբար , սակայն և ՚ի մերում սեղա_ նոյն պատարագի հանապազ ։

„ Արժանի արա զմեզ յանարատ մարմ_ նոյ քումմէ և ՚ի պատուական արենէդ · և ՚ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս ։”

Զի մեք ըստ գործոց չունիմք համարձակու_ թիւն մերձենալ ՚ի քեզ · բայց դու արժանա_ ցուսցես ողորմութեամբ · և ՚ի ձեռս մեր ամե_ նայն ժողովրդեանս · զի ամենեքեան միացեալք հաղորդ լինիցուք քեզ ։

Եւ ապա ասացեալ երկրպագանէ և համբուրէ զսեղանն և առեալ զսուրբ Մարմինն որ ՚ի Խորանն բռնելով ՚ի Վե_ րանն · և ասէ զաղօթս զայս ։

„ Տէր Աստուած մեր՝ որ կոչեցեր զմեզ յա_ նուն միածնի Որդւոյ քոյ քրիստոնեայս ։”

Զգեստաւորեցեր զոր ինչ փառս Աստուածութեան պա_

տարազին գոհութիւն և աղօթք. զոր և ա-
ւարտեալ առանձնաբար օրհնութեամբք 'ի նք
Երրորդութիւնն:

Եւ դարձեալ զօրհնութիւն և զփառս միա-
ւորութեամբ սխաանի, դարձեալ գոհութիւն,
դարձեալ և մաղթանս:

Զորս ոչ վասն ընաւ մարդկութեանս, այլ
վասն հաւատացելոց միայն: Եւ քանզի աստ
մեծամասնութեամբ Թէ՛ սրբութիւնք սրբոց
վայել են. և յայտնեաց Թէ որպիսիք են սըր-
բութիւնքն յաւէլ, Հայր սուրբ՝ Որդի սուրբ՝
Հոգի սուրբ:

Եւ սուրբ Պատարագն քրիստոսեան՝ վայել է
սուրբ Երրորդութեանդ ընծայ. և Թէ որք
հաղորդին սրբութեանցն՝ և նոքա մաքուր և
սուրբ պարտին լինել: Եւ զի մարդկային բը-
նութիւնս միշտ աղաւեղանայ 'ի սխալանաց. և
ոչ կարէ ամենևին անսխալ լինել. վասն որոյ
կոչէ տկարութեանս մերում օգնական զգը-
թութիւնն աստուծոյ. զի որով մաքրութիւն
առացեալ՝ 'ի մաքուրն մերձեսցուք: Եւ նախ
հայր ասելով՝ շարժէ 'ի գթութիւն զմար-
դասիրութիւնն աստուծոյ. և ապա այնու 'ի
հայրն յարեալ ասէ:

,, Որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ
քո քրիստոնեայս:"

Զի այնպիսի ասէ շնորհ ետուր մեզ, մինչ զի
զքո միածնի որդւոյդ առաք 'ի վերայ մեր
զանուն. քանզի դա կոչի Քրիստոս. իսկ մեք

քրիստոնեայք ։

Այսու և գոհանամք և 'ի գործ ածեմք ։ Զի թէ մինչ օտարքն էաք՝ այսպէս սէրդ քո բարերարեաց գթալ · մինչ միածնիդ քոյ առնել բաժին և ժառանգութիւն · և զորդիս անուանիլ ։ Այս որչափ քրիստոնեայքս գոլով՝ աղեկէզ լինիցիս 'ի մեզ վասն քոյ միոյ միածնիդ և սիրելի որդւոյդ լինելոյ մեր և կոչեցելոյ յանուն դորա ։

„ Որ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր աւազանաւն 'ի թողութիւն մեղաց ։”

Ո՛չ առէ միայն բաժին և ժառանգութիւն ետուր զմեզ միածնի որդւոյդ քում ըստ խոստացելոյն մարգարէին թէ · Տաց քեզ զհեթանոս 'ի ժառանգութիւն · այլ և եղբարս ես կամեցար առնել զմեզ սիրելի և համագոյ որդւոյդ քոյ · զի եղիցի դա անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց ։ Յաղագս այնորիկ զաղտեղութիւն մեղաց մերոց լուացեալ մկրտութեամբ աւազանին և վերնային ծննդեամբ հոգւոյն սրբոյ՝ զմեզ որդիս վերածեր · և այնուհետև ջեռուցեր զհայրական սիրոյ բորբոքումն · զի ելոյդ 'ի քէն սուրբ հոգիդ · որ երկնեաց զմեզ՝ և քեզ որդեգիրս վերածեաց ։

„ Որ արժանի արարեր զմեզ հաղորդել սբ͞ մարմնոյ և արեան միածնի քոյ ։

Ու քանզի առաւել յոյժ առատացաւ սէրդ քո 'ի մեզ · զի ո՛չ ժուժեցեր որդի ունել միայն զքո բնութեամբ ծնեալդ · այլ և զմեզ

որք շնորհօք որդեգրեցաք. զի յաղթեալ 'ի մե-
ղաւորութենէդ` խառնել զնա ընդ մեզ կա-
մեցաւ ։ Որպէս զի նա գլուխ մեր լինիցի. և
մեք մարմին և անդամք նորա լինիցուք մարմնով և
արեամբ նորին` 'ի նա յօդեալ և պատշաճել.
զի բազումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, որ-
պէս ասէ առաքեալն. և ըստ այսմ մի որդի
ամենեքեան ։

Եւ յետ այսպիսի անպատմելի սիրոյ յիշատակ
առնելոյ, ապա զաղաչանս առաջի արկանէ չան-
կանել 'ի պատուոյն և 'ի շնորհացն վասն մե-
ղացն սխալանաց. և դու ասէ` որ յանձնեալ յա-
ռաջին փառաւորութեանցն յայսպիսի ածեր 'ի
լաւութիւն, և այժմ մաքուրս արասցես զմեզ.
զի այնպէս 'ի մարմին և յարիւն Քրիստոսի
մերձեսցուք, որպէս և ասէ ։

,, Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր, արա զմեզ
արժանի ընդունել զհաղորդութիւնս զայս
մեզ 'ի մեղաց թողութիւն ։ ''

Վասն այնր հաղորդութիւն կոչէ. զի կցոր-
դի նա մեզ և մեք նմա ։ Յաղագս այսորիկ և
զայսպիսի շնորհէ գոհանալ պարտ է արժա-
նապէս, որպէս և ասէ ։

,, Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ
Որդւոյ և սուրբ Հոգւոյդ այժմ և'' ։ ''

Յա— երկրպագանէ և բարձրացուցանէ ասելով ժողովրդեանն ։
Մ՝եկնութիւն ։

Որպէս 'ի սկզբան պատարագին՝ յորժամ եմուտ առաջի սեղանոյն՝ երկրպագեաց ։ Դարձեալ յորժամ զհոգին խնդրեաց իջանել և կատարել զպատարագն . և այս երրորդ անգամ է՝ որ երկիրպագանէ ։ Վասնզի որպէս պատգամաւոր ոք՝ յորժամ առաջի թագաւորին մտանէ, երկիրպագանէ նախ՝ և ապա ըզպատգամն ասէ . այնպէս էր և քահանային առաջին երկրպագութիւնն ։ Նմանապէս և որպէս ոք յորժամ շնորհ ինչ առնու 'ի թագաւորէն, երկիրպագանէ և գոհանայ . այսպէս և սա յորժամ զհոգին ընկալաւ՝ երկրպագեաց և գոհացաւ ։ Նոյնպէս և այժմ յորժամ զայլ խնդրուածսն ընկալաւ, գոհանայ երկիրպագանելով ։ Նմանապէս և այժմ կրկին անգամ վերացուցանէ զխորհուրդն . զի 'ի ճաշակումն յորդորեսցէ զժողովուրդն, որպէս և
ասէ խսկ ։

„ Ի սուրբ 'ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի ։ Ճաշակեցուք սրբութեամբ՝ որ իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում ։ Սա է կեանք՝ յոյս՝ յարութիւն՝ քաւութիւն և թողութիւն մեղաց ։ Սաղմոս ասացէք տեառն աստուծոյ մերում . սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորին մերում անմահի՝ որ նստի 'ի կա-

ուրս ընտրելքն Աստուածայինս :"

՚Ի այս՝ երկրեցույց գնասս, յորժամ վերացուցն և
ասաց. ՚Ի սրբութիւն սրբոց. և նորա զաւ-
հուրեցան ՚ի ձայնէն՝ գիտելով զախտաչափն
ընութիւնս իւրեանց :

Այլ լին դարձեալ յորդորէ զնոսա ՚ի ճաշա-
կումն առնել. թէպէտ և է սա սրբութիւն
սրբոց, այլ այն յորժամ սրբէք զձեզ խոստո-
վանութեամբ և հաւատալք ճշմարտութբ,
կեանք և յոյս և յաղթութիւն և քաւութիւն
և թողութիւն մեղաց ընդունիք ՚ի սմանէ :

Ողջ նշանակէ այսու-հետեւ հրամանատրութիւն արքա-
-ւորին օգնութի փառս. որպէս և ասէ :

" Այժմս ասացէք ուտեան աստուծոյ մրում
դպիրք ձայնիւ քաղցրութեան զերգս հոգե-
ւորս : Ով իմ անձն վայել են առաւօտք և օրհնութեր-
ալէքուք և երգք հոգեւորք. պաշտօնեայք հան-
դերձ երգովք այժմս ասացէք, և զՏէր յեր-
կինս օրհնեցէք :"

Որպէս յառաջնումն մինչ վերաբերելոր պա-
տարագս ՚ի ծաղկեցեալն ՚ի մեղանն՝ հրաման
տայր աւրհնաւորն դպրացն եղանակել. այս-
պէս և այժմ ասէ. զի հանդերձեալ է նոյն
շնորհն իջանել առ ծաղկաւորդն ՚ի բաշխումն :
Եւ այն որը ալագա. զի ազդումն երածշտա-
կան եղանակին լինելն ունի զօրութիւն. զի
ընդունատուցեալ զարթուցանէ զմիտս ամենե-

ցուն առ ՚ի անհնչումն շնորհին :

"Քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յու- րախութիւն կամ՝ ՚ի տրտմութիւն , որպէս զերգոցն ձայն . որ թէ ըստ պատշաճին լինիցի : Վասն այսորիկ և եկեղեցին աւանդութիւն ընկալաւ զայն յարտաքնոցն : Եւ դարձեալ երգք աստուածային և քաղցրաձայնք զերգս և զցանկութիւնս մարդկան յերկրէ յերկինս առ աստուած ածեն :

Եւ արդ օրհնի եկեղեցին եղանակաւ զերգս դասաւոր- կեալն :

Մեկնութիւն :

Տեսանեմ թէ որպէս ՚ի քահանայէն առնուն զբանն աւետեաց . և ապա յեղանակս առեալ գեղգեղեն զմիտս և զմարմինս ամենեցուն բանիւն և եղանակաւն . և ՚ի խնձոյս ցնծութեան շարժեն :

Բայց է՛ր զի զզօրութիւն ասացելոցս քննեալ ծանիցուք . զի՞նչ ասէ :

,, Քրիստոս պատարագեալ բաշխի ՚ի միջի մե- րում :''

Որպէս թէ՝ ո՛վ եկեղեցի ծանի՛ր զառակալի խորհուրդն . զի Քրիստոսն այն , զոր ՚ի միջոյ մերմէ վերածեալ քերովբէապէս տուաք ՚ի ձե- ռըս քահանային պատարագ մատուցանել աս- տուծոյ հօր փոխանակ ամենեցուն՝ նոյն ինքն

մատեաւ յերկինս. և զհաշտութիւնն առ աստուած և առ մարդիկ ուղղեաւ՝ այժմ դարձեալ գայ 'ի մէջ մեր պատարագ 'ի հօրէ. և դեղ կենաց բաշխի ամենեցուն:

Իսկ ժողովուրդն՝ մինչ հոգւոյ երգեն՝ սարկաւագն ընթերցէ 'ի յեկեղն. և հաղորդեսցէ սացուցանոց և ասէ:

„ Ո՜ր օրհնութիւն կամ զո՛ր գոհութիւն 'ի վերայ հացիս և բաժակիս մատուսցուք: Այլ Յիսուս՝ զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ այժմ և միշտ և յաւէ՛":"

Պարզեալ ասէ:

„ Խոստովանիմ և հաւատամ զի դու ես Քրիստոս որդի աստուծոյ՝ որ բարձեր զմեղս աշխարհի:"

Ապա երեքկեալ արկանէ 'ի բաժակին ասելով.

„ Լրումն Հոգւոյն Սրբոյ:"

Ապա աղօթս խնդրէ ի փեսայէն պէսպէս հայցուածս անձին և ժողովրդեանն և ամենայն աշխարհի՝ որպէս և կամի:
Ապա յետ աղօթից առնու ճաշակել ասելով.

„ Մարմին քո անապականն լիցի ինձ 'ի կեանս

և սուրբ Օրհնօքս ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց ։

Եւ մինչդեռ նա շրջի առ ի փոխելն պաշտօնն, հրաման տայ ճաշակել այնոցիկ՝ որք ՚ի հաղորդականացն կարգին են ։

Սրբենութիւն ։

Զոր օրհնեաց և ետ իւր զայն առաքելոց ։ զի նախ ինքն ճաշակեաց և ապա ետ առաքելոյն, զի և նոքա ճաշակեսցեն ։ Նմանապէս ահերին զառաքեալսն՝ խոր հաւատովն անուանեցաւ, որպէս և ասաց ։ Ոչ կոչեցի զձեզ ծառայս, այլ բարեկամս ։ Նա և երբեմն որդեակս կոչեաց զնոսա . և այլուր եղբարս ։

Իսկ աւարտեալ առնուլ զխորհուրդն սուրբ նուիրօքն՝ դառնայ առ ժողովուրդն ասելով . Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք ։

Սրբենութիւն ։

Զգուշացան վարդապետութեանցն որովք վարժեաց զնոսա . իսկ այժմ վախճան եղև ամենայնի . և զօրութեանն շնորհ, զոր խոստըելին ժողովուրդքն՝ եկն և եհաս . զոր ծանուցեալ յառաջ կոչէ պաշտօնեայն մանկունսն ։ Երկիւղիւ առէք և հաւատով յառաջ մատիք ։ Զի աստ երկրորդեալ՝ են սանձ և զգաստիչք

ստահակութեան անձնիշխան կամացն. այսինքն՝ երկիւղն և հաւատն. զի մինն առ աստուած ձգէ համարձակ, իսկ միւսն պահէ ընդ նովաւ

որպէս պարան է։

Զի եթէ երկիւղն միայն լինի, ուծանիմք 'ի նմանէ. և թէ հաւատն առանց երկիւղին՝ յանդգնիմք առաւել քան զարժանն։ Վան այսորիկ ընթեալ զերկիւղն ընդ հաւատն՝ և այնպիսի երաշխաւորս թեւօք ամբարձեալ զմի-տս՝ 'ի հաղորդս լինելն քրիստոսի վերածէք. առ 'ի հաւատալ թէ առ աստուածային մարմինն է վասն ձեր բաշխեալ. որպէս և է ճշմարտա-պէս. և մերձենալ 'ի առ որպէս 'ի հուր ըզ-գուշութեամբ. զի որով մաքրին ձեր ամենայն անօրէնութիւնքն և մեղքն որքին։ Զի ահա-ւասիկ այս մերձեցեալ 'ի շրթունս ձեր՝ լուա-նայ զամենայն անօրէնութիւնս. և զմեղս ձեր սրբէ 'ի ձէնջ, որպէս և զաստուածային մար-գարէին։ Զայս ասէ ածուխաղն՝ որպէս զի հրամանաւ և կոչմամբ. և անձնիշխան կամօք յառաջ եկեսցեն 'ի հաղորդութիւն. բաց այ-նըմ թէ. Մաքրեաց զծառայս իւր բարձրքա-րոզութեամբ կոչել 'ի խառնելչիս իւր և ասէ. Որ ոք իցէ անզգամ՝ եկեսցէ առ իս և առ-ցէ. և ցպակասամիտսն ասէ։ Եկայք կերէք 'ի հացէ ասոմ իմմէ. և արբէք զգինին՝ զոր խառ-նեցի. և ասեն մյր վասն։ Որպէս զի՝ թողեալ ասէ զանօրէնութիւնս կեցջիք։ Մի՛ ոք լինի այլ իմաստութեան քան զսա անուանեսցէ ա-

ղան • զի արդարև յոր ուստ ճաշակելեօք իմա-
ցութեան զխորհրդոյս զօրութիւն՝ ընդ մար-
մնոյս զգայականի, թէպէտ և անզգալ՝ է կամ
պակասամիտ, սակայն փութով փոփոխի զօ-
րութեամբ ճաշակմանն: Ապա եթէ միայն ընդ
մարմնով մերձենալն համարի բաւական՝ մնայ
քաղցեալ • նա և զի՞արդ պակասամիտն կցորդ:
Ո՛վ Տէր մեր յիսուս քրիստոս՝ հոգի է և
հոգւոյ կեանք • հոգւոյ կերակուր և հոգւոյ
հաց յերկնից իջեալ • և յերկրի մարմնով զգա-
լեալ երևեալ առ 'ի զգալիս այժմ կենա-
ցուցանել:

Ապա դպիրքն երգեն բարձր ձայնիւ:

,, Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ •
Օրհնեալ եկեալ յանուն Տեառն:

Քահանայն գայ ընդ առաջագին • և խաչակնքէ զժո-
ղովուրդն ասելով:

,, Կեցո՛ զժողովուրդս քո • և օրհնեա՛ զժա-
ռանգութիւնս քո • հովուեա՛ և բարձրացո՛
զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան:

Եւ հաղորդէ քահանայն զարժանաւորսն. և դպիրքն եր-գեն զերգս։ Եւ որչափ յամէ քահանայն ՚ի Ճաշակումն, դպիրքն այնչափ երկարեցեն զերգսն.

## Մեկնութիւն

[illegible]այն երգ դպրացն՝ ուրախական է. և յոր-դորումն ժողովրդեանն ՚ի Ճաշակումն։

Եւ դպիրքն երգեն։

„ Լցաք ՚ի բարութեց քոց տէր Ճաշակելով զՄարմին քո և զԱրիւն. փառք ՚ի բարձունս կերակրողին զմեզ։ Որ հանապազ կերակրես զմեզ՝ առաքեա ՚ի մեզ զհոգևոր քո զօրհնու-թիւն։ Փառք ՚ի բար։

Լուանայ քահանայն զձեռն. և սարկաւագն՝ մինչ նոքա եր-գեն, խնամով սրբէ շուրջ զսեղանովն. և առեալ զսպա-սն ՚ի սարկաւագատունն. և եկեալ հրամայէ ժողովրդեանն գոհանալ այսպէս։

„ Եւ ևս խոստովանութեան զանէր ապաշխարեսցուք։ Եւ ևս հաւատով ընկալեալք յաստուածա-յին սուրբ յերկնային յանմահ յանարատ և յանապական խորհրդոյս՝ զտեառնէ գոհացա-րուք։

Փոքր ինչ ունին ՚ի միմեանց զանազանութիւն ընթացք բանի գոհութեանն և օրհնութեանն։

«Քանզի օրհնութիւնն է յէից բարեացս աս_տուծոյ փառաւորութիւն: Իսկ գոհութիւնն՝ նորա ամենայն շնորհակալութիւն: Արդ՝ մինչև ցայժմ յաղագս որոյ ունէին շնորհ յաս_տուծոյ, օրհնէին: Իսկ այժմ դարձեալ նորա ընկալեալ զհասարակաց պարգևացս բաշխու_մըն, ՚ի վերայ որոյ գոհանալ հրամայէ դաստի_արակ նոցին առաքեալսն:

Որպէս զի և ըստ այսմ հաղորդ լիցին քահա_նայական աղօթիցն. որ նա ևս խորհրդաբար գոհանայ անդր ՚ի ներքին վայր սրբոյ խորանին:

Աղօթ.

Գոհանամք զքէն զքրիստոս աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան:

Յետ կատարման խորհրդոյն գոհանայ զքրիս_տոսէ. վասն զի ինքն ետ մեզ բարի ճաշակու_մըն ՚ի փրկութիւն մեղաց. և ՚ի կենդանութի՜ մեռելութեան մերոյ:

„ Սովիմբ պահեա զմեզ սուրբս և անարատս: Եթէ իցէ ատէ փախչիլ մեզ ՚ի յանցանս ինչ, սովիմբ, այսինքն՝ քո աստուածային մարմնով և արեամբ պահեալք լիցուք սուրբք և անարատք:

„ Բնակեալ զմեօք քո աստուածային խնամո_քըդ: Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և բարերարաց:

Այլ և դու Հովիւդ քաջ բնակեցիր ա.

մեզ և հոլովեսցես յանդաստանի գրոց մերոց քոց պատուիրանաց․ որք պատմիչք են կամաց քոց․ զի կամք քո սուրբ է և բարեսէր։

„Որով անցեալք յամենայն բանսարկուին ընդդիմութեանց։”

«Քոյին սուրբ պատուիրանօք և աստուածային սուրբ ճաշակմամբ ամրանամք յամենայն գայթակղութեանց սատանայի ։

„«Քում և եթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Դու քեզ միայնոյ քաջայաղթ և ճշմարիտ հովուիդ հետևիլ․ և առ ՚ի քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեան երկնից։”

«Քաջ հովուիդ միայն լսցուք․ լսօղք լինիլ ձայնի․ և յօժար կամօք հետևիլ։ Ու ՚ի կատարածի զպատրաստեալ տեղի սորոյն ， որ է արքայութիւնն երկնից՝ առ ՚ի քէն ընդունիցիմք։

„Աստուած մեր և տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ հօր և սրբոյ հոգւոյդ այժմ և”։”

Աշաղաղութեան անձնեցուն։

„Անքննելին՝ անհաս երրեակ Անքննութեանդ․ հաստիչ ընդունօղ անբաժանելի և անքակտելութեանց և միանական սուրբ երրորդութեանդ վայել են փառք իշ”։”

Անքննութիւն․ որ է կայելոցս ստեղծիչ ։

Յորժամ եպիսկոպոս իջէ պատարագիչն. ՚ի սոյն ժամու զգենու զեմիփորոնն. և գայ ՚ի մէջ եկեղեցւոյն:

## Մեկնութիւն

Պահանջապետն պատկեր է քրիստոսի. զի որպէս քրիստոս զամենայն անօրէնութիւն կատարեալ ՚ի վերայ երկրի դարձեալ առ հայր վերացաւ մարմնովն բարեխօս վասն մեր որպէս և ասէ առաքեալն. Որ է ընդ աջմէ աստուծոյ հօր, որ և բարեխօս լինի վասն մեր: Նա դարձեալ միաանգամ գալոց է հատուցումն առնել ըստ գործոյ. զնոյն և քահանայապետս ձևացաւ նախ. զի էջ խնկարկութեամբն առ ժողովուրդն և հաւասարեցաւ նոցա: Նա դարձեալ վերացաւ ՚ի սրբութիւն սրբութեանցն ՚ի բեմն, մերձ առ սեղանն աստուածական. և բարեխօսեաց առ հայր մինչև յայժմ: Նա և այժմ վասն ժողովրդեանն զգենու զեմիփորոնն. և իջանէ և աղօթէ յօրինակ միաանգամ գալստեանն. և զհատուցումն խորաքանչիւրոցն ցուցանէ. որպէս և ասէ.

## Աղօթք:

„ Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր. և սուրբ առնես զյուսացեալս ՚ի քեզ: Ի միաանգամ գալստեան խուրում քրիստոս զայնոսիկ, որք սաստ հաւատովք և գործովք

բարեաց օրհնեցին և փառաւորեցին զնա, օրհնէ տալով ։ Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ. և սուրբ առնէ, որք սրբեցին զանձինս իւրեանց յաղտոյ մեղաց յաղագս յուսոյն իւրեանց, որ 'ի նա ։

,, Կեցո՛ զժողովուրդս քո. և օրհնեա զժառանգութիւնս քո։"

Կեցո այժմ 'ի մեղաց. և օրհնեա 'ի հանդերձեալն ։

,, Զօրութիւն եկեղեցւոյ քոյ պահեա՛ ։''

,, Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով ըզվայելչութիւն տան քոյ ։"

Զօրութիւն կոչէ զբազմութիւն հաւատացելոցն. զորս և պահել աղաչէ 'ի փորձութեանց ։ Իսկ վայելչութիւն տանն աստուծոյ է սեղանն տր̄. զի որք սիրով համբուրեն, սրբեալք եղիցին յամենայն աղտոյ ։

,, Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ ։"

Փառաւորեա՛ զմեզ, յորժամ գաս հայրենի փառօք ։

,, Զխաղաղութիւն պարգևեա՛ ամենայն աշխարհի. եկեղեցեաց՝ քահանայից՝ թագաւորաց մերոց և զինուորեալ մանկանց նոցա. և ամենայն ժողովրդեան ։"

Քանզի այս մեծի պարգևիս, որ է խաղաղութիւն՝ ամենեքեան կարօտին. զոր հայցէ այժմ տալ ամենեցուն աննախանձաբար ։

„ Ո՛վ ամենայն տուրք բարիք և ամենայն պար-
գևք կատարեալք 'ի վերուստ են իջեալք առ
'ի քէն, որ ես հայր լուսոյ. և քեզ վայել է
փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և :"

Ո՛րչ այժմ եկեղեցւոյն առէք . Եղիցի անուն Տեառն
օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան :

Մեկնութիւն :

Յորժամ լուան զի քահանայն մեծա և բարձ-
րաձայնս ետ նոցա շնորհ փոխանակ օրհներգու-
թեանն, ևս յորդորին 'ի նոյն բաշխանօք սր-
տից. յայտ արարեալ թէ անուն Տեառն մե-
րոյ ոչ միայն այժմ օրհնեցաւ 'ի մէջ մեր, որ-
պէս վկայեաց Դաւիթ սուրբ՝ այլ և յայսմ-
հետէ օրհնեսցի մինչև յաւիտեան. այսինքն՝
յանկէան և յանսահմանն ժամանակի. զի յա-
ւիտեանն 'ի վեր է քան զժամանակն. և ոչ
մասն ժամանակի :

Եւ քահանայն դառնայ և ասէ 'ի վերայ ասոցս .

„ Կատարումն օրհնաց և մարգարէից դու ես
Քրիստոս աստուած փրկիչ մեր. Որ լցեր զա-
մենայն հայրական տնօրէնութիւնս քո :
Լից և զմեզ հոգւովդ քով սրբով :"
Ամենայն օրէնք և մարգարէք վասն Քրիստոսի
խօսեցան. զորս եկն և կատարեաց իւր տնօրէ-

նութեամբն ։ Դու զի հայրական ասէ, վասն զի հօր կամօքն արար զամենայն. լի՛ց զմեզ աստուածային հոգւոյդ քում ։

Դու երբեմն նշխար առ քահանայն. և առ օրհնեալ բաժակն ծնրադրեան. և ասասջիր. Օրհնեցից զտէր յամենայն ժամ, և այլն ։ Դու քահանայն խաչակնքելով զժողովուրդն ասէ՝ օրհնեալ եղիցիս, և այլն ։ Դու ասա՝ ՚ի տէր պատր- ձեսցի. զփակն լուսան ասելով ։

## Մեկնութիւն ։

Բաշխումն նշխարացն զայս նշանակէ. վասն զի ժողովրդոցն, որք կցորդեցան քահանայական օրհնութեանցն՝ պարտ է զի և սեղանոյն կցորդեսցին ։ Վասն այնորիկ լինի եթէ ոմանք, որք ոչ կարողանան յաստուածային խորհուրդն մերձենալ՝ այս սրբ. նշխարացս հաղորդեսցին հաւատով. որպէս թէ ՚ի փշրանաց սեղանոյ տ̃ն կերակրին, զոր և քանանուհին մխիթարեաց ։ Զոր և ոչ է պարտ երբէք ՚ի սոսկ հաց մերձենալ, այլ երբեք ՚ի մնացուածս աստուածային սեղանոյն. զի և ըստ չափու իւրեանց արժանաւորին շնորհաց յաղագս ճաշակմանն ։ Բայց թէ զի՞նչ նշանակէ սաղմոսն՝ զոր երգեն.

,, Օրհնեցից զտէր յամենայն ժամ ։”

Այս է. քանզի զայս սաղմոս յայնժամ երգեաց Դաւիթ, յորժամ փախեաւ ՚ի սաւուղայ, և գնաց առ քահանայապետն, և ետ նմա

քահանայապետն զհացն, զոր ոչ էր օրէն ուտել աշխարհականաց: Բայց եկեր ինքն դաւիթ և որք ընդ նմա էին, և այնու երաց զդուռն հաւատոյ. զի և աշխարհականք կերիցեն 'ի քահանայական հացէն, որ այժմ 'ի նորս քրիստոսիւ կատարեցաւ. յաղագս որոյ յաւարտման այսր խորհրդոյ երգեմք զայս սաղմոս: Եւ արդ՝ 'ի յաւարտել բանիցս խորհրդեան՝ զայս պարտ է զմտաւ ածել: Քանզի որք կատարօղք են սուրբ խորհրդոյ պատարագիս քահանայք, և կամ որք միայն հաղորդին 'ի սուրբ խորհուրդն աշխարհականք, ոչ է պարտ առանց պատրաստութեան լինել և յանդուգն երեւօք մերձիլ 'ի սուրբ և յաստուածային խորհուրդըն, և քամահանօք իբրև 'ի սոսկ հաց և 'ի բաժակ, և կամ թէ յաղագս արծաթոյ և կամ փառաց: Զի այնպիսիքն են՝ որք 'ի դատաստան անձանց իւրեանց ուտեն և ըմպեն. վասն որոյ և պարտական լինի գտանիլին Մարմնոյ և Արեանն տեառն. որպէս և յուդայն և որք զնէրըն 'ի խաչ հանին: Քանզի ասէ առաքեալն թէ՝ արհամարհեալ 'ուրուք զօրէնսն Մովսիսի՝ երկու կամ երեք վկայիւք մեռանիւր առանց ողորմութեան. վասն զի անողորմ սպանանէին զարհամարհիչս օրինացն Մովսիսի: Իսկ քանի՞ պատժոյ այն լինի արժանի՝ որ զորդին աստուծոյ յոտն ձգէ և զսուրբ մարմին և զարիւն նորա. զի որով սրբեցաւ ամենայն աշխարհ՝ յայն իբրև յանսուրբ և խոտնակ ինչ

քամահանօք հաղորդէ. զի ահեղ ակնկալութիւն
հանդերձեալ դատաստանին այսպիսեացս է.
այս է՝ բաժին և նախանձ հրոյ զե. հեննին: Պար-
ձեալ՝ մի՛ ոք անյուսաբար զերկիւղ ինչ 'ի
մէջ բերիցէ և ամենևին հեռացեալ օտարա-
նայցէ 'ի սուրբ և յաստուածային կենաց կե-
րակրոյս. զի որով 'ի մահու և 'ի մեռելութե
է յայտնապէս այնպիսին: Քանզի թէ զամե-
նայն առաքինութիւնս լիակատար ունիցի՝ և
ընդ հրեշտակս հաւասարեալ կենդանւոյն 'ի
յերկինս վերանայցէ՝ և 'ի հաղորդութենէ
մարմնոյ և արեան տեառն 'ի բաց կայցէ,
ճշմարտապէս ընդ սատանայի 'ի ներքին սան-
դարամետս կործանի: Զի երկու յանցանս
յանցանեն այնպիսիքն. մի՝ զի զհրաման տեառն
արհամարհեն. զայն՝ զոր ասաց. Զայս արարէ՛ք
առ իմոյ յիշատակի. և թէ՝ Ես եմ հացն կե-
նաց իջեալ յերկնից. որ ուտէ 'ի հացէս յայս-
մանէ, կեցցէ յաւիտեան: Եւս՝ որ ուտէ ըզ-
մարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի կեա-
նս յանձին իւրում. և որ ոչ ուտէ և ըմպէ,
ոչ ունի կեանս յանձին իւրում: Արդ՝ որ ան-
փոյթ առնէ զհաղորդութենէն, զայս ամենայն
քաղցր պատուէրս արհամարհէ:

Եւ երկրորդ յանցանքն նորա այն է, որ կա-
մապաշտութեամբ յանձնապաստան լեալ՝ մի-
այն իւրով առաքինութեամբն ակն ունի ար-
դարանալ:

Եւ փարձեալ են ամենքը՝ զի զբնական ինչ կե-
րպս կամ զմխտալանս ինչ յոչ կամաց՝ առաջի
արկանեն և ՚ի բաց կան ՚ի սուրբ խորհրդոյն ։
Եւ զայն ոչ հաւատան՝ զոր ասէ յովհաննէս ,
թէ արիւն որդւոյն աստուծոյ սրբէ զմեզ յա-
մենայն մեղաց ։

Նաև զայս գիտասցէ ամենայն ոք . զի է երբե-
մըն , որ սատանայ զմեզ յանցանս՝ առ ոչինչ
տայ համարիլ . և յորդորէ ՚ի հաղորդութիւն
Մարմնոյ և Արեան տեառն . զի այնու կորիցին
պատժոյ արժանի արասցէ ։

Եւ է երբեմն , զի զդոյզն և սակաւ սխալանս՝
մեծ և անհնարին երևեցուցանէ անիծեալն .
և ՚ի բաց օտարացուցանէ ՚ի կենաց ճաշակոյն .
զի ընդ խնդրեան ՚ի մահ և ՚ի կորուստ յաւի-
տենական ածիցէ և զայն ողորմելին ։ Վասն
որոյ ոչ է պարտ ումեք ինքն ինքեամբ անձին
խորհուրդ ընկնել ընդէմ , այլ՝ զայլ ոք կացուցա-
նել անձին խորհուրդ և զործոյն զատաւոր և
քննիչ ։

Եւ այս թէ որպէս լինի՝ ասս է ։ Զամենայն
զգործս իւր և զբանս և զխորհուրդս՝ զմեծս
և զփոքունս , զկամայն և զակամայն , զգիտութեն
և զանգիտութեն , և առ հաւատարիմ զամենեսեա-
նըն՝ անամօթացեալ պատմեսցէ խոստովանու-
թեամբ առաջի խոստովանահօրն ։ Եւ եթէ զոր
ինչ խոստովանահայրն հրամայեսցէ՝ զնոյնն ոչ
առնիցէ , անձնահաւան է և կամապաշտ . և

ոչ թէ զբան մարդոյ, այլ զնոյն ինքն զաստուած արհամարհէ. ապա թէ ո՛չ տայ հրաման հաղորդելոյ, և նա յանդգնեսցի՝ զնոյն 'ի վերոյ ասացեալ պատուհասն կրեսցէ։ Յորմէ զերծուսցէ զմեզ Քրիստոս որդին աստուծոյ խորով խաչիւն և չարչարանօքն, և խոր մարմնոյ և արեան կատարմամբն։ Որում փառք՝ պատիւ և գոհութիւն յամենայն արարածոց և գոյից. այժմ և"։ Բայց տեսանեմ և զայս յոյժ անկարգութիւն յեկեղեցիս մեր. զի ոմանք ոչ միայն յաշխարհականաց, այլ և քաղուածք 'ի կուսակրօն քահանայից՝ որք մինչև ցօր վախճանին կան անհաղորդացեալ. և ոչ ինչ փոյթ առնեն վասն հաղորդութեան խորհրդոյն։ Նաև երբ հիւանդանան մերձ 'ի մահ, ապա 'ի հարկէ և ո՛չ վասն յուսոյ՝ այլ վասն մարդկան խօսից. զի մի՛ մարդիկ պախարակեսցեն թէ՝ անհաղորդ մեռաւ։ Ինքրեն հաղորդիլ և քաղուածք՝ ոչ ինքեանք, այլ այլք առնլեն զնոսա 'ի նոյն. և յոլովից մինչև շնչքն քաղէին՝ ապա ժամանէ քահանայն և տայ 'ի բերանս նոցա զսուրբ խորհուրդն, որ չար և մեծ է քան զամենայն հերձուածս. զի զաստուածային խորհուրդն դնէ յանզգայի բերանս, յորմէ ո՛չ լուաւ խոստովանութիւն և զղջումն մեղաց կամ զաւանութիւն հաւատոյ։ Որդ՝ թէպէտ յաշխարհականաց ոք եթէ մերձ 'ի վախճանն զղջացեալ 'ի մեղայն՝ խոստովանեսցի և հաւա-

տուր խնդրեսցէ զսուրբ խորհուրդն, համարձա-
կիլ արժան է յողորմութիւնն Քրիստոսի. և
տալ նմա զշնորհն Քրիստոսի։ Բայց վասն քա-
հանայից լոյծ դժուարին. և անգէտ եմ թէ
զի՞նչ տացից։

# ՎԵՐՋ.

...ձա՝
. և
...բա՝
...թէ